

Երբեմն անհատների կողմից ստեղծված
որոշ բացահայտումներ
անհարիր է ներկա
հասարակության ըմբռնումներին
– կարող է ճակատագրական լինել
հենց նրա համար՝
սխալ հասկացվելու դեպքում,
– ճիշտ ու ճշմարիտ է,
թե ամեն ժամանակ իր պահանջն ունի,
– ժամանակից առաջ ընկնող
հանճարն անգամ չի ներվում:

ՆԱՐԵԿ

Այս է վարքս – վկայողը դու
ես, մա՛րդ, պատս ամուր է –
հաստատուն, ինչպես վարքս
– կյանքիս այն մասը, որ
տրվել է ինձ ի վերուստ, –
կյանքս լույս է, ինչպես
շաղախը, որ ոգեղեն է, ու
շնորհը գրքերի մեջ է, որ
թողնում եմ քեզ:

ՆԱՐԵԿ

ՆԱՐԵԿ ՀՈԿՍԵՓՅԱՆ



**ԵՐԿՆԱՅԻՆ
ՃԱՄՓՈՐԴ**

ԺԱՄԱՆԱԿԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՌԱՔՎԱԾԸ

ՆԱԽԱԽՈՍԸ

Ծնունդը- Հիմա բոլոր ականատեսներն են հիշում: Երբ ծնվեց, տան գլխավեր-ում հայտնվեց (9 հունիսի, 1986թ. Երկնային լուսատու մի գունդ, լուսավորելով տունը, բակը, թաղամասը:

Ս-քար) Հրե գունդն անսպասելի կիսվեց ու հեռացավ...

Մանկությունը - Երեք «խաղալիք» էր սիրում՝ ժամացույց, խաչքար, գիրք:

Պատանեկությունը- 8-րդ դասարանում մաթեմատիկայի փայլուն իմացությունը «լավ» գնահատեցին

- սկսեց մտածել կյանքի ստվերների մասին, անարդարության մասին...

Համալսարանում մաթեմատիկայի փայլուն իմացությունն արժանվույն

գնահատեցին, մտածեց կյանքի լույսի մասին, արարելու մասին:

Թողեց- Նշանների նոր համակարգ, որով էլ գրել է իր գիտական աշխատությունը

մետաղների կարծրությունը մեծացնելու մասին:

2. Ուսումնասիրություններին այրման շարժիչների ՕԳԳ բարձրացնելու

ուղղությամբ:

3. Առաջին մեքենայից մինչ- մեր օրերի ամենավերջին նմուշի ավտոմեքենաների

ուսումնասիրություն-հավաքածու:

4. Նկարներ, բանաստեղծություններ, դիտարկումներ, իմաստասիրություններ:

5. Ուշագրավ վիպակ «Նոյյան աղավաղված վերադարձը»:

6. «Երկնային ճամփորդ». մաքսիմներ, իմաստուն մտքեր:

7. «Առաքելություն իմաստության տաճար». մաքսիմներ:

8. «Գրական Տավուշ» ավանսիում՝ արձակ բանաստեղծություններ:

Հեռանալը- Երկնակամարում այլ-ս լուսատու չեր-աց, բայց երիտասարդ մի լուսատու գնաց

(7.04,2004) նրա հտ-ից...

Հավերժի- 1. «Խոսք հիշատակի» /ԵՊՀ Իջ-անի մասնաճյուղի - ՈՒԳԸ բնագիտական

խորհուրդը ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների վերհուշը/.

որպես «Իջ-անի ուսանող» թերթ՝ 04.2004թ.

շարունակվող 2. Սաշա Հովսեփյան «Ձեռքերի կիրակին» /«Հայաստան» հրատարակչություն,

գրույց 2004թ./.


3. Սիլվա Կապուտիկյան «Աստվածընտիր պատանին», հոդված/ «Հայաստան»

օրաթերթ, 2006թ./.

4. Հրաչյա Մաթ-ոսյան «Հանճարի հանճարելը», «Երկնային ճամփորդ» գրքի առաջաբան.

- 5.Ներես Աթաբեկյան «Հեռավոր աստղի լույսը», «Առաքելություն
իմաստնության
տաճար» գրքի/2006թ/ առաջաբան.
- 6.Վահագն Սարգսյան «Երազանքը թողնելով երկրայիններին», հոդված.
- 7.Ռաֆիկ Ղազարյան «Առաքվածի խորհուրդը», հոդված /«Հոգ-որ
հայրենիք»,
2006թ./.
8. Ռոմանոս Սահակյան «Հանճարը տարիք չունի», հոդված /2006թ./.
9. «Իջ-ան» ստուդիա, «Անվերջ վերադարձ», հեռուստաֆիլմ, հեղինակ՝
Նաիրա
Խաչիկյան.
10. «Գրական Տավուշ» գրքից բանաստեղծությունների շարք՝ նվիրված
Նարեկ
Հովսեփյանին.
11. Նորայր Արզումանյանի «Մայրական սիրտ» ժողովածուից
«Իմաստնախոս
բարեկամիս....» բանաստեղծությունը/2006թ./ նվիրված Նարեկ
Հովսեփյանին.
- 12.«Ղողանջ հավերժության» /հեռուստատեսային ֆիլմ, հեղինակ՝ Հովիկ
Պետրոսյան/.

- 13.Դ. Շվարցման «Մարդ եմ, ես մարդ» /«Հայաստան»
հրատարակչություն,
2005թ./ գրքի «Ամենապայծառ աստղին» բանաստեղծությունը՝ նվիրված
Նարեկ Հովսեփյանին:
- 14.Տավուշի մարզային գրադարանին կից ստեղծվել է «Նարեկ»
ուսանողական
թատրոն-ստուդիան:
- 15.«Տավուշյան եսքիզներ» ժողովածու, 2006թ. Եր-ան «Նշանակ»
հրատարակչություն, էջ 25-31, Նարեկ Հովսեփյան մաքսիմներ
- 16.«Զօրաւոր անհատականութիւն»,նամակ,պրոֆ. Հարութիւն Դաւթեան,
Պէյրուք



ԵՐԿՆԱՅԻՆ ՃԱՄՓՈՐԴ



Ճշմարիտ,
ճշմարիտ եմ
ասում ձեզ

ՄԱՔՍԻՄՆԵՐ

•

ԻՄԱՍՏՈՒՆ
ՄՏՔԵՐ

Նարեկ Զովսեփյան-----



Բնությունը մարդուն զգուշորեն տվել է բանականություն այնքան, որքան որ անհրաժեշտաբար սահմանել է: Քանզի Բարու – Չարի սահմանագծում դեգերող մարդը իր երկվությամբ միշտ էլ անկանխատեսելի է թե այսօր, թե վաղը – թե ընդմիշտ:



Նրանք, ովքեր կարծում են, թե աշխարհը տրվել է մարդուն մեկ անգամ – ընդմիշտ, ելնում են այն պարզ իրողությունից, երբ իրենց ծննդյան օրվանից մինչ– վախճանը աշխարհում կատարվող փոփոխությունները աննշան են, մինչդեռ Ստեղծողը երկրին տվել է մոռացման կարողություն, որի չափերը տիեզերական են – անհագուրդ ախորժակ, որի ապացույցը անհետացած քաղաքակրթությունների քարեղեն վկայություններն են:



Որս գեղեցկության հետ–ից–այսպես կարելի է բնութագրել կանանց մարմնի – հոգու միացյալ տենչը իրենց երկրային գոյության ընթացքում:

Սակայն ո՞ր իրավունքը նրանց թույլ կտա մոռանալ գեղեցկությունը գնահատողին՝ տղամարդուն, որն ի հավելումն այս ամենի կարիք ունի նա– մայրական սիրո, կնոջ հավատարմության – քրոջ քնքշանքի:



Պահի կորուստը կորուստ է այնքանով, որ մեր կյանքի մի ակնթարթը –ս դառնում է ոչինչ:



Մի՞թե մարդկային կյանքի իմաստը որոշակի տարիք ապրելն է – ոչ թե որոշակի տարիք իմաստավոր ապրելը:



Ամուսնությունների արդարացումը ոչ թե փախուստ է միայնությունից – վախ է ծերությունից, այլ երեխաների առկայությունն է որպես իմաստ – արդարացում այդ միության:



Կարճ տարածք վազողի երազանքը մշտապես մնում է մարաթոնյան դափնեպսակով գլուխը զարդարելը՝ թեկուզ մտապատկերում:



Համոզվածությունը ոչ թե փորձի արդյունք է, այլ ինքնավստահություն:



Կույր աչքերի առաջ սուր ճոճելը նույնքան անիմաստ գործ է, որքան կույր հոգու համար իմաստասիրաց դասերը:



Քամին կարող է փչել տարբեր ուղղություններով՝ կախված հանգամանքներից, սակայն ինչ անուն տալ այն մարդուն, որի աշխատանքը քամուն կրկնելն է:

Երկնային ճամփորդ-----



Նրանք, ովքեր կարող են հեքիաթ պատմել արդարության մասին՝ առանց նրա հաստատման համար ազնվորեն պայքարելու, պարզապես զբաղված են խաբեությամբ:



Մարմինների պատերազմի կրքոտ երկրպագուն մահն է, իսկ մարմինների գգվանքը կյանքի տարածքն է:



Մեր ժամանակի հերոսը մի՞թե նա է, ով մարտնչում է եր-ակայական հրեշների դեմ, այլ ոչ թե նա, ով իր վերջին պատառ հացը՝ առանց ափսոսանքի կիսում է աղքատի հետ:



Յուրաքանչյուր փակուղի ստեղծվում է ճշմարտությունը եսի տեսակետից մենաբանելու հետ-անքով:



Դյուրամարս այն մտքերը, որոնք մեզ ներկայացվում են պարզունակ կաղապարների մեջ ամփոփված, անկասկած հավակնություն ունեն հանդես գալու որպես անհերքելի ճշմարտություններ՝ նույնիսկ առանց ապացույցների առկայության:



Մկնանմանների կար-որ հատկանիշը կրծելն է: Չարմանալի է, որ նրանց բնորոշ առանձնահատկության անսխալ կրկնությունը որոշ homo sapiens-ների մենաշնորհն է:



Ապրելու իմաստը փնտրենք բնության հետ ներդաշնակվելու մեջ:
Անմահությունը վերծանենք որպես բարի անուն՝ իմաստ թողնելով ժամանակի - տարածության մեջ՝ հիշողության տեսքով:



Ո՞վ է ժամանակի հեղինակը.
Չա՞րը, թե՞ Բարին:
Եթե Բարին, ապա մի՞թե ճիշտ չեն այն արդարացումները, թե աներկբա է հնի փոխարինումը նորով, խավարը՝ լույսով, մահը՝ կյանքով:
Իսկ եթե Չարն է հեղինակը, ուրեմն հաշտվենք, որ պիտի նորը կործանվի, կյանքն ավարտվի մահով, լույսը՝ խավարով, հույսը՝ անհուսությամբ:
Ահա ձեզ աշխարհ գործուղված անբաժան համահեղինակներ, որոնց գործունեությունը բնության կողմից մեկընդմիջտ սահմանված օրենք է:



Բարեկամի անվան տակ թաքնված թշնամին ավելի վտանգավոր է, քան նա, ով մեզ թշնամի է բացահայտ:



Արմատի – սաղարթի փոխհարաբերությունը բնության կողմից նախաստեղծ է – ներդաշնակ:

Նարեկ Յովսեփյան-----



Չուր ջանք է հայրենասիրությունը բնորոշող չափանիշներ փնտրելը՝ հետախուզելով անցյալ – ներկա իմաստասերների մտքերը անվերջ քրքրելով, պարզապես այն հոգու կանչ է՝ հեռու նյութապաշտությունից, – մաքրամաքուր է, ինչպես նորածին մանուկ:



Հավատացեք մարդկային ջանքերի գնով ստեղծված բարիքների անհատույց ու անվճար նվիրատվությունը հասարակությանը, կասկած է հարուցում նույն հանրության անդամներից յուրաքանչյուրին այն մակարդակային տարածքում, որը անհերքելիորեն որակվում է որպես գողացված – կամ էլ, համենայն դեպս, անորակ տքնանք դուրս թափելու աստիճանի:



Պատրանքների աշխարհի ընձեռած միակ հնարավորությունը փորձ է հայտնագործելու հավերժության ուղին հայտնապես, սակայն բազմաթիվ անհայտներով:



Ցանկացած եր-ույթի երկու կեսերի մեխանիկական միավորումը բերում է ամբողջական տեսքի, բայց դա դեռ չի նշանակում, թե այդ ամենը հաճելի է նա-գեղագիտական տեսակետից:



Հուսախաբված երազանքները իրենցից հետո մատնացույց են անում հիասթափության – հուսալքության ուղին, սակայն մի՞թե աշխարհը մեզնով է սկսել – մեզնով էլ ավարտվելու է, մարդի՛կ:



Կարող եք դատապարտել այն մարդուն, որի ազնվության հետ-անքը սեփական երեխաների սովամահությունն է:



Եթե խոսք ես տվել, կատարիր այն մի ժամանակատարածքում, որ քո ուժերի իրական սահմանն է: Հակառակ դեպքում՝ նույնիսկ պատկառանք ներշնչող քո բարեկեցիկ արտաքինը ընդամենը կհիշեցնի Տորիչելլան դատարկություն – ոչ ավելի:



Արարի՛ր, եթե կարող ես, իսկ եթե չես կարող, մի՛ խանգարիր արարողներին – դու բարի գործ կատարած կլինես անգամ այս դեպքում:



Եթե թշնամուն ուղարկված պատգամաբեր խաղաղության աղավաղման դառնում է նրա արյունառնուցող ծնոտների ոչ ախորժեղի ուտեստը, ապա չերկնչելով ու քաղաքակրթության դեմ չմեղանչելով՝ ինչու՞ նրանց հետ չխոսենք մեր լեռների երկնահաս արծիվների լեզվով:



Յուրաքանչյուր երկնային ճամփորդ ամեն օր ավելի է հեռանում մեզնից՝ մշտապես մնալով որպես բարի խորհուրդ – հիշողություն. ուրեմն մտապահենք, որ լուցկու հատիկների պես մենք էլ, մի ակնթարթ բոցավառվելով, անցնելու ենք հավերժական տիեզերքի հիշողության ծալքերով՝ որպես երկնային ճամփորդներ՝ դառնալով նրա անբաժանելի մասնիկը:

Երկնային ճամփորդ-----



Անհարկի շտապողականությունը կարող է պատճառ դառնալ նույն գործը երկու անգամ կատարելու, սակայն երկու անգամ կատարված նույն գործը որքանով է համապատասխանում այն ամենին, ինչ ծրագրել էինք մինչ այդ մեզ հատկացված ժամանակահատվածում:



Լույսի արագությունը գերազանցող հանճարեղ միտքը կարող է ընդհատվել իր հաճույքի համար պատահական գնդակ արձակած տգետի կողմից:



Հոգ–որ կյանքն ավարտվում է այն պահից, երբ սկսվում է մարդու կլոնավորումը:



Փակ դռներ բացելու երկու միջոց կա՝ փող – բանալի:



Երկրային գաղտնիքների բացահայտման բանալին երկրամերձ լեռների անհաս գագաթներից էլ վեր է:

Մի խաբվեք ու մի տրվեք անդունդների քմայքոտ ու հավերժական կանչին, ուր խավարը ծնում է խավար:

Բարձրացեք լեռները, ինչպես ուխտագնացը երկյուղած դեպի ակունքը լույսի, – նրա հրաշագործ ավազանում թաթախեք ձեր հոգին՝ մաքրագործելով:

Ու թող լույսը լույս ծնի – ցնծա հավիտենս հավիտենից:



Անսահմանությունը տիեզերքի անցաքս դաշտն է, ուր աստղերը նրա հուր ծաղիկներն են:

Երազանքի դաշտը երկնքի սահմանն է, ուր թռչունները նրա թ– ծաղիկներն են:

Ծովերի դաշտը ջրերի խաղն է, ուր ձկները նրա լուռ ծաղիկներն են:

Երկիրը դրախտ կորուսյալ պատրանքների դաշտն է, ու մարդիկ նրա զույգ ծաղիկներն են:

Մոռացությունը մահվան լռության դաշտն է, ուր հիշողությունը նրա սուրբ ծաղիկներն են:



Հրամայողի – կատարողի մեջ թշնամանքը դադարեցնելու միակ միջոցը օրենքի կիրառումն է:

Կանոնակարգված տիեզերքը կյանքի սկզբնաղբյուրն է – նրա գոյատևման հավերժական երաշխիքը:

Սրճային գուշակությունը մրուրում անցյալ, ներկա – ապագա աննպատակ ճամփորդություն է ոչ մի տեղ:

Քաղաքակիրթ լինելը ավելի դժվար է, քան քաղաքակիրթ եր-ալը:

Նարեկ Յովսեփյան-----

Օրենքներ ստեղծելով՝ մարդը գիտակցաբար փորձում է սանձահարել իր բնագդային աշխարհի առավել վտանգավոր դրս-որումները:

Իմաստունների մտքերի շարահոս ընթացքը բացահայտում է այն ճանապարհի իմաստը, որը աներկբա տանում է իմաստնության աշխարհ:

Կյանք կոչված խաղի կանոնները բնության պարտադրված նվերն են:
Սնապարծությանը դիմադարձ չկանգնեք, այլ խելոք ու խելացի լինելով՝ ընդունե՛ք այն, ինչպես կա, որպեսզի ժամանակից շուտ չվտարվե՛նք խաղադաշտից, այլ մշտապես վայելե՛նք բնության բարե-հաճ վերաբերմունքը:

Մարդու երջանկությունը մերձավորների երջանկության շարունակությունն է:

Հզորների ներկայությամբ թույլերի գոյատևելը հերոսություն է:
Մինչդեռ հզորները չունեն այդ հերոսության կարիքը:
Պարզապես նրանք ապրում են թույլերի հաշվին, բայց նրանց գոյությանն անտեղյակ:

Միտք սանձահարող մեխանիկան անհայտ է մարդկությանը:

Մեծամիտը իր տգիտության գոհն է:



Անհայտի հետ երկխոսության հրավերի առկայության դեպքում նույնիսկ ժամանակ գտեք ծանր ու թեթեւ- անելու ձեր երկխոսության նյութը:



Նիցշեն համոզված մեզ ուզում է պարտադրել, թե արվեստը ծնունդ է մարմնատենչության, սակայն մոռանալով մոռանում է, որ արմատն առանց էության չի կարող լինել, խավարն՝ առանց լույսի, մարմինն՝ առանց հոգու – մարմնատենչությունը՝ առանց սրտի թրթիռի...



Եթե համոզված ես, թե ստի ուղքերը կարճ են, օժտիր նրան իշխանությամբ:

Երկնային ճամփորդ-----



Մեր զգացական աշխարհից դուրս կյանքը առանց մեզ էլ ինքնին գոյություն ունի, իսկ հակառակ տրամաբանելը պարզապես մեր մտածողությանը կդրդի ապավինել ունայնությանը:



Վարկածը ճշմարտության բացհայտման հնարավոր տարբերակներից մեկն է:



Ոչինչը ոչնչության ծնունդն է, իսկ ոչնչությունը՝ ոչնչի:



Յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է գեղեցկության ընկալման իր չափանիշները, սակայն, ավա՛ղ, նրանցից ոչ մեկը դուրս-ինչ ջանք չի արել փրկել աշխարհը, այլ կամա թե ակամա ասպարեզը թողել է հրեշավորին ու այլանդակին:



Հոգու գոյությանը չհավատացողը հաճույքով հավատում է մի գիտության, որի կոչումը հոգու դարպասներ բանալն է, սակայն այն շառավիղը, որտեղ վերջանում է մարդու զգացական տեսադաշտը, ընդամենը սահմանափակությունն է, հավելած՝ անիմաստ նյութապաշտությունը:



Երկխոսությունը սկիզբն է խաղաղության:



Ափսոսանքով հրաժեշտ տանք մանկության – պատանեկության միամիտ – անհոգ օրերին, զի ով չգիտի, որ հասունության շրջանում կյանքի առաջադրած խնդիրները

քանակապես – որակապես էլ ավելի են դառնում անլուծելի – միշտ չէ, որ գորոյան հանգույցը կարող է լուծվել սրի մեկ հարվածով:



Մի՞թե ուսուցիչ կարող է համարվել նա, ով ազնվորեն կատարում է իր վրա դրված պարտականությունները – ոչ թե նա, ով սրբորեն կատարում է իր պարտքը աշակերտի հանդեպ:



Կյանքը երկրի վրա սկզբնավորվել – շարժման մեջ է դրվել Բարձրագույն բանականության կողմից, սակայն այն տրամաբանական վախճանին կհասնի փողի գերիշխանության հանդեպ մեր հիվանդագին պաշտամունքի հետ-անքով:



Ուզում եմք, թե չենք ուզում, Բարին ու Չարը մեր մշտական ուղեկիցներն են, թե՛ այս երկրի վրա – թե՛ նրանից դուրս:

Նարեկ Զովսեփյան-----



Հասուն մարդու կողմից մանկություն վերադառնալու փորձը դատապարտված է ձախողման: Որովհետ– ծերացող մարմնի – երիտասարդ մնացած հոգու –՝ ձգտումներն են տարբեր, –՝ հնարավորությունները:



Բարի ախորժակ ցանկացիր նրան, ով դեռ կարող է ոչ միայն ուտելու բան ճարել ըստ իր պատկերացումների, հանուն որկրամոլության, այլ նա– նրան, որի հույսը բնության կողմից պատրաստի բաժին պարգ–ն է՝ առանց ճակատագրին անհանգստացնելու:



Եթե կրկնությունը գիտության մայրն է, ուրեմն եկեք ջանադիր լինենք՝ բացահայտվածը բացահայտենք երիցս – քայլ առ քայլ՝ նահանջելով՝ աղաղակենք ոչ մի տեղ չտանող ու չնվաճված մեր առաջընթացի մասին:



Մի՞թե գիրքը նման է գորակայանում պատասպարված գեներալի, այլ ոչ թե հասարակ գինվորի, որը պատրաստ է դիմակայել ու ճակատել թշնամուն՝ ցանկացած պայմաններում:



Ո՞վ կհամարձակվի վճռապես հերքել կամ հաստատել, թե մենք բարձրագույն բանականության ձեռքի – մտքի ստեղծագործ կերտվածքը չենք:

Եվ մի՞թե մեր մարդ տեսակին հատուկ կասկածն ու տարակույսը չեն մղի մեզ անառակ որդու պես »այո« կամ »ոչ« ասել, երբ ոչ թե պատճառը, այլ ընդամենը արդյունքն ենք այդ ամենի:



Հգորների դեմ պայքարը սահմանափակվում է հնարավոր այն շրջանակներում, որը ուղիղ համեմատական է մեր կարողություններին:



Մեր գոյության միակ իրական երաշխիքը աշխարհում ժամանակն է:



Ասում են, թե՝

-Բոլոր ճանապարհները մեզ կարող են տանել Զոմ:

Ասում եմ՝

-Իսկ սրանցից քանի՞սը ի վիճակի կլինեն մեզ դուրս հանել Զոմից:



Ցվայգի »Մարդկության աստեղային ժամերի« հերոսները հաջողության ջենտլմեններ են, որոնց ճակատագիրը շփացրել է՝ հևարավորինս թույլ տալով ժամանակի՝ իրենց ապրած հատվածը տնօրինել ըստ հայեցողության՝ առանց հաշվի առնելու Նույն մարդկության ոչ միայն կամքը, այլ նաև՝ շահերը:



Անմեղսունակն էլ կարող է խստագույնս պատժվել ոչ թե մեր սխալական լինելու պատճառով, այլ մեր գերազանցությունը – իշխանությունը ցուցադրելու հետ-անքով՝ ի տես – խրատ մնացյալ չպատժաճների:

Երկնային ճամփորդ-----



Կոմիտաս վարդապետը անհարիր է համարել զուռնայի ձայնի միահյուսումը մեր հոգեցունց ու հոգ-որ երաժշտության գանձերին:

Կոմիտաս երգահանը բացեիքաց մերժել է զուռնան՝ որպես ար-ելքից եկած արյունառուշտ նվաճողների խառնիճաղանջում սպանվողների – մորթվողների աղերսանքը խեղդամահ անող խենեշ ճղճղոց:



Նա ար-մուտքը նվաճեց՝ սրանց վերադարձնելով մեր ժողովրդից փոխ առած իր երաժշտությունը՝ ապացուցելով, թե ար-ելքի Եվրոպա կոչվող Զայաստան երկիրը հնդեվրոպացիների հոգ-որ – մարմնական նախաստեղծ հայրենիքն է:



Ժամանակի մոռացության փոշին, առանց իսկ մեր կարծիքը հարցնելու, աննկատ ծածկում է հիշողության ծալքերը՝ կորստյան մատնելով հևարավոր այն ամենը, ինչը այդքան ջանադրորեն նախապատրաստել ենք մեր չլինելուց հետո իմաստության տաճար մուտք ունենալու համար:



Այնտեղ, որտեղ հրամայված է լռել՝ չխոսելով ճշմարտության կայացման հևարավոր եղանակների մասին, նշանակում է բռնի – մտածված տարածք ստեղծել կեղծիքի – ստի ապագա թագավորության կայացման համար:



Երկու դեպքում կինը կարող է հայելու դիմաց կանգնել ավելի երկար, քան անհրաժեշտ է:

Առաջին դեպքում՝ հաճույքից, երբ իր հրապույրները գնահատում է ցանկասիրության տեսադաշտում՝ արժանանալու տղամարդու բարեհաճ արժեքավորմանը:

Երկրորդ դեպքում՝ վախից, երբ նա զգուշորեն փորձում է սքողել ժամանակի համառ ձեռքի կատարած ավերածությունները, անցած գնացած երանելի օրերի երբեմնի իր մարմնական հրապուրանքը վերադարձնելու անիմաստ փորձ կատարելու համար:



Աշխարհի անտեսանելի մասը, որը մշտապես մեր անբաժան ուղեկիցն է, անտեսում ենք՝ երբեք իրավասու չլինելով: Սակայն հենց այդ չընկալված մասն է, որ կարող է մեզ անսպասելիորեն մատնել կործանման կամ դարերի միջով հասցնել բանականության կողմից նշված տիրույթ:



Արվեստ կոչվող նավը աշխարհի ստեղծման օրից ակոսում է Մշակույթ անունը կրող օվկիանոսի ջրերը:

Ես նրա առագաստի ճերմակ ուռուցիկը տեսնում եմ տիեզերական կանգառների հավերժական ճանապարհներին:



Կյանքի ծանր պայմանները կարող են ստիպել – պարտադրել մարդուն հարկադիր մուրացկանության, սակայն ի՞նչը կարող է նրան դրդել՝ մղելով աններելի ու ամոթալի մուրացկանության՝ սիրո հարցում:

Նարեկ Զովսեփյան-----



Ճանապարհը սրընթաց ինձ տանում է լույսի արագությունը բազմիցս գերազանցող մի մղումով, բայց – այնպես, մարդու տեսակի ներկայացուցիչ դեսպանը լինելով՝ ես հազիվ հասցնում եմ հավատո պայմանանշաններ թողնել հավերժ ինձ կանչող աննյութ ճանապարհի աջ ու ձախ կողմերին, ոչ թե այն բանի համար, որ չկորցնեմ հետընթաց ճանապարհս վերից վար, որը անհնարին է այլ–ս, այլ այն բանի համար, որ համարձակորեն ինձ հետ–ողները, առանց երկմտանքների ու տառապանքների ճեղքելով Մեծ ձանձրույթի անիմաստ դատարկությունը, գտնեն Զույսը, որը բոլոր ցանկացողների համար սիրով բացելու է միակ ճշմարիտ լույսի ճանապարհը:



Չարի ու Բարու անգիշում պայքարը երկրի վրա միասնական է ու անվախճան: Սակայն ինչու՞ նեղանալ բանականության թողտվությամբ իր կամքին ազատ թողնված մարդուց, որը անվերջ ընդօրինակում ու կրկնում է նրանց – անկանխատեսելի է, ինչպես սանձազերծ վարգող ձին՝ անդունդի եզրին:



Արվեստը քաղաքակրթության հնագույն լեզուներից մեկն է, որով հաղորդակցվել են հնադարից մինչ– մեր օրերի արվեստագետները:

Բոլոր ժողովուրդներին այն հասկանալի դարձնելու համար սովորեցնենք նրանց այդ այբուբենը՝ շաղախելով համամարդկային արժեքներին:



Կարեկից լինենք բոլոր նրանց, ովքեր դրա կարիքը ճշմարտապես ունեն:

Կարեկից լինենք՝ գերծ մնալով թատերայնությունից, ուր միակ հանդիսատեսը թող մեր խիղճը լինի:

Կարեկից լինենք – թող իսկապես մեր բանականությունը ի հայտ բերի մարդ կոչմանը արժանի լինելու հավաստին:

Կարեկից լինենք...



Ժամանակի թելադրությունը ամեն մեկս գրում ենք մեր կարողությունների սահմաններում – ըստ այդմ էլ գնահատվում ենք մեր կարողությունների չափանիշներով, չհաշված բացառությունները:



Յուրաքանչյուր մարդու աստվածաշնորհյալ լինելու առասպելը ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է նրա կատարած գործերի իրական ուսումնասիրությունը:



Բնությունը մեզ կրավորական դեր չհատկացնելով հանդերձ՝ վստահորեն հենց միայն ինքը ստեղծել է այն սերմնահատիկը, որի մեջ իմաստնորեն ամփոփել է մեր բանական շարունակությունը, որը կոչվում է հարատև– կյանք:



Չորավիգ չլինելով խաղաղության հաստատմանը, որպես մարդկության գոյատևման միակ երաշխավոր, հնարավորինս արագացնելով ընթացքը՝ ինքներս մեզ դուրս ենք գրում բնության – բանականության հաշվառման մատյանից:

Երկնային ճամփորդ-----



Ցանկացած ժողովրդի իմաստնության չափանիշը օրհասական պահերին նրա համախմբվածության – գոյատևման պայքարի կամքի դուրս–որումն է հանուն հաղթանակի:



Դատարկ թվացող անապատը նման է քնած մարդու, որին անպատեհ արթնացնելու հետ–անքը անկանխատեսելի է:



Իր ծննդյան օրից մարդկությունը համառորեն բախում է տիեզերքի փակ դռները... Սակայն նա՝ Անսահմանի ու Ժամանակի տերը, գուցե թե մեր արատավոր արմատի – Էության պատճառով անտարբեր է մեր կանչերին:



Ճակատագրի շփացած գավակները –ս ունեն իրենց պրոբլեմները:



Մի՛ դատապարտեք բոլոր նրանց, ում իմացական աշխարհն ավարտվում է սեփական տեսողության սահմաններում:

Երբեմն անիմաստ հպարտության փեշից ամուր կառչածները հայտնվում են
Եսասիրության թակարդում:

Բոլոր ճանապարհները չէ, որ ավարտվում են այնտեղ, որտեղ գտնվում է մեր
Երազանքների ու տվայտանքների հանգրվանը:

Մերկ մարմնի կենսափոխոփայությունը անխտիր – համարձակորեն փնտրեք
վերածննդի դարաշրջանի մեծ արվեստագետների գործերում:

Իրականությանը չհավատացողը դաշնակցում է տեսիլքներին:

Մարդկային մտքի սանձահարման միայն մի եղանակ է մեզ հայտնի՝ սպանություն:

Երազանքը մեր մտքի ստեղծագործությունն է, երազը՝ բնության:

Մենք Ձեզ ոչ թե խնդրում ենք, այլ հրամայում, որովհետ– Դուք ընտրված եք – ոչ թե՝
նշանակված:

Նարեկ Յովսեփյան-----

Երկնքի ու երկրի միջ– տարածք կրճատելը աներեր հավատի – ճշգրիտ գիտության
խնդիրն է:

Ամենասարսափելին եսին ստրկանալն է:

Ժամանակը մոռացությունից փրկում է միայն նրանց անունները, ովքեր մարդկային
պատմությունը իմաստավորում են հենց այդ նույն ժամանակահատվածում:

Մեծագործությունն ու դավաճանությունը պատմությունը հիշատակում է
անկողմնակալ. առաջին դեպքում՝ օրհնելով, երկրորդ դեպքում՝ անիծելով:

Երբեմն անհատների կողմից ստեղծված որոշ բացահայտումներ անհարիր է ներկա
հասարակության ըմբռնումներին – կարող է ճակատագրական լինել հենց նրա համար՝ սխալ
հասկացվելու դեպքում, – ճիշտ ու ճշմարիտ է, թե ամեն ժամանակ իր պահանջն ունի, –
ժամանակից առաջ ընկնող հանճարն անգամ չի ներվում:

Մի՛ ծաղրեք այն ճշմարտությունը, ինչը պարզության մեջ ձգտում է կատարյալի, մերժեք պարզամտության գերիշխանությունը, եթե միտումը աղավաղող նպատակն է:



Ոչ ոք իրավունք չունի ծաղրել անձը, ուր տեսակը տարածքի թելադրանքին ներդաշնակ է ու ամբողջական:



Ի վերուստ խաղը տրված է ցրելու մտքի մշուշը, որպեսզի բանականության հորիզոնը ժամանակ ունենա ի մի բերելու արդար դատելու իր կարողությունը:



Նկարչության հիմքը դեֆորմացիաներով երկրաչափական պատկերների համադրումն է տարածության մեջ՝ հեռապատկերի – սահուն գծերի ներդաշնակությամբ, իսկ ինչ մնում է գույների – երանգների միաժամանակյա զուգահեռ առկայությանը, չգարմանաք, դա բնության գյուտն է՝ ծիածանի տեսքով, մնում է միայն բանական լինել, վերցնել վրձնով ու տեղափոխել նկարվող մակերեսին:

Երկնային ճամփորդ-----

ԻՄԱՏՈՒՆ ՄՏՔԵՐ՝ ՔԱՂՎԱԾ «ՆՈՅՅԱՆ ԱՂԱՎՆՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ» ՎԻՊԱԿԻՑ

Հայրենի հողի շունչը զգացողը քայլը հաստատ է դնում:



Ամուր կամք ունեցողի ձեռքերը բռնկեցված են:



Լուսեղեն հայացք ունեցողը պահապան է լույսի – գիտության:



Քաղաքակիրթ կոչվող վայրենուն ոչ թե խոսքով, այլ սրով պետք է քաղաքակրթել:



Ժողովրդի հավաքական ոգին իմաստուն է:



Տարերքը կարող է կործանել այն նավը, որի նավապետը հուսալքված է:



Դավաճանը, սահմանի երկարությունը կրճատելով, լավագույնս կարող է վերահսկել այն:



Քաղաքական լարվածությունը բարեբախտություն է թույլ բռնապետի համար:



Կրկնությունների լաբիրինթոմ խարխափողը իրավունք չունի ճամարտակել առաջընթացի մասին:



Հայ գինվորի ազգային ոգու գոյությունը պետության գոյության երաշխիքն է:



Ոգեղենությունը անբաժան է հայ գինվորից, ինչպես մարմինը՝ ոգուց:

Նարեկ Հովսեփյան-----



Նյութի վրա հենված էությունը ազահ որդի պես կարող է կրծել մարդկային կարողությունների արդյունքը:



Չունենալ պետական մտածողությամբ կառավարություն, նշանակում է՝ գիտակցաբար գնալ կործանմանն ընդառաջ:



Պետությունը մի ամբողջություն է, որը կազմված է բազմաթիվ եսերից – կոչվում է մենք, իսկ եթե մենքը պատկերացնենք բռնկեցի տեսքով, որի յուրաքանչյուր մատ մասնակիցը, ունենալով իր դերն ու նշանակությունը, չի կատարում ճակատագրով իրեն վերապահված առաքելությունը, ապա կիսատ- պռատ ամբողջությունը մի՞թե կարող է լինել լիարժեք:



Մեր ոգին ամփոփված է արժանապատիվ այն հատերի մեջ, որոնք ժամանակի հետ անողորմ ճակատամարտում շահել են հաղթողի դափնին՝ դառնալով ընտրյալ – անհատ՝ բանականության այս – հակադիր կողմերում:



Հայ ժողովուրդն իր կենսունակությունն ու արիությունը, իր սուրբ լեռան զուլալությամբ շաղախած պարզ միամտությունը հավաքել, պատվաստել է իր արմատն ու էությունը ներկայացնող Սասնա ծռերին:



Եթե թույլ Դավիթը մեր արկածախիսնդ ու կենսատու ոգու ապացույցն է, ապա մի՞թե մեր իմաստության ամփոփումը Փոքր Միերը չէ:



Հայրենի՛ք, քո մեջ ամփոփվածներս տեր պիտի լինենք մայր հողին՝ դիմադարձ կանգնելով ժամանակի փորձություններին ու արհավիրքներին:



Ստեղծենք Դավթի երիտասարդության – Փոքր Միերի իմաստության ներդաշնակություն, – ապագան մերը կլինի...



Մեծ ու փոքր ազգերը, ուժեղները – թույլերը, անաղմուկ կամ դղիրդով, ի ցույց – ի խրատ բոլորիս, շարժվում գնում են իրենց իսկ երազած Ավետյաց աշխարհը:

Երկնային ճամփորդ-----



Ցանկացած կառավարության գերագույն նպատակը պետք է լինի իր հպատակներին բաբելոնյան այս խառնիճադանջից անփորձանք ու անվստահ առաջնորդելով տեղ հասցնել՝ ապահովելով նրանց համար արժանապատիվ երկիր:



Անպատիվ ու անարգված երկիրը չի կարող գոյատևել, մարմնապես – նյութապես բարձր չի լինի մուրացիկից:



Երբ ծեծեցին հասարակ մի մարդու աշխարհիս զորավորներն ու տանջեցին ֆիզիկապես, նա լեզուն սեղմեց ատամների տակ ու ձայն չհանեց: Մութ զնդանի մեջ փակեցին նրան – ուտելու ոչինչ չտալով՝ փորձեցին ընկճել ոգին, դիմացավ դրանց, բայց երբ մութ զնդանից դուրս հանելով հայիոյեցին նրա հավատն ու երկիրը, ծեծված ու սովահար մարդը, զորանալով հոգով ու մարմնով, հարձակվեց հայիոյողների վրա՝ ցրվիռ բերանները կոծկելու ու փակելու:



Երկրիս փառքն ու իշխանությունը ժողովրդի արյան մեջ նախնիների պահանջն ու կանչն է:



Իր անցյալը չհիշողը չի կարող կերտել իր ապագան:



Ապագան որդիների ժամանակն է – պատկանում է նրանց:



Ճիշտ խնամված ծառի պտուղներն ախորժեղի են տեսքով – ախորժեղի են քիմքին:



Ճշմարիտ – ճիշտ թող լինեն որդիները: Այդժամ հուսալի կլինի երկրի կառավարումը նրանց օրոք:



Ինչպես բնության, այնպես էլ մարդու շարունակությունն ու անմահությունն էգ – արու տեսակների մեջ է, նրանց արյան ծալքերում՝ ժառանգականության գաղտնիքներով:



Փոխանցենք առողջ գեներ մեր ժառանգներին, ինչպես մեզ ավետում են աստվածաշնչյան հրաշք պատվիրանները:



Տան գործերի կառավարը միշտ եղել է կինը:

Նարեկ Յովսեփյան-----



Մի՛ վախեցեք, երբ ցեղի արուների բացակայության դպքում թագուհի հռչակվի կինը:



Չլինենք անառակ որդի, չլքենք մայր հայրենիքը՝ հանուն սեփական որկրամոլության – ստոր կրքերի:



Հարկ է, որ պատշաճ վարվելակերպն ուղեկից լինի բանական մարդուն:



Երկրի շահը ժողովրդի շահն է – ոչ թե մեծապետական մտածողության արդյունք:



Խաղաղության լեզուն հիմքն է բարեկեցության:



Չգու՛յշ եղեք, ասում եմ ձեզ, ավստսալու համար ժամանակը սպառված է:



Ավելորդ բարեկեցությունը տանում է արկածախնդրության:



Շարժվենք օրերին – ժամանակին ընդառաջ՝ ճանապարհին խորտակելով պատնեշներ – փորձենք իմաստնաբար սանձել եր-ակայության սահմանները:



Հեղիեղուկ օդն անգամ կարող է շիկնել կրքերի բախումից:



Միանձնյա երկիր կառավարողը նման է օվկիանոսում միայնակ նավ վարողին:



Սահմանադրությունը ոչ թե պարզապես մրոտված թղթի կտոր է, այլ երկար սպասված ասի է նավաբեկությունից հետո:



Հայրենիքի շահը մշտապես պահանջում է չհակվել դեպի փակուղի տանող ճանապարհ:



Մեր երկրի ճակատագիրն ինքներս կերտենք ներսում՝ հեռու պատեհապաշտությունից, – նախապատվությունը տանք իրապատում գործերին:

Երկնային ճամփորդ-----



Մեզ առաջարկած հրապուրիչ օտարերկրյա տեսիլքները վերադարձնենք նվիրատուներին՝ առանց տոկոսների – շնորհակալությամբ:



Մեր գործերը թող խոսեն մեր մասին – ոչ թե մեր բերանները՝ մեր գործերի մասին:



Ներումն հայցենք բոլոր սրանցից, ում անձի – անվան հանդեպ մեծամտությունն է ստիպել խոսել – ոչ թե բանականությունը:



Չերժ լինենք զեղծարարությունից, – մաքուր ճշմարտությունը թող ընտրյալների չափանիշներով արդարադատ լինի մեր հանդեպ:



Հայոց անմիաբան ձեռքը կարող է բռնկեցվել. եթե անգամ իմաստաբան չենք, բայց մի ենք հոգով – մարմնով:



Եթե դպրոցները դարձնենք ուղեղների ամայացման ու անապատացման գոտիներ, ապա կտանենք երկիրն ապագայագուրկ տարածքներ, ուր օտարին առանց ջանադրության կհաջողվի հպատակության մտրակը բանեցնել՝ տաղադավոր ու արիական հայ ազգը վերածելով բանող անասունների:



Երկրիս ապագան հայրենիքի գիտական ներուժն ու իմացությունն է:



Դպրոցը մեր ամրոցն է ու սահմանը, փող տնտեսել՝ թույլ ամրոց ունենալու համար – չպաշտպանված գինվոր ու ժողովուրդ, նշանակում է՝ գիտակցաբար ընտրել դավաճանության ուղին:



Դպրոցն ուժի աղբյուր է:



Յուրաքանչյուր ուսումնական տարին սկսվելուց առաջ, քննություն հանձնելուց – կարգ ստանալուց հետո միայն ուսուցչին թույլատրել աշխատել դպրոցում:

Նարեկ Հովսեփյան-----



Որպես աշխատասեր մեղուների պարս, ջանադիր լինենք ուսման ծաղկադաշտերից պետություն- փեթակի համար կենսաբեր նեկտար ամբարելու – մեղրուղեղ դառնալու համար:



Վկա լնել չարի ծննդին – չկանխել այն՝ նշանակում է գիտակցաբար մասնակից լինել հետագա բոլոր չարագործություններին, որի համար հետադարձ զոջումը հավասարազոր է անհեթեթության:



Թույլ չտանք մուտացիայի ենթարկված արմատի հզորացումը մեր իսկ աչքի առաջ, քանզի նրա պտուղները խորշակող մորեխների նման ավերելու են մեր հրաշակերտ աշխարհը:



Պետությունը կարիք ունի պետական մտածողությամբ այրերի:



Հաջողությունը թող ուղեկից լինի ոչ թե անձնամեծարին, այլ պետության նվիրյալին:



Հայոց վերածնունդը չարական հար-անի մահն է:



Ազատության գաղափարը անցնում է ժողովրդի ֆիզիկական գոյության – հոգ-որ
եության շարունակական ճանապարհով, մինչ- վերջնակետ ու հանգրվան:



Արհեստածին ազատությունը չպատվաստենք մեր կենաց ծառին – խուսափենք
այլածին պտուղների վայելքից:



Հրաժարվենք այլոց կողմից մեզ բաժին հանած ազատությունից, որը դառնալու է
սկիզբը մեր անկումների ու ստրկության:



Ազատության գրավականը մեր միասնության – հզորության մեջ է:



Մեր իմաստությունը ապացուցենք գործով – ոչ թե ճառասացությամբ:



Սրբենք սրբացած հայոց դաշտ ու լեռները պղծողներից – հպարտ կանգնենք Աստծուց
մեզ շնորհված քարաշխարհին՝ որպես անպարտելի արծիվներ, – փառքն ինքը կփնտրի մեզ:

Երկնային ճամփորդ-----



Գիշերային ակումբների մեղկ գեղեցկուհիները նվաճվում են ոչ թե սիրով, այլ փողով:



Պճանքից զուրկ դաշտային համազգեստը զարդարում է իսկական զորապետին:



Մեր օրերի քաջնազարականությունը ճոխ առանձնատների փափուկ
բազկաթռներում քնելու համար զինվորական բարձրագույն աստիճանների շնորհումն է:



Գիտությամբ զինված նորագույն զինտեխնիկայի ստեղծումը կապանք է թշնամու
ցանկություններին:



Չիվորական կոչումի վերանայումը գորականի տաղանդի վկայությունն է:



Ուսուցանելով մեր ապագա մասնագետներին – ինքներս ձեռքի տակ ունենալով ռազմագիտական նորագույն նվաճումներ, կդասվենք ոչ թե փառասեր ազգերի, այլ պատվարժանների շարքին:



Հայոց երկիրը լեռների անհասանելի ծովում ազգակուլ փոթորիկ սրահարումներին դիմադիր նավ է:



Գահավեժ դարերի մութում թո՛ղ անցյալդ, երկի՛ր, – գտիր նավահանգիստդ հուսո, ուր դադար ես առնելու – հանգիստ:



Ուժեղ համայնքները պետության ուժի երաշխիքն են:



Անմնացորդ նվիրիր ունեցածդ հայրենիքին, ոչ թե նրանից շահ – փառք ակնկալելու, այլ նրա սուրբ հողին արժանանալու հույսով:



Այլ երկրներից սահմաններով զատված աշխարհագրական տարածքը չի կարող կոչվել հայրենիք, եթե նրա վրա ապրողները զուրկ են հայրենիքի զգացողությունից:

Նարեկ Հովսեփյան-----



Մեր բանակի ամենահզոր դաշնակիցը հայոց լեզուն է:



Ազգի բնորոշումն առանց լեզվի նման է անհասցե նամակի:



Ինչպես որ յուրաքանչյուր համեղ կերակրատեսակ պարտական է համեմունքների առկայությանը, այնպես էլ յուրաքանչյուր լեզու պարտական է իր հարուստ նրբերանգներին:



Գրաբարը նման է այն թագավորին, որը մահվանից առաջ ավանդել է իր հաջորդին ամուր – հզոր երկիր:



Օտարաբանության սիրահարը նման է անձնասպանի:

Կիրթ եր-ալու ամենաանիմաստ ջանքը խոսակցական լեզուն օտարաբանություններով շաղախելն է:



Մեր գոյության ապացույցը մեր մարմնի առկայությունն է, իսկ մեր հոգու առկայության մասին վկայում է լեզվամտածողությունը:



Մեզ մատուցվող բարոյագուրկ ֆիլմերը նման են այն մրգերին, որոնք արտաքուստ քաղցր – ախորժեղի են, իսկ ներքուստ՝ դառն ու լեղի:



Ընդունենք օտարների մշակույթը վերլուծաբար, ընտրենք հատիկը – դեն նետենք հարդը:



Հեռուստատեսությունն ազգային է ոչ թե անվամբ, այլ էությամբ:



Հեռուստատեսության ներկա նպատակը գլոբալացումն է, իսկ գլոբալացման նպատակը՝ ազգերի – ազգայինի վերացումը:



Գեղարվեստական ֆիլմերից դիտենք այն, ինչը չի ոտնահարում մարդու արժանապատվությունը, իսկ այս չափանիշներին չհամապատասխանողները նետենք աղբարկղ:



Յուրաքանչյուր իշխանավոր պարտավոր է հաշվետվություն տալ ժողովրդին, – ոչ թե հաշիվ:
Երկնային ճամփորդ-----



Նյութապես գերհագեցված հասարակությունն իր պարապությունը լցնում է դրամի իշխանությամբ ձեռք բերված զվարճանքերով, որի արդյունքը նրա հիվանդ անդամների առկայությունն է՝ ազատ սիրո ըմբռնումներով:



Փողը կարող է հիպնոսի դեր խաղալ, եթե հիպնոսվողը կամագուրկ է – թույլ:



Մարգական խաղերն աստիճանաբար նմանվում են քաղաքական խաղերի, կուլիսային բանակցություններն են որոշում նրա ելքը:



Անմահությունը ժամանակավորի մասին այն հիշողությունն է, որը կապված է յուրաքանչյուրի կատարած գործերի – մարդկային արժանիքների չափանիշներին՝ սիրով – անկեղծորեն:



Լույսի գոյության մասին իմացողը չի կարող մնալ խավարում, եթե անգամ նա ի ծնե կույր է:



Պաշտենք ոչ թե քարանձավային գիտելիքները, այլ վերլուծական միտքը:



Մարմինն ապրում է այսօրով, հոգին՝ ապագայով: Եթե ներդաշնակենք այս երկուսը, կվայելենք բնության հովանավորությունն ու սերը, հակառակ դեպքում՝ պարզապես կդառնանք կենդանական տեսակերից մեկը, առանց բանականության, գերի կույր բնազդներին:



Որոնենք ժամանակի – տարածության համաձայնությունը՝ փորձելով տեսանելի դարձնել նրա կառավարումը:



Մեր իմաստությունը կուտակենք որպես ամպրոպաբեր ամպեր, բայց անձր-ենք՝ կենսատու լինելով բնությանը:



Տիեզերքը բազմակերպ մարմինների քառս է, որոնց էությունը ճանաչելով միայն կարող ենք խոսել բանականության մասին:

Նարեկ Յովսեփյան-----



Եթե գիտությունը պատկերենք ուղղաձիգ զսպանակի տեսքով, որի հիմքն ամրացված է, իսկ գագաթն ազատ ձգվում է վեր, ապա գալարի սկիզբը հաղթահարելով, առանց ջանքերի, ու, աստիճանաբար բարձրանալով, գալար-գալար կսպառենք մեր ուժերը, իսկ զսպանակը կդառնա ավելի երերուն՝ մեծացնելով անկման վտանգը – դժվարացնելով գագաթ հասնելու հավանականությունը:



Փայլուն ընդօրինակողին չշփոթենք աճարարի հետ:



Ապավինենք մանկավարժական ճշմարիտ գիտելիքներին:



Մի՞թե լեզվից զրկված մարդը դադարում է մտածելուց – մի՞թե լեզու ունեցող ցանկացած կենդանի օժտված է մտածողությամբ:



Որքան էլ խորհրդավոր ու սարսափազդու է գիշերների իմաստը, այնուամենայնիվ, սպասվածը – ցանկալին ցերեկն է:



Եվ երբ Տերը քառսից ձ-ում էր աշխարհը, մի՞թե չարարեց ցերեկներ, քանզի տեսավ, որ լույսն ավելի գեղեցիկ է ու ցանկալի:

Հետ-ենք աստվածաշնչյան խորհրդին, նվիրվենք լույսին – ավետենք լույս...



Մեր հայրենի տան հիմքն անսասան դարձնելու համար նրա շաղախին խառնենք ազգային ծեսերն ու սովորույթները:



Նախահայրերն երկիրն ի պահ հանձնել են մեզ: Լինենք պատասխանատու ապագա սերունդների առաջ:



Երկիրը պետք է միշտ շնչի – թ-ավորվի նորովի՝ չմոռանալով, սակայն հետադարձ հայացք ձգել իր պատմությանն ու անցյալին:



Հայրենիքը պատմականորեն ձ-ավորված իր դեմքն ունի: Չաղավաղենք օտար ազգերի առաջ նրա կերպարը:



Մենք հին ենք, բայց ոչ հնացած:

Երկնային ճամփորդ-----



Հայրենիքի դարավոր կնճիռների իմաստնացած խորքում թաքնված մտածումները պեղենք ու մեկնաբանենք համամարդկային արժեքների չափանիշներին համապատասխան, որովհետ- մենք էլ մեր արժանի տեղն ունենք այս ար-ի տակ:



Դարերի փորձով կուտակված իմաստնությունն ամբարվել է մեր գենային ֆոնդերի մեջ, զտելով այն խառնակ արյունը, որ տարածաշրջանի խաչմերուկներով անցնող վայրենին պարտադրել է մեզ, դրանով իսկ փորձելով խաթարել մեր անադարտությունը, պարտադրել ավարառուի իր փորձն ու էությունը: Բայց հզոր մեր կամքը ծառացել է օտար կանչերի դեմ՝ խորտակելով կապ ու կապանք –, զուլալվելով, շարժվել է առաջ դեպի իր երկնահաս լեռների

բարձունքները, ուր ար-ածագները ծիրանափայլ են, – ապրելու հույսն անհատնում, ինչպես մեր հոգին, մեր արմատն ու էությունը:



Անցյալ չունեցող յուրաքանչյուր ժողովուրդ չունի ապագա , իսկ ապագա չունեցող ժողովուրդը դատապարտված է չգոյության...



Նա, ով հիմա մեն-մենակ, անուղեկից ու անկարեկից կհամարձակվի ելնել քաղաքական քար ու քռա դաշտ, կխարխափի ու կգայթի անհավասարակշիռ՝ մեկ աջ, մեկ ձախ, մեկ վեր, մեկ վար...



Երբեմն երկու կետերը միացնող ուղին ճակատագրի հեգնանքով կարող է ամենաերկար ճանապարհը լինել:



Հենվել սեփական ձեռնափայտին – ոչ պատահական անցորդի, որը մի-նույն է՝ ճանապարհի ինչ-որ հատվածում լքելու է անկասկած:



Փոքր ազգ լինելով, մեզ չշփոթենք փոքրավորի հետ:



Տնային վերլուծության ենթարկենք ինքներս մեր խաղը, զուգորդենք այն քաղաքական հոտառության հետ:



Եթե ժամանակը դատապարտել ու վտարել է մեզ պատմության հրապարակից, չներելով անցյալի մեր հապաղումներն ու սխալները , իմաստուն չինե՞նք միթե: Չէ որ եկել է քարեր հավաքելու ժամանակը:



Հակադրենք պարզ մեծամասնությանը մեր խելոք գլուխները՝ ճակատամարտը շահելով ոչ թե թվով, այլ էությամբ:



Դաշնակցի երկդիմի խաղը մեզ տանելու է երկու ճակատով կռվող պետության կարգավիճակի:

Նարեկ Հովսեփյան-----



Ուշիմ – հնազանդ աշակերտից վերաճենք բանիմաց ուսուցչի:



Միշտ պատրաստ լինենք տալու պատմության դասաժամին առաջին դասը մեր կեղծ բարեկամին – բացահայտ թշնամուն:



Ազգային դիմագիծ չունեցող երկիրը նման է նկարի, որի շրջանակը ս- է, կտավը՝ բորբոսնած, նկարիչը՝ մուրացիկ:



Չաղավաղենք Աստծուց պարզ- ստացած մեր դիմագիծը՝ ջրի հայելուն նետած օտարի պատահական քարից:



Հայուհիների հրապույրը նախաստեղծ է:



Լույսը խաթարողը բանախոսն է պատերազմի:



Պատերազմը նախամարդու ուղեկիցն է, որի ռունգերն օդի մեջ որսում են արյան գաղջ հոտը՝ որպես գոյատ-ման նախապայման:



Ի՞նչն է ստիպում իրեն տիեզերքի զարդ համարող այսօրվա մարդուն՝ անցնելու նախամարդու տրորված արահետով. ավարառու մի՞տքը, թե՞ արյան ծարավը:



Երկրի վրա, ավա՛ղ, պակասում են գուլալ աղբյուրները, ու շատացել են սրա ազնիվ ակունքին քար նետողները:



Իմաստուն գրույցը կարող է շարունակվել նա- մտոք - աչոք՝ լռությունը չստվերող բառ- ասելիքով:



Մեզ համար նահանջ չկա՝ ոչ երգով, ոչ առանց երգի:



Հայոց երկիրը մերձենում է երկնքին:



Ամենասարսափելին դռները թակող անորոշությունն է:

Երկնային ճամփորդ-----



Նյարդերի խառնիխուռն ալեբախությունը կարող է վերածվել ավերակվող բանականության:



Չհսկվող սահմանը կարելի է անցնել առանց հրավիրատոմսի:



Ովքեր խոնարհվում են պատերազմի Չարին, նրանք դեմ են բանականությանը:



Նախահարձակ լինելով, պատրաստ լինենք ցրելու թշնամու ստեղծած ինքնախաբ տեսլականը, որը մեզ պատկերում է անփորձ պատանու դիմագծերով –, քնից արթնանալով, ցանկացած պահի պատրաստվում է խրատաբանելու, իսկ հակառակության – դիմադարձ կանգնելու դեպքում՝ պատժելու նա– իր նախընտրությամբ մեզ՝ ի տես բոլորի:




Հավատացեք առաքյալներին, որովհետ– նրանք են վկայում, թե Մարդու Որդին ուսուցիչ է:



Նա, ով կարողանում է կուտակել ամպրոպաբեր ամպեր, սակայն չի կարողանում անձր–ել, ուրեմն բախվել է խելացի պահվածքի – նույնքան խելացի պաշտպանության:



Կույր ատելությունը ցանկացածի կարող է դուրս նետել բանականության շավիղներից:



ՍԱՇԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՎԱՐՔ ՆԱՐԵԿԻ



Համառոտ կենսագրականը
գրվել է մեծանուն բանաստեղծուհի
Սիլվա Կապուտիկյանի ազնիվ հորդորով

ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿԸ

/կյանք առաջին/

- 1. ԾՆՈՒՆԴ
Երկնային ավետաբերը
- 2. ԴՊՐՈՑ
Լույսի – խավարի միջ-
- 3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Իմաստության – առաքելության ժամանակը

Բաժակը անսպասելի, գրեթե անաղմուկ շրջվեց ու կարծես անգո աներ-ույթ ինչ-որ մեկը ասեղնահյուս ճերմակ սփռոցի վրա ուրվագծեց կարմիր գինու ճանապարհը, որն առանց նախապայմանի տարածվելով՝ օղակեց ցորենաբույր հացի կտորն ու ներծծվեց նրա մարմնի մեջ, ինչպես կենարար արյուն, որի խորհուրդը չմեկնաբանված խառնվեց կից սենյակում նորածին մանկանը երջանկահաճույք կերակրող մանկամարդ կնոջ հանկարծահաս ճիչի մեջ ու մի պահ քարացավ անթարթ բացվող ու փակվող դռների ուրվապատկերում՝ որպես անբացատրելի հարց:

Սեղանի շուրջ հեռուներից ի մի հավաքված տասներկու անհրավեր եկածները անխոս, բայց հրամայաբար ենթարկվածների պես վեր հառեցին զարմանքախառն հայացքները հաց մարմնի - գինի արյան միաբան խորհրդից, որի գաղտնագրված պատկերը սփռոցի ժանյակահյուս ճերմակի վրա պնդում- պահանջում էր տիրաբար նայել գիշերային աստղազարդ երկնքի անեզր տարածության սահմանը անարգել ու անհրավեր անցնողին - խոնարհվել նրան՝ հրաշեկ երանգների բազմության մեջ ահեղատեսք տիեզերական եկվորին:

Գերհզորի առաքված խորհուրդը տեղ հասցնելն էր եկվորի նպատակը, թե՞ պատգամաբերի նախանշանով ի վերուստ հաղորդվող կամքն էր Չարի, որը տեսանելի երկնահատվածում գրված բախտ, թե անբախտություն էր տարփողում անզգացմունք՝ որպես մահվան հոգեառ դեսպան՝ ճակատագրի անգութ վճիռը կամակատարի պես խավար, անթափանց երկնքի անմեկնելի բարձունքներից բերելով հրեշտականման մանկիկին, որ քնած էր անվրդով՝ գլուխը քնքշորեն դրած փետրածերմակ բարձին:

Եվ նրանք՝ ար-ելքից եկած այն տասներկուսը, ովքեր նրա ծննդյան ուրախալի լուրն առնելուն պես հավաքվել եկել էին շուտափույթ, տարածք-տարածք ու հիմա այդ պահին երկնային չլսված եկվորի ժամանման խորհրդի մեկնման փորձն էին շուրթից շուրթ թ-ավորում՝ նմանվելով աստվածաշնչյան մոգերին, որոնք տեսել էին նոր Հիսուսի ուղենիշ աստղը - եկել էին խոնարհվելու՝ իրենց հետ բերելով հրաշալի ընծաներ - մեկ անգամ -ս ավետելու, թե նորածին մանկիկը շնորհյալն է լույսի - ի վերուստ օծված լինելով աստվածային կարողություններով՝ բանականության միակ ընտրյալն է:

Հրաշեկ, բոսորագույն, ավետաբեր գունդը կախվել էր տան գլխավեր-ում, իսկ գիշերվա ս-, խաթարված խավարը կծկվել, շնչահեղձ քարացել էր նրա ահեղատես մարմնի շուրջը, - նա իր հրեղեն ցուլերի անդրադարձում ճոճում- ճոճվում էր՝ չափելով կամակոր ժամանակը՝ Քրիստոսից քսան դար հետո վեցերորդ ամսի առաջին շաբաթվա վեցերորդ օրը, - օրորվում էր տարուբեր երկնքի - երկրի միջ-՝ անտեսանելի մի թելով կապված լինելով անչափելի տիեզերքի անեզրության գմբեթին, իսկ պահ անց, երբ այն տասներկու հոգին ականատես եղան - վկա, շարժվեց գնաց - անսպասելի, կարծես սրահար կիսվելով երկու մասի, հեռացավ արագընթաց, բայց անաղմուկ՝ իր հետքից թողնելով կապտաշղարշ երերող ծիր ու ընդմիշտ ամրագրված տագնապ:

Օրերի խուռներամ բազմությունը չկասեցվող ընթացքով իր բնականոն չվերթն էր շարունակում հավերժական ժամանակի ու անեզր տարածության մեջ, - հալվող, անեացող ամիսներին գուգահեռ, անմեղորեն հասակ առնող հրաշալի մանկիկը ոտքն ավելի ամուր էր դնում երկրային հողին, ու երբեմն, պահ ի պահ հայացքի մաքրեմաքուր անաղարտությունում նշմարվում էր անսահմանի ոչ հասարակ իմաստավորումը, իսկ երկրային դաժան ցուրտը - անտանելի տապը նահանջում, խեղճանում էին խոշոր աչքերի անամպ խորքում երբեմն-երբեմն բռնկվող իմաստուն կայծերից ու թե- դեռ չէր խոսում, - բառը գարնանը վերադարձող չվող թռչունի պես դանդաղում, ուշանում էր, սակայն լսում էր ուշադիր պատմվող հեքիաթը - ժպտում անմեղ. հրճվում էր, երբ քաջարի ու անպաշտպան անմեղը հաղթում- հաղթանակում էր, իսկ նենգ ու դաժան չարը գնում հեռանում էր գլխահակ, որպեսզի Սերը, Հավատը, Հույսը մշտապես հաստատվեն երկիր կոչվող այս հողակտորի վրա:

Խաղալիքների բազմագույն բազմությունը ասես ելել շքերթի ու եկել, հնազանդ, քայլ-քայլ շարվել է նրա շուրջն ու սպասում է հրամանի, բայց նա՝ հրաշալի ու ոսկեմազ հրաշամանուկը, անշտապ նրանց դասդասելով՝ կրկին դնում է հետ՝ ծաղկազարդ տուփերի մեջ, - թոթովելով՝ չորեքթաթ շարժվում գնում է դեպի ապակեպատ գրապահարանը, ուր գրքերի բազմաթիվ խոնարի շարքերը խորհրդավոր կանչում, հրապուրում են նրան՝ պատրաստակամ բացահայտելու գաղտնիքն - անհայտը, բարին - չարը, լույսը - խավարը, հույսը - ունայնությունը, սերը - դավաճանությունը, հավատը - ուրացությունը:

Եվ նա մեկնում է ձեռքը ցանկահարույց՝ խախտելով հանրագիտարանների հանդիսավոր խորհրդավոր լռությունը, քաշում հանում է նրանցից մեկն ու մեկը, - պատահական բացված էջը կարծես հրապուրում կանչում է՝ պատրաստ տալու այն, ինչ ամփոփված է իր Էության

մեջ, – նրա հմայված հայացքը անհաղթ, զորավոր զորագնդի պես գրավում է ճերմակագիր էջերը՝ անվերադարձ նվաճելով գիտության միջնաբերդի ամենակարող բանալիները:

Տիեզերական ճամփորդ երկիրը ընդամենը երեք անգամ էր պտտվել ար–ի շուրջը, երբ նա՝ գեղադեմ, արտասովոր մանուկը, սովորեց հայոց այբուբենը, իսկ հետո կարդալով՝ պատկերագծեց

Վարք Նարեկի-----

•

փոքրածավալ հեքիաթները – հորինեց բոլորովին նորերը, որոնց անսովոր հայտնությունը զարմանախառն թ–ածում, թռչում էր տնից տուն, – անդրադարձ խոսակցությունները գալիս, հաստատում էին, թե նորելուկ մանուկը երկիր այցելած ընտրյալներից մեկն է ու գիտի ավելին, քան մենք՝ հասարակ մահկանացուներս, զի տառը – թիվը իր համար պայմանական նշան էր միայն, այլ խորհուրդ էր ու ժամանակի չափանիշ, որ անհիշելի նախանցյալից եկել, ընդմիջտ տեղավորվել է ժամացույցի փայլատախտակին, ու հիմա սլաքների անվերջ, համառ պտույտը ընդանենը փորձ էր՝ հասնելու աննյութ ժամանակի հետ–ից, որի ըմբռնումը անհարիր է մեր մտածողությանն ու անհնար է սփյուռ տարածության մեջ, սակայն բազում մանկանցից միակ ընտրյալը էջ առ էջ թերթում, կարդում էր գրքերը – նայում էր ժամացույցին՝ իմաստավորելով բառը – թիվը՝ ներքուստ, սակայն արտաքինից ընդամենը գեղադեմ մանուկ էր ու սիրելի էր բոլորին:

«Ռ՞վ է, ի՞նչ է» մանկական պատկերազարդ հանրագիտարանը լիովին սպառել էր իրեն – այլ–ս տալու ոչինչ չունեի չափազանց հետաքրքրասեր մանկանը, որը դեռ–ս դպրոց չէր հաճախում – ընդամենը չորս տարեկան լինելով՝ նորահայտ գիտունի պես լրջագույնս շարժում էր գլուխը՝ համաձայն լինելով կամ թե կասկածելով այս կամ այն գիտական դիտարկմանը, – հատկապես հենց այն հոդվածները, որոնք երկնքի – երկնային անըմբռնելի լուսատուների կերպն ու էությունն էին բացահայտում, – թվում էր, թե հասուն ու մեծ էր արդեն, – իրավունք ունեցողի հանգույն էր խոսքը, – իրավացին անկասկած ինքն էր, մինչդեռ երկու թե երեք տարի դեռ կար, երբ ժամանակն ու օրերը նրան թույլ կտային մտնել դպրոց՝ որպես առաջին դասարանցի, զարմացնելու փորձառու դասվարին / Մ. Սահակյան /՝ տալով շփոթության մատնող մի հարց.

– Բոլորին է հայտնի, որ լուսնի հակառակ կողմը սովերների թագավորությունն է, – նրա անար– մակերեսը մշտապես ցածր է գրոյական մակարդակից, բայց մի՞թե այստեղից չի կարելի ենթադրել, որ կա պայման բյուրեղների առաջացման համար, թեկուզ սառույցի տեսքով – թեկուզ մակերեսային ենթաշերտում...

Այս մասին մտահոգ պատմեց մեզ վաստակաշատ դասվարը – անկեղծորեն խորհուրդ տվեց՝ թույլ չտալ Նարեկին կարդալու այնպիսի գրքեր, որոնք սահմանված չեն նրա տարիքի համար:

Դպրոցական կյանքը յուրաքանչյուր աշակերտի համար չխաթարված հիշողություն է հեքիաթախառն ու անմոռաց օրերի մասին, հատկապես եթե այն պոնկեպոնակ լի է անակնկալ դիպվածներով, որոնք գալիս բացահայտում են ուսումնաստենչ մանկան անեղծ ներաշխարհն ու մտածելու յուրատիպ կերպը՝ սովորականից մինչ– չըմբռնվող անսովորի առկայության սահմանները, որտեղ Նարեկը մրցակից չունեի տարեկիցների մեջ ու իր ազնիվ ցանկությունից անկախ՝ հաստատ տարբերվում էր բացառապես հարուստ ու երբեմն էլ չափազանց զարմանալի գիտելիքներով ու անսովոր, շատ անսովոր, խորհրդավոր ժպիտով:

....Շարունակվում էր ուսումնառությունը, ու նրան զուգընթաց առաջանում էին ազնիվ պատանու վերելքը խանգարող մեծ ու փոքր թնջուկներ, որոնք տեսանելի արհեստածին էին, քանզի չարի կամոք ճակատագիրը որոշել էր պարզապես պահմտոցի խաղալ ու կեղտոտ խաղի մեջ ընդգրկում, ներառում էր անձեր, որոնց մարդ կոչելը գրեթե հավասար էր չարդարացվող մեղսագործության, առավել –ս , երբ վկայաթուղթն էր նրանց իմացության արդարացումն ու փաստարկը, – ոչ բանականությունը, որն ի վերուստ միակ սահմանված անբաժան ուղեկիցն է երկրային «հոմո-սապիենս»-ների:

Անկասկած այս էր այն հիմքը, երբ Նարեկյան չափանիշներին անհարիր խաղը անդարձ, մինչ– ողն ու ծուծը շաղախված ստով ու խաբեությամբ դարձել էր իրեն պարապող մի քանի ուսուցիչ կոչվող վարժապետների հավատո հանգանակը, իսկ պատանի տաղանդի հզոր մաթեմատիկական անսպառ գիտելիքները փոթորկվող ալիքի պես շառաչով փշրվում էին նրանց կասկածելի իմացության կարծր ապառաժին.

– Թող Նարեկը դասարանում սխալներս չուղղի...

Սա ոմն իմաստակ ուսուցչուհու աղերսախառն խնդրանքն էր մեզ բացեփբաց, սակայն մի՞թե անքննելի չէ մարդ կոչվածի ներաշխարհը, հատկապես, երբ նյութը գերակշիռ է հոգու

հանդեպ, երբ տեսանելին – գնահատելին ծավալն է – ոչ բովանդակությունը:

Նարեկին այս հարցը հուզել էր նախապես, – նրա կիրթ, հարուստ էությունը հեռու էր խաղի թույլ մասնակցին հարվածելով անդարձ միավորներ շահել՝ ի տես էժան հանրահայտության, ի հեճուկս ոմանց, սակայն վարժապետուհու վաստակի հանդեպ անկեղծ որդիական ակնածանքով միշտ խոնարհ էր:

Անգիտելիք ուսուցիչը նման է ռազմական պատրաստություն չանցած զինվորի, եթե մեկը կարող է լքել սահմանը, ապա մյուսը, աննկատ խեղելով աշակերտին, դարձնում է անտրամաբան՝ զրկելով հետագայում հասարակության լիիրավ անդամը դառնալու հնարավորությունից:

Սաշա Յովսեփյան-----

Ժամանակը աննկատ հալվում անցնում էր, ու լուռ պայքարը անստվեր ու ծածուկ մթնոլորտում գալիս օղակվում, սեղմվում էր տաղանդավոր պատանու շուրջը՝ փորձելով անտեսանելի պատկերներով արգելել ու փակել նրա անկասելի ընթացքը դեպի գիտության երկրամերձ տարածքներ:

Եվ կային նա– ճշմարիտ ուսուցիչ-ուսուցչուհիներ, ովքեր տքնանքով վաստակած իրենց կոչումը չփոխեցին խեղկատակի դերի հետ – մերձ ու մոտ մնացին մարդկային բանականությանը, իսկ մի մասն էլ, ի ծնե կամագուրկ լինելով, չհամարձակվեց դիմադարձ լինել չարին, ու հենց նրա հրամայական դրդումով փորձեցին աղավաղել, այլափոխել նրա աստվածային էությունը – ջանք չխնայեցին ծառայել մեկի, որի ստոր հատկանիշները, անկասկած, կենդանական աշխարհից էին:

Տարեվերջյան փոխադրական քննությունները մեկ անգամ –ս մերկապարանոց ու բացեիքաց ցուցադրեցին այս ստոր խաղի բոլոր մասնակիցներին, ովքեր, հոգ–որ որսի հմուտ վարպետներ լինելով ու ժամանակ չկորցնելով, ձեռնամուխ եղան չկամության – չարակամության օրենքներով նախապատրաստելու – մինչ– վերջ ի կատար ածելու չարի կամքը՝ անուղղակի պատճառ դառնալով ապագա հանճարի կործանմանը:

Հանձնաժողովի նախագահը՝ տգետ, ինքնահավան մի իմաստակ, իր հովանավորյալից խոսքով – գործով վստահված լինելով՝ կատարում էր իր ս– գործը, սակայն խենեշ հոգում կասկած ունենալով, զգուշանալով՝ մտածում էր՝ վախենալով, թե չլինի հանկարծ ու հանկարծ կորցնի աշխատատեղը, – հլու, ստրկամիտ հացկատակի պես ոչ միայն փորձեց ավելին եր–ալ տիրոջ աչքին, քան վայել է բնածին կամակատարին, այլ խամաճիկի իր դերը այնքան փայլուն կատարեց, որ անցավ եր–ակայությունից անդին ու գերազանցեց իրեն կերակրողի բոլոր սպասելիքները. միաժամանակ անձնամեծարության կուրությունը նրան տարավ մեծամտության:

- Թող պարծենա Նարեկը ինձ մոտ չորս ապահովելով:

Բայց հետո օրեր անց, գուցե թե արթնացող խղճի ընդվզմամբ – կամ էլ համեստ բարեպաշտ ձ–անալով՝ ասաց.

- Ես ո՞վ եմ վերջապես. ինձ կարգադրել են:

Ավելի լավ է կյանքում պարզ – ճշմարիտ լինել, ինչպես տակառաբնակ մի հիոգենես, քան լինել պալատներում քծնանքի ու վայելքների մեջ պղծված Մեկենաս:

Իսկապես ո՞վ էր նա «... այդ փայլուն ընդօրինակողը, որը իր այս ընդունակությունը չփորձում էր հանճարեղության հետ – խաղում էր ականջ ունեցող ցանկացած անձի նյարդերի վրա՝ մշտապես ներկայացնելով իրեն որպես եզակի – անկրկնելի:

«Նոյյան աղավաղված վերադարձը» ծրագրային վիպակում բանաստեղծ, թարգմանիչ, հրատարակիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Ներսես Աթաբեկյանը գրում է «... Նարեկի գրիչը անվրեպ է, անկողմնակալ – հզոր: Վիպակի կերպարները մտացածին չեն, իրական են – շոշափելի »:

Մի՞թե արտառոց ընդունակություններ են պետք մտովի գծագրելու չարագործի պատկերը ... ***ով հեշտությամբ կարողանում էր իրար դեմ հանել աշխատակիցներին – անասելի ուրախանում հրճվում էր տեսնելով, թե ատելության մթնոլորտում ինչպես են տապալվում հատուկենտ ժողովրդանպաստ օրինագծերը ...***

Սուր աչքը – վերլուծական միտքը, տեսածի անսահմանափակ բացահայտման կարողությունների գորությունը Նարեկին իր տեսադաշտից տանում հասցնում էր մինչ– հորիզոնից այն կողմ, մինչ– անեզր անսահմանը «...***Անպատասխանատու գործելակերպի կոչված թեթ–աբարո սույն անձը, հիպնոսված իր բնածին կեղտոտ կարողություններով, կարծում էր, թե անփոխարինելի է այս պաշտոնի համար....***»:

Աստվածընտիր պատանուն ոչ թե կույր վրեժխնդրությունը, այլ սպանիչ ցավն ու հոգու տառապանքը, առաջնորդելով, ստիպում էր խոսել հասարակության պատկերն աղավաղող հատերի մասին, որոնց հոգեւորամտությունը – քծնախտով վարակված լինելը փորձություն է յուրաքանչյուր պետության համար, քանզի ո՞վ կարող է իրեն ապահովագրված համարել այնտեղ, ուր հոծ են ու քանակ են կեղտաջրերում Չարից մկրտությունն ստացածները:

Սույն պաշտոնյայի կին կամակատարներից մեկը «... *ասես իրիկնային ուրու էր՝ պատրաստ հարվածելու ցանկացածի՝ ում կկասկածեր ԱԳ քարտուղար-հանձնակատարի դեմ անվստահության մեջ...*»

Բոլորովին կամագուրկ ու գրեթե գարշապարի դեր ստանձնած, գիտությանն անհայտ այս տարօրինակ մարդակերպ արարածը՝ զուրկ սթափ մտածելու կարողությունից, համառորեն համոզում էր, թե իր տեսակի մեջ միակն ու անկրկնելին է:

Նա իր անպատկառ տիրոջ հրահանգի համաձայն լրտեսում էր բոլորին – անհապաղ, հենց նույն օրվա երեկոյան մանրամասն հաշվետվություն ներկայացնում նրան՝ չգրկվելու համար այն վայելքներից, որոնցով վարձատրում էր իր կատարած մատնությունների համար:

Վարք Նարեկի-----

Ամենակույլ խավարի անթափանց ծալքերը ճիշտ – ճիշտ հարմար թաքստոց էր մատնություններ – անիրական սովերի ցեցակեր ծածկոցը տարածելու քնքուշ նորաբաց ծաղկի վրա, որը կոչված էր հետո՝ գրեթե մի քանի տարի անց, դառնալ դպրոց անունը կրող այս անմխիթար ավերակի եզակի պարծանքներից մեկը – մեծերից ստացած ճմարիտ իրավունքով ավետել փառքը – պատիվը բոլոր նրանց, ովքեր փոքրիշատե առնչվել էին իրեն:

Կյանքի հայելուն չկամների փորձության նետած քարը, չարագործ վարձապետների խղճալի միության հերթական սադրանք- քայլը լինելով, գերծ էր մտածողության աննշան տարրերից, – Նպատակը մեկն էր՝ սպանել բարոյապես:

Ասացիր՝ իբր ուսուցիչ ես դու, քեզ հավատարիմ աշակերտ եղա:

Ասացիր՝ իբր բազում է հոգսդ, ես որդիաբար քեզ նեցուկ եղա՝ մնալով խոնարհ:

Իսկ երբ իմ մասին քեզ հարցում արին, թե ո՞վ եմ կամ ինչ:

Ձեռքդ չդողաց՝ ինձ ընդամենը չորս «ընծայեցիր» մեծահոգաբար:

Ուսուցիչ, ասա, անունդ ի՞նչ էր...

Բոլոր ժամանակներում էլ, – դա վկայում է պատմությունը, բնությունից պարզ– չստացած անուղեղ անարժանները նմանվում են պարոնյանական հովանոցին՝ ենթակա ցանկացած ուղղությամբ – ուժգնությամբ քամիների անզուսպ թելադրանքին – ոչ երբեք բանականության ձայնին, որ հնչում է ինչպես չհերքվող պատվիրան:

Չարմար տեղավորվեք – համբերատար եղեք մինչ– ուշաթափություն, եթե պատրաստվում եք լսել այն ուսուցչին, որը կարծեցյալ գիտուն է...

Կարծեցյալ գիտունները դատարկ ու անպտուղ անապատի պես ատեցին կյանքը – նրան, ով հրաշամանուկ էր – առաքված էր իմաստնության տաճարից, որպեսզի ուսուցանի – սովորեցնի:

Չավատա, խոնարհվիր – երկրպագիր ուսուցիչներիդ, որովհետ– նրանք օծված են ի վերուստ:

Չարգիր – սիրիր մանկավարժներիդ, որովհետ– նրանք ուղենիշ են կյանքիդ ճանապարհին:

Անաղարտ ու մաքուր պահիր հուշը դասատուներիդ մասին, որովհետ– նրանք են քո օրվա խորհուրդը՝ իրենց կարողության չափ:

Եվ եթե կարող ես՝ ներիր վարձապետներիդ՝ հանդիպած պահին...

Աստծո ընձեռած բար–ը տուր նրանց – անցիր անհիշաչար...

Եվ ներեց նրանց, ովքեր տկարամիտ էին հոգով – լույսը չգերադասելով խավարից, Լեռան Աղոթքը լսելու փոխարեն՝ իջան խորխորատների հատակը՝ խարխափելու խավարասերների պես, ու քարշ գալով՝ պատեպատ զարկվեցին՝ մոռացած, որ իրենք բանական անձեր են – ոչ թե օգտագործվող առարկաներ:

Ես ինձ կողոպտված չեմ համարում, որովհետ– դուք տարաք ամեն ինչ, բացի իմ մտածողությունից:

Մաթեմատիկան անզուսպ տարերք էր, ուր Նարեկի անխորտակ Նավը երբեք խուսանավելու փորձ չէր կարող անել – վստահաբար, հմուտ Նավապետ ունենալով, պիտի գնար ու հասներ բարեհուստ հրվանդան, որպեսզի չտեսնված, զարմանալի ու բնատուր իր գերիզոր իմացությունից ոչ թե մաս հանելով, այլ լիաբուռ բաշխելով բոլորին՝ մի անգամ –ս պիտի ընդգծեր իրեն շնորհված մարդեղությունը:

Սակայն ավագակաբար ստոր դաշինքը նախապես – նախօրոք էր մշակել իր մարտավարությունը – դարանակալ, սրտատրոփ սպասում էր՝ միամիտ մանկան առաջին – հրաշալի թռիչքը ընդհատելու՝ ժանտ կարողությունները ժողովելով, որպեսզի հուսահատության ճարակը հրդեհի պես մոխրակույտ դարձնի անապատի միակ օագիսը:

Ու վերադարձավ նա՝ այլայլված, անսպասելի հարձակման ենթարկված ութերորդ դասարանցին՝ արժանացած դավադիր վարժապետների ստորաբարո գրոհին, որը, սակայն, սատանայական ճղճղոցներից ավելին չէր, բայց անմեղ հոգին ըմպել էր կյանքի մատուցած առաջին բաժակ դառնությունը – վերադառնալով լուռ, բռնկեցները սեղմած, առանց արցունքների – առանց բառերի՝ մնաց ոգեղեն ու վեր վարժապետական ապարդյուն ճգնանքներից, ինչպես իր սիրած լեռները, ***ուր ար-ածագը աստվածային է, մայրամուտը՝ շքեղ:***

Երեք դժոխային սարսափելի օր բառերը գրկվեցին իրենց իմաստից՝ ինչպես լքյալ բներ, – բանականությամբ օժտվածների նոսր շարքերը երերացին այնտեղ, ուր ոչ իր կամոք ապրում էր ինքը:

Երեք երկար օրերի բոլոր վայրկյաններն ու ժամերը դանդաղահաս բռնել կալանել էին նրա փակ բռնկեցները, – թվում էր՝ բարի, իր սիրած թռչնաերամի պես նետահարվեց լույսընդդեմ, ռիսակալ չարի կողմից:

Երեք երկար օրերի դարանակալ լռությունն ի զորու չեղավ արցունք քամելու նրա գեղեցիկ ու խոնարհ աչքերի պարզ ու չխաթարված հրաշալի տարածքից, ու թաց ամպի ոչ մի բոսորագույն ծվեն չհամարձակվեց մշուշել ու թրջել նրա նոր-նոր պատանիացող այտերի թավիշը:

Սաշա Հովսեփյան-----

Երեք օր հետո սակայն դալկացավ դեմքը, – դաժան գլխացավերը ավերիչ երկրաշարժի պես եկան անհրավեր ու ցնցեցին նրա երկրային մարմինն ու աստվածային էությունը:

Իսկ հետո եկավ ժամը, երբ կյանքի ոլորապտույտներով անցածներս փորձեցինք մեկնաբանել ստահակ վարժապետների դավադրությունը՝ որպես օրինաչափություն, որպես չարի արբանյակներին մեկնդմիշտ տրված տեղադրի պտույտ – ստոր գործելակերպ:

Արտաքուստ խաղաղ էր, ինչպես կեսօրվա կասկածելի անդորրը, սակայն ո՞վ կարող էր ճշտապես կանխագուշակել, թե ինչ է կատարվում նրա հոգեղեն աշխարհում, – երբ ու որտեղ ամպրոպը կայծակախառը կտապալի երկաթակուռ կաղնուն:

Ամենամեծ ցավը հոգու ցավն է, երբ դրսից այն չի եր-ում անթափանց պատյանի պատճառով, բայց ներսից սպանում է անգթորեն ու թափանցիկ:

Դաժան, անբացատրելի մի սովեր անթափանց ու համառ եկավ հանկարծահաս ու սքողեց նրա հրաշալի, քնքուշ դեմքը:

Տեսրի ճերմակ տարածքների մանր, համաչափ ու մի քիչ դժվար ընթեռնելի բազմաքանակ էջերը հավանաբար պատասխան չունեին, այլ միայն հավաստի ու վստահելի տեղեկատվություն Նարեկի առասպելական աշխատասիրության ու արտակարգ հարուստ գիտելիքների մասին, քանզի դպրոցական բոլոր տարիների մաթեմատիկայի խնդիրների ամբողջությունը գաղտնագերծված էին արդեն, այստեղ էին նա- դժվարամատչելի խնդիրներ՝ իրենց կամակոր հարցադրումներով, որոնք բոլորն էլ, հրավիրյալ լինելով բարձրագույն մաթեմատիկայի տարանուն խնդրագրքերից, ստացել էին համազոր պատասխաններ – հիմա իրենց համեստ, լուռ առկայությամբ իմաստուն պատանու մաթեմատիկական տաղանդի փայլուն ապացույցներն էին:

Սակայն խորհրդավոր, անհասկանալի ինչ-որ նշաններ գրեթե համաչափ կրկնվում էին սովերածավալ տեսրի լուսանցքների – մակերեսի ազատ տարածքներում՝ մերթ ընդ մերթ բորբոքելով եր-ակայության անհայտ սահմանները, ու տեղի տալով սովորական մարդու հետաքրքրասիրության բավարարմանը՝ գալիս, հարցատեսք դրվում էին պատանիացող Նարեկի առջ-:

- Անիմաստ խա՞ղ է, թե՞ իմաստավոր նշագիր:

- ***Պարզապես գիր է,-*** պատասխանեց՝ հայացքը տարրալուծելով ինչ որ տեղ,- ***իսկ ավելի ծիշտ՝ գաղտնագիր է, պայմանական նշանների համակարգ, այբուբեն, որով գրված է...,-*** ու կարծես անսպասելի գաղտնիք բացահայտածի պես լռեց՝ փորձելով անսովոր հայացքի զորությամբ ջնջել, մաքրել վերջին ասածի ազդեցության հետքերը դեմքիս վրայից, որ անառարկելի նորից դարձավ հարց ու կրկին անարձագանք վերադարձավ նրան:

- Այսինքն լեզու, որի հեղինակը դու ես,- հարցրեցի կասկածով,- ինչի՞ մասին է այս բոլորը:

Լռեց՝ խորասուզվելով մտքերի մեջ, ու մի պահ անց փորձեց պատասխանը հակիրճ տեղավորել մի քանի բառի մեջ:

- Միջնադարում այն կարող էր կոչվել տրակտատ, իսկ մեր օրերում՝ գիտական տարրերով հագեցված աշխատություն՝ նվիրված ներքին այրման շարժիչների ՕԳԳ-ն մեծացնելու հնարավորությանը:

Փորձության ժա՞մ էր արդյոք, թե՞ պարտադիր հարցաքննություն՝ խառնված անսովորի բացահայտման հնարավոր ջանքերին, որի նպատակը ոչ թե սին հպարտությունը, այլ մարդկային անտեղի – տեղին հետաքրքրության բավարարումն էր, որ այս պահին հայացքով հետախուզում էր երկրորդ բազմաթերթ տետրի անըմբռնելի նշանների – բազմաթիվ գծապատկեր-սխեմաների կանոնագիր անվերջությունը:

- Մի աշխատություն էլ սա է՝ գերկարծր մետաղներ ստանալու մասին, բայց երկրային պայմաններում:

Այս էր պատանի գիտունի համեստ պատասխանը, որը, սակայն, շփոթության մատնեց ինձ՝ ստիպելով հնարավորինս վերցնել ծածկոցը գաղտնիքի վրայից:

- Իսկ ինչու՞ ամեն ինչ քո այբուբենով ու այս նշագրերով:

- Երբեմն անհատների կողմից ստեղծված որոշ բացահայտումներ անհարիր է ներկա հասարակության ըմբռնումներին – կարող է ճակատագրական լինել հենց նրա համար՝ սխալ հասկացվելու դեպքում, – ճիշտ ու ճշմարիտ է, թե ամեն ժամանակ իր պահանջն ունի, – ժամանակից առաջ ընկնող հանճարն անգամ չի ներվում:

Այս աշխարհը դեռ-ս չճանաչած երեխան մտածում – դատում էր ինչպես իմաստուն մի այր, որի գլխով անցած փորձության մշտահոլով ամպերը գրեթե ոչինչ չունեին ավելացնելու այն ամենին, ինչ նրան նախապես էր տրված ու այլ-ս բեկանման ենթակա չէր:

Վարք Նարեկի-----

Մեծամտությունս կուրության քողի պես եկել, շղարշել էր հայացքս, ու անգիտությունը մի բարակ արահետ էր թողել բանականության համար, ուր դատողություններս միայն քաջալերանք էր իմաստնացող պատանուն՝ առանց ոյուզն-ինչ իմանալու, թե ինչ եմ անում այդ պահին, մոռանալով, որ ընդամենը մեկ շաբաթ առաջ եռագլուխ հիդրայի արնախում երախի հետքը նրա գերծալ ուղեղի նուրբ կազմության վրա չի ապաքինվել, – հպարտության ու գալիք փառքի շաղախում այս փոքրիկ հսկայի համար անգիտակից ու քամուց քշվածի պես բախտը ինձ տանում էր փակուղի, որն այլ-ս լինելու էր անդարձ:

Սակայն խոհերն ու մտածումները, որ միշտ նրա հետ էին... ճակատագրի պես իր էությունից անբաժան ուժ ու զորություն էին տալիս նիհար ու վտիտ մարմնին:

Եվ ինչպես որ բնությունն ամպրոպից առաջ մի պահ խորհրդավոր լռում համրանում էր, որ ամպրոպ, այդ՝ լինելու է, բայց ոչ կործանարար, այլ կենսատու – բարեբեր:

/«Նոյյան աղավնու վերադարձը» էջ 98/

Ահա այս էր ութերորդ դասարանի ապագա հրաշամանուկի ոգու փորձության «Նոյյան աղավնու վերադարձը» վերնագիրը կրող յուրատիպ կիսաիրական կիսահեքիաթային վիպակի շարադրումը... **բայց այդպիսի ապշահար անող հասունություն, հոգու փորձ, ընդհանրացման կարողություն, այսպիսի լեզու՝ դիպուկ լակոնիկ, զգացածը ձ-ի բերելու հմտություն մենք չէինք սպասում,** – ամենայն հայոց բանաստեղծուհին գրում է՝ ավելացնելով. **«Ասես Նորոյա վիպասք է, Նորատիպ էպոս ու հերոսն էլ Նարեկ առաջին թագավորը սասնա ծռերի շառավիղն է 1000 տարի հետո հայտնված մի Նոր միամիտ ու արդարախոս Սասնա մանուկ, որ անհավասար կռվի է բռնվում ժամանակակից Մարա - Մելիքների հետ»:** /Սիլվա Կապուտիկյան/

Հայոց պատմությունը իր համար անդամնալի անցյալ չէր, ուր մոռացության փոշին համառորեն փորձում էր լռության կորստի մատնել դարեդար մաքառած ու գոյատ-ած մի հերոսական ժողովրդի դիմադիր կենսագրությունը, այլ դաս էր, որի ոգին թ-ածելու էր երկնամերձ Մասիսների դիմաց – ուսուցանելով՝ առաջնորդելու էր դեպի լույսի հարատ-թագավորություն:

Եվ քանզի ինքը նախապես գիտեր գալիքը, սակայն իրավունք չունեւ այդ մասին խոսելու, բայց երբեմն պատահաբար աչքերի անսովոր հեռաստաններում բոցկտում-բռնկվում էին անսովոր կայծեր, որի խորհուրդը անմեկնելի էր, իսկ իմաստը՝ անհասկանալի:

Քեն մի պահեք օվկիանոսից՝ նրա անսովոր մեծության համար...

Մի վիրավորեք նրան՝ մեղադրելով համեմատաբար հանդարտ մակերեսի – ներքին անընդգրկելի խռովքներ ունենալու համար:

Պարզապես աշխատեք հասկանալ նրան ...

Նրան հասկանալու համար միակ նախապայմանը ուսուցչի կոչմանը արժանի – հավատարիմ լինելն էր, մինչդեռ չարի ստեղծած դպրադաշտի գարշելի տնօրինությունը

ստորաբար հանձնված էր մի քանի խեղկատակ պնակալեզների, որոնք, ավա՛ղ, պատրաստ էին խամաճիկային ցանկացած դերակատարման՝ պատուհասելով մեկի, որը գիտեր ավելին ու առավելը:

Գիտեր ի սկզբանե, որովհետ- ընտրվածի վստահ խոնարհությունը միայն կարող է իր միջով անարատ անցկացնել Ընտրողի ճշմարիտ խոսքը – անխաթար ու անկորուստ հասցնել մահկանացուներին /բանաստեղծ- թարգմանիչ Ներսես Աթաբեկյան/

Տագնապը խորանալով պտտվում էր նրա շուրջը, – դպրոցական վերջին անիմաստ երկու տարիների տխուր անորոշության կասկածելի մթնոլորտում պակասել էին Սուրբ Մաշտոցի, Զայրենասեր Աբովյանի – Ուսուցիչ Զիսուսի նվիրյալ հետևորդները, որոնք ճշմարիտ զանգի չընդհատվող դողանքով էին կանչում իրենց բանիմաց աշակերտներին՝ ուսուցանելով Սեր, Զավատ – Զույս, մինչդեռ նա միամտորեն վստահված էր նենգ – նեռ անձնադավերի, որոնք Նարեկին ոչինչ չունեին տալու:

...Քանզի Նարեկի՝ մեր դասագրքային իմացությունների չափած-ման մեջ չտեղավորվող գիրը հուշում է Աստծո Քարտուղարության առկայության – ճշմարիտ խոսքով ապաքինելու ձիրք .../Ն. Աթաբեկյան/

Նարեկը իրատեսորեն հյուսում էր իր ծրագրային վիպակը, ուր ներկայացվող դեպքերն ու անակնկալ իրադարձությունները հզոր իմացություն – առավել հզոր գրչի արվեստագիր արդյունք են՝ անմնացորդ շաղախված ու ամրագրված հայրենասիրությանը, որը Նարեկի ընկալմամբ բացառապես ելք ու փրկություն էր Նորօրյա կույր խաթարումները կարգավորվելու – վստահաբար դեպի ապագա շարժվելու համար, սակայն տիրաբար մաքառումով մաքրում էր անցյալի կարծրացող տխուր փոշին ժամանակի վրայից, հրաշարժ ներշնչանքով բացահայտելով՝ մեկնում էր ազգի խեղճության պատճառն ու հետ-անքը:

Ասես մեր հեքիաթներում գործող երեք եղբայրներից կրտսերն է, որ ինքնավստահ ճամփա է ելնում գտնելու Զազարան բլբուլը կամ անմահական ջուրը՝ իր երկրի վերքերը դարմանելու, իր անկյալ ժողովրդին ոտքի կանգնեցնելու համար /Սիլվա Կապուտիկյան/

Նրա ավարտական փաստաթուղթը վկայում է, թե գերազանցության դիպլոմը ոչ թե իր սնապարծ, անճշմարիտ ուսուցիչների վաստակն է, որոնց մասին միշտ էլ չափավոր հարգանքով ու

Սաշա Զովսեփյան-----

խոնարհությամբ էր խոսում, այլ ուսուցիչների, որոնց ճշմարիտ համարումը ոչ թե թղթի վկայությամբ էր պայմանավորված, այլ ազնիվ բանականությամբ:

Բարեկամները մեզ օգտակար լինելու համար են, ընկերները՝ օգնելու, թշնամիները՝ սթափ պահելու:

Եվ գուցե թե նրանց մեջ –ս եղել են Զուղայի հետևորդներ, որոնց ընչաքաղծ արծաթասիրությունը հենց ծախու մատնության դիմաց դառնությամբ է լցրել Նարեկի Աստվածընտիր հոգին, միաժամանակ անզոր լինելով՝ խաթարել լույսի սահմանները, սակայն թողել է աննշան ստվերի մի քանի գորշ շերտիկ, որոնք մեջքաջարդ անշնչացել են անդնդախոր ձորերում:

Անկախ չկամների կուրության աստիճանից՝ ար-ի լույսը տիեզերքում տարածվում է սահմանված արագությամբ:

Ինչ-որ շինծու, մոգական ուժ, ավարտական քննությունները դեռ չսկսած ու վերջին զանգի ավետալուր դողանքների կայտառ արձագանքներից թ-ավորված, համառ համոզում, ուզում է ավտոերթով հաղթահարել ոլորապտույտ ու սահմանամերձ գնդակահաս ճամփաների մեկ բաց, մեկ փակ կեռմանները՝ հասնելով գարնան խենթ վարարումներից իր սանձը կորցրած, դիվահար գետի հողմակեր ափից քիչ վեր ինչ-որ Նորահայտ, մեծամիտ մեծահարուստի անարդար դրամով կառուցված եկեղեցի -վանքը՝ եր-ույթ ստեղծելով, թե ավանդապաշտ ենք ու հայ – տեր ենք մեր մի բուռ կորուսյալ հայրենիքին:

Սակայն ձ-ի գերիշխանությունը այս մոլորյալ մոլորակի մշտական, հարատ- ուղեկիցն է, – տեղ չթողնելով համեստ, զուսպ, բայց հարուստ բովանդակությանը՝ ամուր փակել է նրա դեմ հնարավոր բոլոր ելքերը՝ արգելակելով իմաստն ու թույլ տալով միայն այն ամենը, ինչը հաճո է պարզունակը ընկալող անգալար ուղեղին:

Չարդանախշ խաչքարի առկայությունը եկեղեցու բակում վկայություն է, թե **փոքր ազգ լինելով՝ մեզ անհնար է շփոթել փոքրավորի հետ**, քանզի մեզ վստահված երկրային արարչագործության հմուտ բանբերներ լինելով՝ տքնանքով կերտել ու ապառաժ քարից ստեղծել ենք արվեստի այս ինքնատիպ գլուխգործոցը, որը համամարդկային արժեքների ընտրանիներից մեկն է:

Մոմավառության դարևիվեր խորհուրդը հանդիսության մի դրվագն էր միայն, սակայն, ավարդ, իմաստակորույս վանքի մարդաշատ ներսը գրկվել էր կանխավ իրեն վերապահված հրաշագործ դերից ու ավելի շատ հիշեցնում էր անսկզբունք – անորոշ խառնամբոխի, որի անիմաստ ժխտի դատարկ արծագանքը բախվում էր կամարակապ պատերին – անթռիչք սսկվում փոքրածավալ գմբեթի տակ:

Նարեկը մարմնապես հեռու էր այս ամենից ու ամեն ինչ մոռացած՝ երկար ուսումնասիրեց, իմաստավորեց ամենագոր տիեզերքի մշտահոլով, բայց – հարափոփոխ շավիղներում իրեն թույլ տրված երկրային ժամանակի մի փոքր հատվածը –ս:

Մեր գոյության միակ իրական երաշխիքը աշխարհում ժամանակն է:

Ժամանակի մեջ տեղավորվելու Նարեկի փորձը երկրային գործերի հնարավոր տարբերակներից միակի ճիշտ ընտրությունն էր, որը ի վերուստ տրված էր դառնալու տարածք ու ասպարեզ, որտեղ հմուտ, բանիմաց հնագետի պես անտեսանելի – կորուսյալ շերտերից նա պեղելու էր մոռացության մատնված բանականության հատիկը:

Իր հայրենիքի մեկընդմիշտ նվիրյալը լինելով – ունենալով նրա ողբերգական ու հերսական անցյալի անմնացորդ, ամբողջական պատկերը՝ պատրաստ էր ուխտ արած քաջարի զինվորի պես մինչ– վերջ տրվել նրա փրկությանը, մտածելով, թե ***չհսկվող սահմանը կարելի է անցնել առանց հրավիրատոմսի***, – որ այդ պահից իսկ ***մեզ համար նահանջ չկա՝ ոչ երգով, ոչ առանց երգի:***

...Կարճ ժամանակով սահմանամերձ գյուղերը ակամա հայտնվեցին արկերի – ականների խառնիճադանջ ձայների՝ հոգի – սիրտ կեղեքող անորոշության մեջ, ուր անհաստատ խավարում լուսածիր զնդակների անհասցե տարափը պատահական անզգույշ անմեղին մատուցում էր մահվան բոթաբեր անժամկետ հրովարտակը:

Լինելով ընդամենը հինգ տարեկան՝ չվախեցավ ու չերկնչեց՝ տեսնելով, թե ինչպես տան գլխի վրայով խելակորույս սլացող «ալազաններից» թթենու մատղաշ տեր–ները խորշակվելով թափվեցին, – վախեցած փոքր եղբորը համոզեց՝ հուսադրելով.

Մի վախեցիր, որովհետ– ներսիդ վախը – դրսի վախը կդառնան երկու հոգի – միասին կհարձակվեն՝ քեզ սպանելու համար:

Մի օգնիր դրսի վախին ու թող նրան մենակ:

Միայնակին հաղթելը հեշտ է:

Վարք Նարեկի-----

Արդյոք այս փոքրիկ հու՞շն էր պատճառը, որ երեք տարի անց համոզվելով նրան՝ դրդեց ռազմասիրության, իսկ հետո նույնքան անսպասելի այս ցանկությունը տարրալուծվեց ժամանակի շնչի մեջ, – Նարեկը մի անգամ էլ հնարավորություն ունեցավ հիմնավորապես վերլուծելու նյութը – Էությունը:

Բազում են – ուր ասես կարող են տանել կյանքի ճամփաները:

Սակայն նրանցից պետք է փնտրել ու գտնել այն եզակին ու միակը, որ մեր ապրած ու չապրած օրերի անընդմեջ շղթան հասցնելու է անվերադարձ ու արդարացնող տրամաբանական ավարտի...

Փառատենչությունը փութկոտ նահանջել էր, վախկոտ զինվորի պես ընդմիշտ լքել էր նրա հրաշալի մտածողության անձեռնմխելի սահմանները, – նրա երկրային կյանքի ողջ ընթացքը փնտրտուք էր՝ գտնելու կատարելություն տանող ուղին՝ զերծ մնալով այն տարափոխիկ վարակներից, որոնք մարդկային հասարակության պարտադիր ուղեկիցներն են:

Եթե հնարավոր չէ հոգով – մարմնով կատարյալ լինել, նախ փորձենք կատարյալ լինել հոգով, ապա ձգտենք մարմնական կատարելության:

Գուցե հենց ճշմարիտ պատճառը փնտրելու ավելորդ ճիգ ու ջանքը իմաստագրկվում է հիմնովին այն պահից, երբ վերածննդի շրջանի լուսեղեն մարմինների անխառն պատկերասրահը Նարեկի դիմաց բացում է իր դռները՝ մի անգամ –ս ընդգծելով կենսասեր կերպարների առանձնահատուկ կերպը՝ կոչված փրկելու այս աշխարհը:

Մերկ մարմնի կենսափոխոթայությունը անխտիր – համարձակորեն փնտրեք վերածննդի դարաշրջանի մեծ արվեստագետների գործերում:

Եվ նա իր իսկ կողմից բացահայտված գաղտնիքի լավագույն կողմերը սիրով կիրառեց՝ մասնակցելով կարատե ար–ելյան մարզած–ի վարժանքներին՝ նիհար, բայց մկանուտ մարնիկը իր աստվածահաճո Էությանը զուգակցելով որպես մի ամբողջություն՝ զերծ մնալով ամբարտավան կեցվածքից, ներդաշնակ, ինչպես առասպել, որի իրական – անիրական սահմանները մեր ընկալումների հնարավորությունից դուրս են:

Որտե՞ղ էր ավարտվում իրական կյանքը իր բազում անհայտներով՝ ենթակա Նարեկի վիթխարի, անթերի ընկալմանն ու գերազանց վերլուծությանը, ու ամեն ինչ տեղն էր դրվում՝

առանց դույզն-ինչ տառապելու – ըստ նշանակության բաժանվում էր բանիմաց գործնականի – շոշափելի տեսության:

Եվ բարեբեր հեղեղի պես մտածումների, իմաստության անվերջանալի քարավանը ախորժելի այցելում էր նրան, ու գիշերվա խորհրդավոր լռության մեջ բացվում էր մտքի գանձարանների դռները՝ խոհերի սփյուռքը դարձնելով՝ ճանապարհ, որի աստվածային խորհուրդը նրան հասցնելու էր լույսի – բանականության անձեռակերտ տաճար, որտեղից կրկին ու վստահված առաքվելու էր մեզ՝ որպես Ուսուցիչ՝ իր սուրբ խոսքով ուսուցանելու – վկայելու:

Կյանք կոչված խաղի կանոնները բնության պարտադրված նվերն են: Մնապարծորեն դիմադարձ չկանգնենք, այլ խելոք ու խելացի լինելով՝ ընդունենք այն, ինչպես որ կա, որպեսզի ժամանակից շուտ չվտարվենք նրա խաղադաշտից, այլ մշտապես վայելենք բնության բարեհաճ վերաբերմունքը:

Դպրոցական ավարտական գանգի վերջին գուլալ ղողանջի հետ ներդաշնակվեց նրա գեղեցիկ, անթերի խոսքը՝ շաղախված ինքնատիպ լեզամտածողությամբ, ու համարձակությունը իր խելացիությունն էր՝ հեռու դեկորատիվ լինելուց:

Դեկորատիվ զգացմունքները դատապարտված են դեկորատիվ մահվան:

Ամբողջովին բնական էր ձ-ի մեջ, բայց բանական էր էությանմբ. խոսքը նեկտարաբույր էր, միտքը՝ իմաստուն, պահվածքը՝ անթերի, տրամաբանությունն ու վերլուծությունն ի ծնե իրենն էր, իսկ արվեստն ու գիտությունը տիրույթ էր, ուր դիմադիր չկար, – իր մեկնությունը ճշմարիտ էր ու վերջնական:

Եվ նրան առնչված ճշմարիտ ուսուցիչները, ովքեր կարճ ժամանակով նախապատրաստեցին ուսումնատենչ պատանուն բուհական քննություններին, հիացան առաքինի իր բոլոր շնորհներով – հետագայում անկեղծանալով՝ վկայեցին:

Եզակի, անսովոր անհատականությունն էր Նարեկը: Նա աշխարհ եկավ եզակի՝ ֆիզիկապես ու տաղանդավոր, կյանքից հեռացավ եզակի՝ չմեկնաբանված ու չկրկնված, իմ հիշողության մեջ մնաց եզակի՝ ընդմիշտ լուսավոր ու պայծառ /Ա. Ոսկանյան, հայոց լեզվի – գրականության ուսուցչուհի/:

Նարեկ Դովսեփյանը բոլորանվեր ներծծված էր բնագիտությամբ ու մաթեմատիկայով: Նրա էությունն ու աշխարհայացքը անբաժանելի էին այդ տիրույթում: Առանձնահատուկ ուժ էր, անխորտակելի կամք՝ չչեղված բնականությունից ու բանականությունից/2. Ափիսյան, մաթեմատիկայի ուսուցչուհի/:

Ինչ էլ ասեմ, ոչինչ ասած չեմ լինի, պարզապես հրաշամանուկ է:

Եվ

Իր ներկայությունը դրական առումով ճնշող էր. պատճառը անսահման գիտելիքների – հզոր վերլուծական մտքի առկայությունն էր /Գ. Փաշինյան, ֆիզիկայի ուսուցիչ/:
Սաշա Դովսեփյան-----

Հրաշամուկ էր Հայոց մեծ տիկնոջ՝ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի բնորոշմամբ, սակայն խոնարհության մեջ կատարյալ էր, զուսպ, ամբողջական, ինչպես իր խոսքը՝ տիեզերախորհուրդ – իմաստուն:

Հավատացեք առաքյալներին, որովհետ– նրանք են վկայում, թե Մարդու Որդին ուսուցիչ է:

Եվ հավատաց ու սիրեց մարդկանց այն որդիներին, որոնք նվիրյալներ էին լույսի – ուսուցիչ էին՝ կարգված ձեռամբ բանականության, ու նրանց մասին խոսեց բերանացի ու թողեց գիր անմնացորդ նվիրվածությամբ – երկյուղածությամբ, քանզի

Մի՞թե ուսուցիչ կարող է համարվել նա, ով ազնվորեն կատարում է իր վրա դրված պարտականությունները, – ոչ թե նա, ով սրբորեն կատարում է իր պարտքը աշակերտի հանդեպ:

Եվ իր հանդեպ կատարած պարտքի դիմաց շնորհակալությունը ԵՊՀ Իջ-անի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետում նրա հանձնած փայլուն քննություններն էին:

Հուլիս շոգ ամսվա սպասվող ավարտը սկիզբն էր նոր սկսվող փորձության, որը սպասված, անխուսափելի անհրաժեշտության պես եկել ու համառ բախում, ստուգում էր իմացությունների դուռը, որը, սակայն, փակ չէր ոչ չարակամ թշնամու, ոչ էլ սրտաբաց բարեկամի համար, այլ միայն առատության եղջյուր էր ու արժանի պարգ– յուրաքանչյուրին, բայց ոչ մեծամիտ տգետին ու անարժանին, այլ վարքով խոնարհին ու գիտությամբ պատրաստակամին, ինչպիսին ինքը Նարեկն էր:

Իր հրաշալի ուսուցիչներին անկեղծորեն շնորհակալ լինելով այս ամենի համար՝ Նա հանգիստ ու արժանապատիվ, առանց ազդեցիկ բարեկամ-ծանոթներին իր համար խախուտ թիկունք դարձնելու – առանց գերիզուր դրամի գերիշխանությանը տեղյակ լինելու – ապավինելու՝ ընդունեց բաց, բայց անակնկալներով լի այս մարտահրավերը, որ կոչվում է քննություն:

Համալսարանական քննությունները, ինչպես նա– ցանկացած քննություն, նախօրոք հայտարարված պատերազմ է: Մնում է ունենալ գորապետի տաղանդ՝ շահելու հերթական ճակատամարտը:

Այո՛, ցանկացած մեծ կամ փոքր ճակատամարտ նրա համար շոշափելի ցանկալի իրողություն էր՝ պարտադրված, թե՛ նախատեսված, – Նա, ոչ թե ուժերի հրամայական լարումով, այլ անբացատրելի, ամբողջական նվիրումով պատրաստ էր աննահանջ մարտի՝ գենքի ընտրությունը թողնելով հակառակորդին, ունենալով միայն պատասխան գիտելիքների անսպառ պաշար, որի շնորհիվ իր ճշմարիտ ուսուցիչների – աստվածային բնատուր շնորհների կարողությունը իրավունք էր տալիս նրան՝ հաղթանակելով հաղթահարել, որպեսզի ճշմարտությունը գնահատականի տեսքով նվաճվի, ինչպես արժանի պարգ–ատրում:

Գարնանային խենթ վարարումներից խաղաղված գետը, տապից նեղվելով, գրեթե իսպառ մոռացած անցյալի հուշերը, իր սակավ, ծուլացած ջրերը մանում, տանում էր անտարբեր, խուլ ու մունջ. գետահայաց փողոցի ալեբախվող կրքերը լարվել, շիկացել էին վարդագույն շենքի տուֆակերտ պատերի տակ՝ ի մի հավաքված ծնողների տարաբնույթ կարծիքների – ոչ անտեղի մտահոգությունների հորձանուտում, քանզի հենց այդ պահին որոշվում էր իրենց երեխաների տեղն ու դիրքը կյանք կոչվող խաբուսիկ եր–ույթի սահմանափակ, նեղ դաշտում՝ ստեղծելով անիմաստ պատրանք, թե իրենք ճակատագրի քմահաճ կատարողներն ու կերտողներն են, որը չհամառելով տրվում էր ամենագոր ժամանակին, իսկ մուտքից սակավաթիվ, հատ ու կենտ դուրս եկողների մեջ Նարեկը չկար, ու մտքակեր կասկածը անորոշության չափ ծանր ու ճնշող էր:

Գիտեի, միանգամայն վստահ էի նրա անխորտակ ուժերին, սակայն սովորական մահկանացու լինելով՝ ի՞նչ իմանայի, թե ինչ է կատարվում այդ պահին անթափանց քարակերտ պատից այն կողմ:

Այն բոլոր գործերը, որ մենք կատարում ենք հանուն փառքի, ոչինչ է՝ հանուն մարդկանց կատարած մեր բոլոր գործերի դիմաց:

Այս խորիմաստ տողերի ճշմարիտ մեկնությունը մի անգամ –ս ընդգծելու է հանճարեղ պատանու մարդկային կերպը, նրա անեզր, տիեզերախորհուրդ, ամենատես ոգին, որ անվերջ է ու լուսեղեն:

Նա դուրս եկավ քննասենյակից բավական ուշ – պատճառն իմանալու իմ տագնապալի հարցին պատասխանեց անսովոր, շատ անսովոր, խորհրդավոր հայացքով, – ամառվա տապի մեջ անսպասելի խաղաղ մի զովություն եկավ՝ հանգստացնելու համառ տագնապի անտեղի այն մնացորդները, որոնք ուշ աշնան մշուշի պես անթափանց շղարշել, շրջափակել էին իմ տեսադաշտը:

Իսկ հետո աջից ու ձախից ոգեշունչ տղաներ – հեզանազ աղջիկներ, արժանապատիվ հայրեր ու գորովագութ մայրեր եկան մոտեցան, ջերմ ողջունեցին ու սիրով գրկեցին Նարեկին՝ որպես արդար, ազնիվ փրկարարի, որ ամենագոր հավատի ու կենսատու հույսի պես բաժանել, հասցրել էր

Վարք Նարեկի-----

քննասենյակում բոլորանվեր իմացության հրաշագեղ իր աշխարհի անսպառ, աստվածահաճո գիտելիքների ընտիր մարգարտահատիկները:

Նարեկը նրանց մեջ չէր տեսել իր երկրային հակառակորդներին – ուսման մեջ այդ պահի մրցակիցներին, այլ մաքրեմաքուր ուրախացել էր՝ նրանց մտահոգ դեմքերին ուրախ ժպիտ ու ծիծաղ տեսնելով:

Կյանքի դժվարություններին խառնեք ձեր հոգու կորովն ու ժպիտը, – դուք կշարունակեք ապրել:

Ի լուր աշխարհի ինձ բաժին հասած երկրային, թե՛ երկնային հպարտությունը հաղթանակի դրոշ դարձրած՝ վերադառնում էի գյուղ՝ Նարեկին այլ–ս ոչինչ չհարցնելով, միաժամանակ հաստատ իմանալով – վստահելով խորիմաստ լռությունը իրեն անբաժան գրուցակից դարձրած պատանու անբեկանելի անսխալականությունը:

Բայց – այնպես, ինչ–որ անդեմ, անորոշ մի կասկած, անսովոր, անշոշափելի մի զգացում սարսուռով, թաքնեթաքուն լցվեց ներսս՝ ստիպելով մի անգամ էլ հարցնել ու հարց տալ Նարեկին, որի քնքուշ հայացքի մեջ այդ պահին բռնկվում էին լուսավոր, անսովոր թախծի

հեռավոր կայծեր, բռնկվում ու մեկ էլ մարում էին տեսիլախաբ, հեռու, անորոշ տարածքներում:

-Ի՞նչ է պատահել, Նարեկ:

-*Ոչինչ*, պատասխանեց ու հետո շատ կամաց ավելացրեց.-

Մաթեմատիկա չեն սիրում շատերը:

Իզուր:

Տիեզերքն ամբողջվին գաղտնագրված է թվերի մեջ.

Երանի գաղտնագերծողին...

Որովհետ- ճակատագրի ընտրյալը հենց նա է՝ գաղտնագերծողը...

Այս «Երանին» արդեն ինքնաճանաչման ուղենշում է, ճանապարհ, որին ոտք դնողին տրվում է ներքին կյանքը ցմրուր ապրելու, աստվածային ծրագիրը լիովին իրագործելու շնորհը՝ արտաքին կյանքը, երկրային ընթացքը կարճելու, հաճախ ուղղակի հատելու դիմաց,- Նարեկի «Առաքելություն իմաստության տաճար» գրքի առաջաբանում գրում է բանաստեղծ, բանասիրական գիտությունների թեկնածու Ներսես Աթաբեկյանը:

-Խնդիրներից մեկը, կարծում եմ, ոչ թե սխալ, այլ նորովի եմ գրել,- պատասխանեց առանց փոքր-ինչ դեմքի արտահայտությունը փոխելու,- *հնարավոր է, սակայն, հասկանան ինձ - կամ էլ...,-* զգացի, որ իր գրույցը իր հետ է, թվերի շքերթաշար բազմության հետ է, ու կրկին վերադարձել է քննասենյակ - հրաշալի հիշողության տարողունակ ծալքերից փորձում է վերստին հետ շարժել ժամանակն ու կանոնակարգել եղածը,- *սակայն ճիշտ էր ինքնատիպ մեկնությունս, եթե միայն ըմբռնվի տեսակետս, քանզի արդյունքը չի կարող լինել պարզ գուգադիպությունը, այլ թվերի խորհրդի բացահայտումը՝ ըստ տրամաբանության...*

Նա լռեց...

Ոչինչ չհասկացա ինձ համար բարդ, շարահար մտքերից, ու այդ էր պատճառը, որ ոչինչ չհարցրեցի, քանզի առանց այն էլ օրը անասելի ծանր ընծայի պես դրված էր կյանք տեսած, հոգսաշատ ուսերիս, - հիմա իրեն հասկանալու իմ փորձը ապարդյուն, իզուր ջանք կլիներ - անմիտ հարցաքննություն:

Դեմքի խաղաղին իր հարուստ ներաշխարհի ներդաշնակ ակեբախության անաղմուկ հետքերն էին, որ մաքուր երկնքի պես շողարձակում ու մեկ էլ հանկարծահաս ամպերի թ-աբաց փեշով մի ակնթարթ ստվերում էին նրա անվրդով խաղաղությունը՝ առանց մեկնության:

Տնային լարված վերլուծությունը մաթեմատիկայի բանիմաց ուսուցչուհու հետ տարավ փակուղի, ուր անհանգիստ, տագնապալի, չարչարանաց մի գիշեր -ս համառորեն արթուն պահեց մեզ, որպեսզի վաղվա օրը լիարժեք մատուցվի՝ կամ որպես իմաստավոր շարունակություն, կամ որպես անսպասելի ընդհատված թռիչք, որի երազանքը ընդամենը մի երազաչափ խաբկանք էր՝ անորոշ, բայց, ավա՜ղ, շոշափելի:

Հաջորդ օրը մինչ գնահատականի հայտնի դառնալն ու հրապարակումը համալսարանում աշխատող մի հին ծանոթի միջոցով փորձեցինք շուտափույթ տեղեկանալ իսկությանը, որպեսզի հարկ եղած դեպքում հնարավորինս կարողանայինք հմուտ մասնագետ հրավիրել - անհրաժեշտության դեպքում էլ բողոքարկել առկա գնահատականը:

Սակայն...*Նրա շարունակվող ճանաչման հրճվանքը, լիաբուռ շնորհվում է մեզ...* Նույն տեղում, Ն. Աթաբեկյան/:

-Այս ի՞նչ է արել,- զարմանքախառն բացականչեց նա խոսափողի մեջ, իսկ հետո հուզված պատմեց, որ առաջադրված խնդիրը լուծել է դպրոցական ընդունված տարբերակով, սակայն զուգահեռաբար - անսպասելի տվել էր լուծման այլ, մինչ օրս անհայտ եղանակներ, - այս ամենը

Սաշա Հովսեփյան-----

համեմել բարձրագույն մաթեմատիկայի տարրերով՝ հավելած Նարեկյան խորաթափանց, ընտիր մեկնություններ...

Հաստատապես եմ ասում, շնորհյալ էր ի վերուստ, քանզի երկրի, որ բնակչին էր տրված, մտքի երկրային ավազանը իրենը դարձնելով՝ պատնեշել ու հերքել է գավառական մշուշված մտածողության թանձր սահմաններում մոլորյալ ու անկյալ մի քանի վարժապետների՝ մուտք ու ելք չունեցող անճանապարհի մտածելակերպը, - Աստվածատուր անսպառ շնորհներին ուրախությամբ - սիրով հավելել իր ճշմարիտ ուսուցիչների ազնիվ խորհուրդները՝ մտնել ասպարեզ - շատերի մեջ ճանաչվել հաղթանակող:

Եվ հիմա ինքն էր ու ինքը, - համալսարանի պատից կախ ազդարար ցուցակը ս-ով սպիտակի վրա, ամենավերին տողում հաստատում էր այլ-ս, թե ամենաբարձր նիշերն իրենն են - ուրախ լուր ու ավետիս էր տալիս մեզ - նրանց, ովքեր այս գործում բերել էին շնորհն իրենց - մասնակցությունն անմնացորդ:

Բայց նա ինքը չհպարտացավ այս ամենով, այլ խոնարհաբար – սիրով խորասուզվեց ֆիզիկայի խնդրագրքերի մեջ ու գնաց՝ վստահաբար բացելու անհայտի դուռը, որի վահագնակուռ ծխնիները հավերժ փակ մնալուց, ուշահաս ժանգից համրացել մնացել էին, ու այդ ամենը կատարեց պարտաճանաչ աշակերտի պես՝ ոչ միայն իր, այլ նա– մեզ համար շեշտելու այն տեղն ու դիրքը, որ կանխորոշված էր, քանզի գտնում էր՝

Կյանքը վազք է՝ արգելապատնեշներով...

Յուրաքանչյուր հաղթահարված արգելքին հաջորդում է նորը, ավելի դժվարամատչելին...

Վտիտ մարմին էր, ու այդ փոքր տարածքում կամքը գերամուր ու կարծր նյութ էր՝ անտեսանելի, հզոր հոսքով, ինչը հեշտությամբ շարժման մեջ էր դնում աշխարհաճանաչողությունն ու աշխարհընկալումը – նրանց բազմաշերտ ոլորտներից ամենանախընտրելին ընկալելով՝ ճշտում-ճշգրտում էր ճանապարհներից այն միակը, որը եզակիության բացառիկ իրավունքով իրենն էր, ու տերը ինքն էր:

Ցանկացած քննություն իր համար ոչ թե փորձություն էր, այլ հրավերը ուրախության, որտեղից վերադառնում էր տվյալանքներով, անչափելի խորքերից նոր մանրամասներ պեղած, – շնորհում էր լույսի աստղաշաղախը ոչ միայն խնդրողին, այլ– անխտիր բոլորին:

Երկրորդ քննությունից դուրս եկավ առաջինը՝ անամպ դեմքին անսովոր արծաթափայլ, իսկ հետո իրենց սիրասուն որդիներին – հուզասիրտ դստրիկներին սպասող տաճնապահունց ծնողների մի զգալի զանգված եկավ, տարերքի պես օղակեց նրան խուռներամ հարցերով, – նա ոչինչ, գրեթե ոչինչ չպատասխանեց, այլ ճակատագրին հիւժ՝ խոնարհեց լուսաշող հայացքը – երկնափեշերի անըմբռնելի սահմանների նշխարաչափ, մի պատառ հանապազօրյա հացի պես իմաստավորելով խոսքը՝ կամաց, շատ կամաց, արձագանքեց ի պատասխան.

-Ճշմարիտ եմ ասում, հավատացեք նրանց ուժերին անկեղծորեն, – ձեր կորովի, անտեսանելի մասնիկների գիտահոսքը նրանց ուժ կտա – եռանդ...

Չարմանալի այս խոքերի համեստ հեղինակը հուզված, բաց ի բերան ծնողների համար արտաքուստ պատանիացող երեխա էր, սակայն նրանցից գուցե շատերը այդ պահին մարգարեանալով՝ զգացին ճառագող, ի շրջանս յուր տարածվող նրա անտեսանելի լույսը, որովհետ– չհամբերելով՝ ասացին.

-Երանի Տիրոջը:

Իսկ տերը բաժանվել, երկփեղկվել էր մարմնակերտ – հոգ–որ հակադիր բ–եռների, որովհետ– նա, ով երկնքում իր թագավորության մեջ էր, նախապես գիտեր ոչ միայն կատարվածը, այլ նա– կատարվելիքը, քանզի ժամանակ սահմանելով՝ կանխորոշել էր ծնունդն ու մահը – հիմա հանգիստ իր բարձրից հետ–ում էր տիեզերական ժամանակի թիկ–թակին:

Իսկ երկրային տերը խլացել ու չէր լսում ո՛չ ամառվա տապից մեղկ հրապույրը կորցրած գետի անմիտ, անշշուկ մնչոցը, ո՛չ էլ տաք, փոշեհամ, կույր քամու անսպասելի ու կտրուկ հայտնվելը, – անտարբեր էր, ինչպես անծաղիկ անապատը անձր–ից առաջ, քանզի հպարտությունը երկրային մարդու ամենահարմար թունավորման հրաշալի միջոց էր, հատկապես, երբ նրա կամքին հավաստի բռնացող չկար, ուստի ոչինչ չէ՞ր միթե այն ամենը, ինչը դիմանկարի կամ չպարտադրված բնանկարի ձ–ով կազմում էր այդ պահի միջավայրն ու շրջապատը:

-Ի՞նչ կասես, Նարեկ,- հարցրի երկրային մարդու անցողիկ մտահոգությամբ՝ նախապես փորձելով գուշակել պատասխանը:

-Թվերը մեր ուղեկիցն են,

Հաշվարկները՝ մեր եությունը.

Բուրգերի առկայությունը՝ դրանց վկայությունը...

Իսկ հետո լռությունը եկավ խոնարհ հարսի պես, դուռը ծածկեց իր ետ–ից, գնաց նստեց մի անկյունում՝ սպասելով, բայց ոչ երբեք սպասեցնել տալով, որովհետ– հարցնողը ես էի, ու ինձ համար

Վարք Նարեկի-----

ամեն ինչ անհասանելին չմեկնաբանելու կարողությունն էր ու ներըմբռնումը, որ այդ պահին լքել էր կանխազգացումս՝ թողնելով սոսկ այն ամենը, ինչը կարող էր հասու լինել միայն սովորական մարդկային բանականությունը:

Օգոստոս ամսվա մեջ ծվարած մնացորդ մի քանի օրը սահմանափակ ու խառնիխուռն, անդիմադիր տրվեցին ժամանակին՝ քիչ-քիչ կրճատելով Նարեկի անհամբեր սպասումներն ու պատանեկան տազնապները:

Մի խորախորհուրդ երեկո, որ թվում էր՝ արտակարգ ոչինչ չէր խոստանում, դանդաղահաս մարեց ու ասես հաշտ կուլ գնաց գիշերվա ս-աշող շղարշում, ճրագաթարթ աստղերի անսովոր առատության երկնածիրում՝ երկուսիս էլ տրամադրելով՝ առօրյա կրկնվող դեպքերն ու մի-նույն դեմքերը փոխարինել ու ձ-ակերպել վերացական մի տարածքում, որտեղ ամեն ինչ սահմանվում է մեր մտքերի հնարավոր թռիչքի տեսադաշտով՝ թող որ ոչ իրական, բայց երազանք ցանկությունները ամուր շաղախելով բացակա անհայտին ու ցանկալի ապագային:

Եվ գուցե այս էր պատճառը, որ խլրտացող մի միտք անընդոստ հրամայականի պես ստիպում էր հարցնել, թե հատկապես ի՞նչը Նարեկին դրդեց կողմնորոշվելու դեպի գիտություն:

Գիշերային անամպ երկնքում՝ տիեզերքով մեկ սփռված աստղերի գեղեցիկ ու խորհրդավոր գոյությունն ինքնին արվեստ է:

Բնական գիտությունը հնարավոր այն բանալին է, որով բացվելու է նրանց գեղեցկագույն էությունը՝ տարածության - ժամանակի մեջ պատասխանելով բոլոր «ինչուներին»:

Եվ հանդիպելով իմ տարակուսած լռությանը, որը ավելի շատ բառատեսք չստացած ու զորակցություն չունեցող հարցական էր, հավելեց.

-Արվեստը - գիտությունը միասնական են՝ որպես արմատ - էություն :

Ո՞վ էի ես, - ի՞նչ կարող էի ավելացնել կամ առարկել, երբ ասվածը բնածին ոսկու պես ամբողջական էր, ու նրա փայլը միայն կույր ձ-ացողը կարող էր հերքել՝ իրեն հավատարիմ դաշնակից ունենալով չարամտությունը, որովհետ- Նարեկի հետագա բոլոր մտքերը մի անգամ -ս, առանց դուլզն-ինչ չափազանցության, բացահայտում ու մեկնում են թե՛ երկրային, թե՛ երկնային առեղծվածը՝ չգիտես որպես տիեզերածնության՞, թե՞ արարչագործության արդյունք:

Իսկ հետո ահավոր մի սարսուռ, շաղախված շնչահեղձ տապին, եկավ արշավելով ու անկեղ- պաշտպանությունս տապալելով՝ փորձեց գերել անհնազանդ հոգիս ու մարմինս - չկարողանալով՝ ի տրիտուր որոշեց անհանգիստ ու անորոշ պահել հորիզոնից այս կողմ այն ամենը, ինչը կազմում էր մտածողությունս:

Սեպտեմբերը, անաղմուկ ու անսկատ ձորն ի վեր բարձրանալով՝ եկավ ինչպես ամաչկոտ, թե կարոտյալ սիրահար ու գիշերը ծնրադիր չոքելով անտառի զմրուխտե փեշին՝ քաղցր ու անուշ պատմեց այս փոշեհատիկ աշխարհի ամենագույնեղ, բայց ամենատխուր հեքիաթը միայնակ աստղի լուսավոր հ-քից սլացող երիտասարդ կռունկի մասին...

Իսկ երբ օրը բացվեց, խաթարված էր ամեն ինչ, - ծառերի գունատված, նուրբ տեր-ների վրա ծալ-ծալ մշուշե ծվենները ափ գտած ձկների պես զարկվում էին անհանգիստ օդեղեն ալիքներին, վար ու վեր թափանցիկ թ-երով հարվածում, ցայտեցնում էին ջուրը, - կաթիլները աղե արցունքների պես շարվում էին՝ որպես արթուն հուշ գիշերվա սրտամաշ պատմության այտերին:

Բայց ցայգալույսի առաջին շողերի հետ ժամանակի հաստատուն ձեռքը աներեր ու փութկոտ հավաքեց տխրության ամպախառն, թաց փեշերը - բռունցքի մեջ անվարան սեղմելով՝ ի մի տարավ, փակեց վախեցած ձորերի քնատ, մութ աչքերի մեջ, որպեսզի առաջին կուրսեցիների առաջին տոնական օրը չփշրվի անպատասխան առաջին սիրո պես, այլ ներդաշնակվելով ճառախոսների բարի ցանկություններին՝ դառնա իրողություն - հրաշալի ապագա:

Չափազանց տխուր ու թախծոտ մի սովեր անասելի մտահոգությամբ անշարժացել- մնացել էր Նարեկի անժպիտ դեմքին՝ ասես երբեք միտք չունենալով թ-ել ու չվել այդ հրաշալի պայծառ կերտվածքի լուսավոր, անմեղ տարածքից, ու կարծես մեկընդմիջտ տրված էր նրան՝ անմնացորդ զգայուն լինել այնքան, որի սահմանները անորոշ-անեզր են, ինչպես տիեզերական անչափելի տարածքները, որի բազմախորհուրդ ակոսներում հենց ինքը իր արդար ափով ցանել էր իմաստության սերմեր, - հիմա ծիլ տվող միտքը նրան, ավա՜ղ, կտրել էր սովորական երկրային

Սաշա Դոլսեփյան-----

առօրյայից՝ տանելով ***անսահմանություն***, ինչի մասին, թվում է, երազում էր, ***բայց գործում էր իրատեսության սահմաններում:***

Բազմության մեջ նա միակ ու եզակի ընտրյալն էր՝ անմասն երկրային այս ուրախությունից, քանզի մի՞թե ժամանակավորը – անցողիկը կարողացել էին հիմաստության Տաճարից եկած պատանի Առաքյալին եր–ալ մեղկ մերկությամբ, ուր ամեն ինչ հիշեցնում էր խավարի չարագույժ թագավորության մասին՝ չարքապատկեր ու դատարկ սառնությամբ:

Մարդուն տրված երկրային ժամանակը խիստ սահմանափակ է:

Օր-ցերեկները ավելի քիչ են, քան օր-գիշերները:

Գիշերները տարածության – ժամանակի մեջ անսահմանափակ են, անժամկետ...

Արթուն մնանք՝ որքան հնարավոր է...

Արարենք ցերեկներ՝ հավերժական գիշերվա սահմանը իր տարածքում կարճելու համար:

Երկրային մարդու համար անհրաժեշտ տխրության բազմիմաստ մեկնությունը անհանգիստ չարեց ինձ, սակայն հարցի ծնունդը եկավ անսպասելի, ոչ թե պարզապես մի բան ասած լինելու համար, այլ եր–ի ճակատագրով փորձության ենթարկվողի ընտրությամբ:

-Տխրելու պատճառ չունես,- ասացի:

-*Չունեմ*,- ժպտաց, – ժպիտի մեջ թ– առած լույսը պարուրեց ինձ:

Հաջորդ հարցը, չճնված, մարեց շուրթերիս, սակայն տարածության մեջ նա ընկալե՞ց, թե՞ կարդաց միտքս:

-*Որովհետ– սա կյանք է*,- պատասխանեց իմ փոխարեն՝ շարունակելով ժպտալ:

-Ո՞րն է իմաստը,- հասկացա, որ հարցերը ծնվում են ինձնից անկախ:

-*Որովհետ– կյանքի հրամայականը ոչ միայն մեր ֆիզիկական գոյատ–ումն է՝ հանուն ապրելու, այլ նա– ուրիշներին ապրեցնելու առաքելությունը՝ ի սեր կյանքի հարատ–ության:*

Ո՞վ կարող էր առարկել՝ այս պատասխանը լսելով, եթե խուլ ու կույր չէր ի ծնե ու անկարող էր տեսնել խավարից զանազանված լույսը, որ ճերմակաթ– սավառնող իմաստություն էր, ու ասողն էլ՝ նույնքան իմաստուն:

Տաք աշունը փակ ծրարի պես փորձում էր թաքցնել այն ամենը, ինչը անորոշության մեջ անհանգիստ էր անում շփոթված թ–ավորներին, – երկնադաշտը մեկ եր–ում էր վրձնած, նրանց խախտված շարքերի կանոնակարգմամբ ու մեկ էլ դատարկ, անշնչավոր երկնագմբեթի տակ եր–ում էր, թե ինչպես ամպերը կատաղի ցուլերի պես գալիս զարկում էին գլուխ գլխի, – պինդ եղջյուրների կոշտ դղիրդը, որոտալով, վերից վար սեպվում էր տառապյալ հողի մեջ՝ դիվահար անելով ծառերի աշնանացող ճյուղերի մեջ պահմտոցի խաղացող անմեղ թռչուններին:

Ծեր, հնամենի թթենին հզոր, պինդ արմատները գորեղ մատների պես խրել էր հողի մեջ ու չտապալվելու համար դարափորձ ափով հողը սեղմել, կարծրացրել էր՝ դիմադրելով ու մաքառելով ժամանակի փորձախաղերի բացահայտ նկրտումների դեմ – ճյուղերը անսասան տարածելով՝ հովանի էր արել այգու մի փոքր հատվածը, ուր փայտե հին նստարանին մի օր, երբ Նարեկը վերադարձել էր համալսարանից, տալիս– առնում էինք աշխարհի չարն ու բարին՝ հետն էլ կում-կում սուրճ վայելելով լսում երանգափոխ տեր–ների մեջ թաքնված թռչունների երաժշտական անթերի կատարումներ:

Եվ հանկարծ.

-*Թռչնահամերգը չի կարող կեղծ լնել, եթե նրա խմբավարը բնությունն ինքն է...*

Ինչպես միշտ, այս անգամ էլ Նարեկի խոսքը ծնվեց անսպասելի՝ որպես անթերի խտացում, – հղկված ու ճշմարիտ՝ ինչպես միջնադարյան ոսկեծեռիկ վարպետների սրբագործ մանրանկար:

Այն աշխարհը, ուր ապրում էր ինքը, ընկալում էր որպես միասնական ու անբաժանելի, սակայն երբեմն կյանքի այս կամ այն կողմի ծանրակշիռ վերլուծությունը ստիպում էր նրան մասնատել ամբողջը – յուրաքանչյուր հյուլե-մասնիկի մեջ փնտրել էականն ու կար–որը, իսկ այնուհետ– ինչպես հմուտ վարպետ՝ ստեղծել շաղախի ու քարի այնպիսի անխախտ ներդաշնակություն, որը, տեսանելի ու շոշափելի լինելով, նա– անսպառ գեղագիտական հաճույքի անթերի կերտվածք էր:

Համալսարանը այդ աշխարհի մի մասն էր, նրա մի ատոմը, որի կազմությունը բաց ու բացահայտ էր, բախվող ու տրոհվող մի տեսադաշտ, որի հաստատուն հիմքը գիտության տարրն ու խտացված միտքն էր՝ կառուցված ոչ եր–ակայական խաբկանքներից, այլ ճշմարիտ խոսքից, ուր վերլուծությունը՝ թե հասարակ, թե արտառոց դեպքերի, անկողմնակալ բնութագիրն էր՝ երբեք չանտեսելով գիտության այրերին ու միշտ մնալով գուսպ, հակիրճ – իմաստախոս:

Պատահու՞մք խոսում է դասին՝ իր կոչումից ելնելով համապատասխան նյութի մասին:

Ուսանողն ուսանում է այն ամենը, ինչը մատուցում է դասախոսը՝ իր կոչումից ելնելով ի գիտություն:

Այն ուսանողը, որը ճիշտ է ըմբռնում այս ամենը, ժամանակի մեջ աննկատ մոտենում է իր նախանշած ապագային:

Ավա՜ղ, իսկ ճակատագիրը թաքնեթաքուն Նարեկի համար մեկընդմիշտ սահմանել էր անվերադարձ մի ճանապարհ, որի հաստատուն ավարտն ու անփախուստ եզրը վաղօրոք նախանշած ապագայի ճիշտ հակադիր կողմում էր, ու եր-ի թե ինչ-որ տեղ կար, գոյություն ուներ մոտ – հեռու, բայց շոշափելի մի զգացողություն, թե ամենքս, ժամանակի հարկադիր վարձակալները լինելով, հակառակ մեր կամքին՝ վաղ թե ուշ ենթարկվելու ենք իր առաջադրած ցանկացած պայմաններին:

Եվ իզուր չէ, որ ժամանակ անըմբռնելին ներկա է ցանկացած պահի բոլոր մեր գործերին, – չկանչված նրա վկայությունը չնկատվող աննյութ զգացմունք է, որի համառ փսփսոցի անվերջը կարող է խեղել կամ տարիանել մեզ մեր մտածողության տեսադաշտից ու տանել-տանել՝ նյութեղեն մի տարածք, ուր չենք եղել երբեք, ու այնտեղ մեզ սպասողներ չկան:

Եվ մի՞թե ցանկացած ճանապարհի միակ նպատակը կամա թե ակամա երկու կետեր կամրջելու մեջ չէ, այն էլ՝ տարածության խախտման հաշվին, որտեղ արագությունը մտքի սլացքի փոխարեն մոլորվում է դար ու փոսերի որոգայթներում – մի կերպ դուրս պրծնելով՝ ճգնում է ի կատար ածել ու խաղալ իրեն վերապահված դերը:

Նարեկի համար նույն տարածքի անիմաստ երթ-եկումը – բնապատկերների տարվա չորս կատարումների կրկնությունը կարծես թե ներքուստ համոզեց նրան՝ հետ խլել ժամանակից հնարավորը՝ հարմարվելով մի տարաբնույթ միջավայրում, ուր մարդկային հրաբերությունների ներկան նման էր Բաբելոնյան աշտարակաշինության տեղական կրկնության գրեթե հաջողված փորձին:

Սակայն այս ամենը իր ընտրությունը չէր, այլ փորձություն էր, որ եկավ՝ քննախույզ ստուգելու ընտրյալ պատանու հոգու կորովն ու իմացության սահմանը – համոզվելով այս ամենի մեջ՝ թ-քաշ տալով, հանգիստ հեռացավ վստահ, թե արժանի է նա Աստվածընտիր կոչվելու, – ճիշտ ու ճիշտ է, որ հրաշամանուկ է:

Եվ որովհետ- այս ամենը նրան հատկացված երկրային կյանքն էր՝ հզոր ու կանխորոշված, իրավունք ուներ, այո՛, իրեն արքա կոչելու, քանզի.

Նա՛ բնատուր ձիրքով այդ պատանին, կարողացավ շփոթի մատնել ժամանակը, չհաշտվել նրա անտարբեր ընթացքին՝ իր խոհը, իր մեծ երազանքը թողնելով կյանքին ու երկրայիններին: /Վահագն Սարգսյան, բանասիրական գիտությունների թեկնածու, «Հայաստան» հրատարակչության տնօրեն/:

Իսկ երկրայիններս չնկատեցինք նրան, ով եկել էր ոչ թե պարզապես քարոզելու, այլ բացահայտ տալու անցյալ- ներկա- ապառնի ժամանակների խտանյութը՝ ոսկեբերան – մեղրանույշ շարադրելով հինգ հարյուրից ավելի թ-ավոր խոսքերում – մաքսիմներում, տեսանելի անեզրության – անտեսանելի ծավալների մարմինն ու կերպը հեզորեն, մեկիկ-մեկիկ մատուցելով – անմնացորդ ուսուցանելով առանց դույզն-ինչ ամբարտավանության, մինչդեռ համառորեն խուլուհամր ձ-անալով՝ մենք ոչ միայն ունկնդիր չեղանք բանականության ձայնին, այլ ինքներս մեզ դատապարտեցինք չհասկանալու նրան, ով.

Այդ տարքում մեծերի հետ կնստի, խնջույքի թաս կռնի նրանց հետ... տիեզերքի առեղծվածը բացահայտելու հավակնությամբ, բայց ոչ հավակնոտությամբ /Դոմանոս Սահակյան, բանաստեղծ, մշակութաբանության պրոֆեսոր/:

Կույր ատելությունը կույրի մենաշնորհը չէ, այլ միայն նրանցը, ովքեր համառ անպատկառությամբ ծնրադիր պաշտում են սադրանքամիտ խավարը, – ծակունների մեջ, մութ տեղերում մեկ վայրահաչում են հանճարի դեմ, մեկ էլ պապանձվում համրանում են՝ փակելով իրենց ժանտ բերանները, փորձելով մոռացության ու լռության թանձրուկով պատնեշել ու շեղել նրա անկասելի սլացքը՝ հավատարիմ մնալով չարին՝ որպես տկարամիտ գործիքներ:

Իսկ չարի բազում բուր ու թերհոգի գավակների չարախինդ խուժանը հավաքել, հունցել էր մատնությունների թթխմորը, որովհետ- կասկածավոր ու ահասիրտ նկատել էր.

Բազում կոչեալքից, սակավ ընտրեալին/ Աստվածաշունչ/

– օր առաջ պատեպատվելով, դիվահար ճեղք ու ելք էր փնտրում՝ ծավալելու չարախոսություն – բամբասանք, զի հասկացել էր, թե հետո ի գորու չի լինի դեմառդեմ հանդիպել աստվածընտիր պատանուն ու ազնիվ գոտեմարտում հաղթանակ տոնել, ուստի ծածուկ բախելով բոլոր բաց ու փակ ականջները՝ փնտրում, գտնում, շաղախվում էր բոլոր նրանց, ովքեր սողում, գալարվում էին գարշահոտ ճահիճներում – ատելով ատում էին լույսի առաջխաղացումն ու թռիչքը:

Մի՞թե այս ամենը առանց վերապահումների չի վերաբերում իմաստակ վարժապետների գանգապատկեր դրոշի ներքո ի մի հավաքված քաջնազարներին, որոնք, դաշնակցած ստին

ու կեղծիքին, ապարդյուն հետ էին հրում ժամանակը – թունոտ մեկնաբանություններ անելով հրաշամանուկի դպրոցական տարիների ազնվագարմ պահվածքի – անսահմանափակ անսովոր

Սաշա Յովսեփյան-----

գիտելիքների շուրջ՝ փորձում էին ներկայացնել այն դժգույն ու աղոտ, որոնք հեռու են ճշմարիտ իրողությունից – հակադիր են՝ ինչպես խավարն ու լույսը:

Յոգու – հոգ-որի բարդույթը մի՞թե վերացական մի դաշտավայր է, ուր խավարի կույր զավակներից ամեն մեկը կարող է թաքնեթաքուն շաղ տալ իր մթար անկումների հրեշածին, ոչուփուլ սերմերը՝ ակնկալելով հավերժական փառք, սակայն երբեք չմտածելով, թե իրականում ինչ է պտղելու սնանկ փառատենչությանն ի պատասխան:

Միայն հանճարին ու իմաստունին վերապահված հատուկ մենաշնորհն է՝ մի հպումով արձանագրել ժամանակը – ժամանակավորը՝ նույնիսկ ամենափոքր պահերի մեջ՝ զարմացնելով:

Ի՞նչ զարմանալի զուգահեյություն:

Մարդը – անասունը նույն արարչագործության արդյունքն են:

Սակայն հավերժ ընտրյալ պատանին, հավատարիմ ամենագոր արարչագործության մարդ տեսակին, սկզբից մինչև՝ վերջ մնաց ազնիվ, խոնարհ, բարի, ոգեղեն, անսպառ ու լուսավոր էություն – բազում վկայություններից գոնե այս – մի քանի անկողմնակալ հիշատակումը որքան անհավանական, նույնքան ճշմարիտ են, ինչպես կյանքը – մահը:

Երկրային օրերի բնական շարժումը արտաքուստ վերընթաց էր, ներքուստ՝ չկասեցվող շտապողականություն դեպի վար, ուր ար-ի մաքրեմաքուր լույսը փոխարինվելու էր թանձր խավարի, – ժամանակի վերացականը անխափան շարժվելու էր տիեզերական չափանիշներով՝ որպես հավիտենականության հրավեր – երկրի վրա հիշողությամբ ապրելու անբեկանելի որոշում:

Յոգեբանները վաղուց են նկատել, որ հանճարը տարիք չունի՝ ոչ ֆիզիկապես, ոչ է հոգ-որ թռիչքներում.../ Ռ. Սահակյան, բանաստեղծ, պրոֆեսոր/:

Իրոք, անքանակ ու շատ են արժանահիշատակ դեպքերը, երբ շոշափելի ակնհայտը մնում է բացարձակ անհասկանալի, իսկ հետագա միտք-վերլուծությունը՝ բացահայտման անհաջող մի փորձ, – Նրա ճշմարիտ ապրած երկրային յուրաքանչյուր օրը տարվա տ-ողությամբ տանում է մեզ իր իսկ ստեղծած խտացումների անեզր թագավորություն, ուր ամեն ինչ չէ, որ կարող է ըմբռնել մարդկային միտքը, սակայն ներգագցողությունը համոզում է, թե այստեղ լույսի ծնունդն անսպառ – հուսատու է, ինչպես ցերեկների արարումը:

Բարդ եր-ույթները՝ երկնա-երկրա տարածքներում մշտահուլով դեգերող, անհրաժեշտաբար թե հարկադրաբար բանական մարդու անբաժան ուղեկիցներն են, հատկապես, եթե նրա օրվա ելքերն ու մուտքերը անկողպեք ու բաց են, – հատերի բազմությունը անընդհատ տրոփում, մաշում է երկու շեմերն էլ՝ ներմուծելով կամ արտահանելով բազմաթիվ թնջուկներ, որոնք հասկանալու համար ժամանակ ու ջանքեր են պետք:

Սա ընդունենք որպես չեզոք նախապայման՝ հասկանալու փորձությունների քարավանաշար ընթացքն ու պատճառը, ինչը ուսանողական կյանքի առաջին իսկ օրից թ-աթիչք ու հաստատուն եկավ՝ ստուգելու Նարեկի մարդ տեսակի կստվածընտիրությունը:

Քաղաքամայրը վարդագույն մարմին- կատարելություն է, ու նրա գործվագույթ սրտի բոլոր ձիգ ու պիրկ արյունատար անոթները կամ ուղղագիծ, անխաբ գնում միանում են այնտեղ, կամ էլ զուլալ, քչախոս առվակի պես սկիզբ առնելով ու ելանելով այնտեղից՝ գրեթե աննկատ բերում-խառնում-շաղախում են զգացմունքներ, որոնց մեջ ծնվում-ծավալվում-ապրում է մեր պատանեկան անխառն երազանք-նպատակների առկան – կամ հեռու-հեռակա իրականացումների անդարձ կորուստները՝ մատուցելով մեկ անափ հրճվանք, մեկ էլ ցմրուր դառնության բաժակ՝ թողնելով մեզ կես ճանապարհին:

Լսարանի քառանկյուն կամարների տակ անմարմին թ-ածող բարձրագույն խոսքն ու հրաշագեղ ծիծաղը, երփներանգվելով, սահուն փոխանցվում է շրթից շուրթ, ասես քնքուշ աղջիկ է գեղածիծաղ ու սինու վրա բերում մատուցում է սրտանց խաղողահյութ-մաճառը, իսկ թափանցիկ խորհրդավոր ներսում մի կերպ օղազսպված գինեարք առողջ ցլիկը կճղակով անհամբեր հարվածում է գավաթի նուրբ բյուրեղյա պատին, ու ապակին արձագանքը զրնգ-զրնգ տանում ազդարարում է ի լուր՝ որպես հերթական կենաց, բարեմաղթելով կամոք – մարմնով ամուրներին՝ գրավել գիտության անհայտ բերդերն ու առարկություն չընդունող տիրակալի պես հայտարարել, թե՝ գիտությունն այդ ես եմ:

Խոսք ու գրույցի հայտնի – անհայտ շերտերը տարբեր ու տարաբնույթ են, ինչպես Հայաստան աշխարհի դեմք-դիմապատկերը, ու ամեն կողմից հավաքված եկածները իրենց մի բուռ հայրենիքի անսխալ կրկնություններն են՝ մեկ չափազանց խիստ ու մռայլ, մեկ կասկածելի պայծառ ու ծիծաղկոտ, մեկ էլ՝ շեշտերի չընդունված, անսովոր դասավորությամբ – ծիծաղ ու ժպիտ նախապատրաստող:
Վարք Նարեկի-----

Ահա քաղաքամայր արժանի մեծարվածի մի քանի նորածիլ բեղամորուս պատանյակ եկվոր ուսանողներին տեղի չափազանց որոշակի հասկանալի – որոշակի ծիծաղելի խոսվածքը – դեռ աշխարհը երազից չտարբերած միամիտ աղջիկների բարձրաշխարհիկ եր-ալու անհարիր ձգտումը տարօրինակ, ոչնչով չներդաշնակվող գույների անիմաստ համադրման պես ամուր վրձնվել էր նրանց ականջներին ու շուրթերին, արհամարհական, ծալ-ծալ ոլորվելով՝ դարձել սրահար անող անգութ խոսք, իսկ ականա վիրավորվածների լուռ հեծկտոցը՝ ուղղակի սիրտ կեղեքող:

Մի՛ ծաղրեք այն ճշմարտությունը, ինչը պարզության մեջ ձգտում է կատարյալի, մերժեք պարզամտության գերիշխանությունը, եթե միտումը աղավաղող նպատակն է:

Եվ ազնվագարմ իր ճշմարիտ կեցվածքին մշտապես հավատարիմ՝ այսպես էր պատասխանել մեծամիտ պատանյակներին երկնային գորությամբ լցված հրաշամանուկը՝ պաշտպանելով տեղաբնակ աղջիկներին, ապա ժպիտով – հաշտվողաբար հավելել:

Ոչ ոք իրավունք չունի ծաղրել անձը, ուր տեսակը տարածքի թելադրանքին ներդաշնակ է ու ամբողջական:

Սակայն, ո՛վ արդարություն, մի՞թե ախորժելի իմաստության ըմբռնելին միշտ է դժվարահաս, – այն, ինչ չի ընկալվում – չի հասկացվում մի կողմի համար, արդյո՞ք միշտ է տեղիք տալու նախամարդու կարգավիճակ վերադառնալու – քարանձավաբնակի արյունառնուշտ հոտառությամբ յուրաքանչյուր շարժվողի ընկալելու իբր- որս:

-Եթե ցանկանում ես խոսքերիդ պատասխանը լսել, երեկոյան ութն անց կեսին կգաս «Քանդակների այգին»:

-Լավ,- համեստորեն պատասխանեց Նարեկը, ***-եթե ձեր ցանկությունն ընդամենը այդ է, կգամ:***

-Արի, եթե չես վախենում:

Տեսա, թե ինչպես սեպտեմբերի վերջին օրերի մոլոր նահանջող տաքը կամաց ծվատվելով հալվում էր երեկոյի մեջ, ու կիսամերկ այգին մշուշվում, հեծկտալով արձագանքում էր հատուկեևս անցնող ուշացած ժամադրվածների ոտնաքայլերի մարմող ձայնը, իսկ հետո լռում, վախվորած համրանում էր՝ պահ ու վայրկյան սպասելով իր ներսի խորհրդավոր երկունքին, չիմանալով, թե ծնվողը իրեն ծիծաղաշուրթ աչքալուսանք, թե հավերժ անեծք է բերելու:

Տեսա, թե ինչպես նրանք՝ մայրաքաղաքից եկած այն հինգը, աքլորանալով ու ծիծաղելով՝ փորձում էին իրար հրմշտելով վերստեղծել ներսի բացակա մարտական ոգին – հոխորտալով ձայնում էին, թե դաս են տալու այդ նիհարիկ, բայց համառ տեղացուն, – թե նրան ընդմիշտ պահելու են իրենց անսահմանափակ ազդեցության ոլորտում, – թե նա այսուհետ դառնալու է իրենց կամակատարն ու ստրկամիտ ենթական:

Տեսա, թե ինչպես նրանք՝ դարձյալ այն հինգ քաղաքաբնակները, մտածելով, տալիս առնում էին՝ միտք ու կարծիք փոխանակելով – անվերապահ հավատալով, թե նա, ում կանչել էին հրամայաբար, չի գա, զի եր-ի գուշակում էր, թե համառելու դեպքում դաժան ծեծվելու էր, կամ էլ հավաքել բերելու էր հայրենակիցներին ու գալու էր մեծաքանակ ամբոխով, որպեսզի հեռվից հեռու հոխորտա – մյուսներին գրգռելով՝ հրահրի անզիջում ծեծ ու ջարդի, իսկ ինքը, թաքնվելով նրանց թիկունքում, մնա անձեռնմխելի:

Տեսա, թե ինչպես մեն-մենակ ազնիվ գառն հանգիստ ընդառաջ է գալիս դաժան փորձությանը՝ առանց փոքր ինչ երկմտելու, թե նրանք շատ են, բազումք են, ու ինքը սովահար ոհմակի դեմ ձեռնունայն ու անկարեկից զոհ է, – իր ու նրանց միջ- տարածքը հազիվ մի քայլաչափ է:

Տեսա, թե ինչպես կիսաթեք, բայց հազվագյուտ ազնիվ, անաղարտ իր հայացքի անբեկանելի, ճաճանչափայլ լույսը առաքվածի պես եկավ, հանգիստ ծվարեց նրանց դաժան, պղտոր դեմքերի վրա ու մաքրեց, խապառ ջնջեց արյունած, խավարատենչ աչքերն ու հալածեց դեմքերի աղտեղի քությունն ու տեղը բարեսրտության սերմեր ցանեց, որ շինարար խաղաղությունը ժպիտ բերի ու լույս:

Տեսա, թե ինչպես այն ստոր, դավադիր հինգը անելանելի տրորվում, հուսցվում են շփոթահար, ասես անմարդկային հանցանքի մեջ ականա բռնված հրեշավոր վամպիրներ են ու գիտակից թե անգիտակից՝ պիտի մեղանչեն ու ներողություն խնդրեն իրենց անմիտ հոխորտանքների – սինլքոր պահվածքի համար:

Տեսա, թե ինչպես հույսի դեկը կորցրած, խաբիված նավի պես ափեափվում, խփվում են աջ ու ձախ, ու հեռվից անմեղ, զուլալ գառիս հայացքը հոգեբաղձ փարոսի պես կանչում բերում է աներեր ափ՝ հողմակործան, մարդակուլ ալիքներից խլելով այն հինգ ստահակներին, որ հիմա ծնրադիր գղջում են:

Տեսա, թե ինչպես հայացքակորույս անամոթները սեղմում են նրա սուրբ աջը – շփոթահար, կախալուխ ու մոլոր գնում հեռանում են ակամա՝ հետ նայելով ու տեսնելով նրան՝ Աստծուց առաքվածին, անսասան, ինչպես որ եկել կանգնել էր նախապես, – հրաշալի, չուրացված այն լույսը, որ նրանից ճառագում, տարածվում էր անպարագիծ՝ որպես մարդեղացած Սեր /ըստ եր–անաբնակ համակուրսեցի Հրաչի պատմածի/:

Սաշա Հովսեփյան-----

Պարզ աչքի մեջ ծնված հոգեշաղախ արցունքի անանուն տաք կաթիլը չբացահայտված ու անմեկնելի մի հուզիչ պատմություն է, ուր հետաքրքիր կյանքն ու անտարբեր մահը՝ անբաժան, շոշափելի իրողության պես միշտ միահյուս, շարունակում են իրենց չկասեցվող ընթացքը՝ նժարելով ու հավասարակշռելով անցյալը, ներկան – ապագան:

Ու այս ամենի վարպետ դիմահարդարը անկարելից ժամանակն է, երբ հենց ինքը, առերես – ներքուստ սիրաշահելով կամ հոխորտալով, հանճարեղ խմբավարի պես շարժում է կախարդական հրաշք փայտիկը՝ երաժշտությանը շարունակական ընթացք տալով, – կամ էլ հանկարծակի ընդհատում, քարանում է ամենագոր ձեռքը՝ հոգեզմայլ ունկնդրին թողնելով ահաբեկ, ճնշող ու դավադիր լռության մեջ:

Եվ երբ ճարպիկ ու աչքաբաց համկուրսեցին շփոթված, ընդհատումներով կցկտուր փորձում էր հավաստի ներկայացնել այս իրողությունը, մեկ-մեկ կարծես թե կորցնում էր բանականության – աներ–ույթի հստակ սահմանները, – արտաբերվող բառերը անարգել հոսում, ներառում էին նա– համր պատկերներ, որոնց խուռներամ մեկնությունը, երբեմն անհասկանալի լինելով, մի թաքուն, հանկարծահաս թռիչքով հմայում, հրապուրելով տանում էր անհասանելի երկնային բարձունքներ՝ որպես անխաբ վկայություն, թե Նարեկի պայմանագիրը ժամանակի հետ էր – անխախտ, իսկ անցյալը, ներկան – ապագան այդ պահից անվերապահ հանձնված ու տրված էր իր տնօրինությանը:

Մի–նույն Աստծո զավակներն ենք մենք.

Մի–նույն Բնության բառերը:

Թարգման լինենք Աստծո – Բնության միջ–,

Հավատանք մեր բաժին բանականին...

Որքան էլ իր անցնելիք երկրատարածքը սոսկ ինքը գիտեր, ու քանզի իր բաժին թագավորությունը բանականությունն էր ու հրաման–բացահայտումն էլ իրենն էր, ուստի իր վկայությունները ոչ երբեք ակնթարթների համար էին, այլ հավերժության – ժամանակի:

....Սակայն Նարեկ–Աստծո քարտուղարը դարձյալ ու կրկին ս–եռված է Մարդուն, նրա կեցությանն ու առաքելությանը, լույսին ու ստվերին, ծննդին ու վախճանին... /Ն. Աթաբեկյան/:

Ծնունդը խորհրդավոր էր, վախճանը՝ թվացյալ հեռու, կեցությունն ու ազնիվ առաքելությունը՝ կոչ Մարդուն, նվիրվածությունը լույսին էր, իսկ ստվերը որպես անառակ որդի հնազանդ եղավ՝ ուսուցանվելով նրա կողմից իմաստության տաճարի խորհրդով – ոչ հանդիմանությամբ:

Իսկ պայծառատես պատանին շարունակում էր ընթանալ առանց խոտորումների ու տեղապտույտների՝ իր իսկ ճանապարհով, որ պարզկա, տեսանելի էր օրվա տ–ողության բոլոր ակնթարթներին, – կուրաչք տեսնողներն էլ կամ խոսում, բամբասում էին գաղտագողի՝ նրա անդիմադիր հմայքը անտեսելով, կամ էլ չկամության մութ ակունքներից անհասցե պեղում, նետում էին իրենց ներսի աղտեղության մի ափաչափ ցեխը, սակայն նրա զարշահոտ ցայտերը կես ճանապարհին բախվելով հրաշամանուկի ճառագող ելությանը՝ սմքում, անուժ թափվում էին փոշիանալով, քանզի նա անդիմադիր շարունակում էր առաջանալ իրեն հատկացված երկրային ժամանակին համընթաց՝ փորձելով շտկել ու կանոնակարգել ծուռն ու այլակերպը՝ նրանց ներառելով ներդաշնակության շավիղներում – աներկբա իմաստավորելով տեսանելի տարածքում՝ ամեն ինչ աստիճանաբար, առանց տառապանքի, – հեշտությամբ հասնում բացում էր չգոյի խավար, անշոշափելի դարպասները – Աստվածընտիր կարողություններով մեկիկ–մեկիկ տարրալուծվող անհայտությունից հանում, դասդասում էր Չարի – Բարու սերմերը, – որպեսզի այս ամենը

չմոռացվի, ոսկետառ գրառում, հիշատակում էր ոչ թե իր համար, այլ բոլոր նրանց, ովքեր կարոտյալ էին – ուզում էին իմանալ Լույսի – խավարի գաղտնիքը:

Համակուրսեցու պատմածը իրապատում մի հատված է դրվագների այն հրասանդի, որի անվերջավոր իմաստածին պտույտը վերսլաց էլնում, խոյանում է վեր՝ անպատմելի զարմանքի – շարունակվող տարակույսի ալիքվող պահերով ցմրուր ապշահար անելով իրեն բացաչք ճանաչողներին, բայց իր բառաշխարհը, անձեռակերտ տաճարի նման կանչելով ճշմարտաբար, փոքր-ինչ մնում է քողածածկ, որպես երկրային մարդու համար սկսվող կենդանի խորհրդի – հավերժ խորհրդավորի կանչ, ուր օրինյալ ձայնի երկնամեղեդուն մի ու անբաժան է հայացքի լուսաշող հրամայականը՝ մնալով խորաթափանց, խորախորհուրդ – իրատես-իրավասու ի վերուստ:

Մենք ապրում ենք եռաչափ աշխարհում:

Երջանիկ լինելու համար մեզ պակասում է ընդամենը մի չափում՝ չորրորդ անհասանելին:

Չորրորդ անհասանելի գաղտնիքի բացահայտումը՝ նրա որոնումների ելակետն ու վերջնակետն էր, – նրա ապրած յուրաքանչյուր օրը դրա վկայության ապացույցն էր:

Վարք Նարեկի-----

Լրատվամիջոցները շատախոս կանանց պես անվերջ, անդադար շաղակրատում, բամբասում են՝ թքախառն միահյուսելով դեպքերն ու դեմքերը, որոնց հավաստի իսկությունը պարզաբանելը՝ հմուտ, բազմափորձ արշավախմբի պրպտումների նվիրյալ արդյունքում իրատեսական համահավաք հատիկը պեղելն է՝ ի լույս – աշխարհին կոչնակելով ազդարարելը, թե՛ եկե՛ք, տեսե՛ք, զարմացե՛ք – եթե կույր չեք ու նա – բուրժ, հետ խլեցեք ապրելու իմաստը – հույսի հետ թ–ավորված հասեք աստղասփյուռներին ու գտեք ձեր հավերժ երազանքի մոլորակն ու բանական եղբայրներին:

Եվ ահա օր առաջ շնչահեղձ լինելու ջանադրությամբ տեսլախաբ մշտահողով պատմությունները անսպասելի փաթաթվում են ցանկացած թե ընտրյալ, միամիտ ու հնարամիտ ունկնդրի, որոնց կուրաչք ձանձրույթը այդ իսկ պահին խաբեությամբ համոզելով ստիպում է ուշք դարձնել քառակուսի թե ուղղանկյունա՝ արկղիկին, որտեղ կրկնվող անորոշ պատկերները մեկ կլանում, մեկ էլ բացեփբաց ցուցադրում են մարսյան պատկերներ – դեռ այդ ամենը չմարսած հմայվածներին ստիպում են առանց փոքր-ինչ կասկածի հավատալ նա–, թե ամերիկյան ծրագրերի իրականացման նպատակը մի ազնիվ առաքելություն-այց է տիեզերաբնակ եղբայրներին:

Մի պահ ու մի ակնթարթ հանկարծահաս ապշանքը վերածվում է գրեթե գերլարման, երբ շնչահեղձ լինելով՝ ինչ-որ սիրունիկ լրասաց համոզում, թե ժպտախառն, հուզմունքից շփոթ, կարկամելով մեկնաբանում է հեռու պատկերը, ուր մարսագնաց պատվիրակից աչ եր–ացող անշարժ կարմրադեղնավուն իրը իբր մարսյան նապաստակ է, ու դրանով իսկ, տեսեք–տեսեք, գաղտնազերծվում-արձակվում է մի գորոյան հանգույց –ս, – հեղինակը այս անգամ ոչ թե նախաստեղծ տիեզերքն ինքն է, այլ նրա որդին՝ բանական մարդը:

Անասելի, ափեսափվող ուրախությունը իր հզոր շրջապտույտի մեջ առավ մեզ՝ ինձ – հյուրիս՝ ԵՊՀ բնագիտական ֆակուլտետի դասախոս Ս. Քամալյանին, – անկեղծ ողջագուրանքն ու բարի լուրը՝ չընդհատվող շարունակական երջանկությամբ դարձավ բաժակաճառ – կենաց՝ ի պետս տիեզերական Էակի հայտնության – հարատ–ության:

Մինչդեռ Նարեկի ամենատես, անխաբ հայացքը անորոշ կասկածի խորքերում համակարգում, դասդասում, իմաստավորում էր անակնկալ պատկերի հավաստին, որը կյանք տեսած երկու հասուն այրերիս համար այլ–ս – մեկընդմիշտ լուծված հարց էր:

-Ո՞րն է քո կարծիքը, Նարեկ,- անսպասելի հարցրեց հյուրը,- մի՞թե կյանքը տիեզերքում չի շարունակվում:

-Բայց ոչ երբեք այս պատկերի առնչությամբ,- համեստ պատասխանեց իմաստուն պատանին, ապա թղթի փոքրիկ, աննշան կտորի վրա արագ մի քանի գիծ քաշելով ու թվագրելով գծերի անկանոնությունը՝ վստահ շարունակեց.- ***անշարժ իրի բոսորագույն ստվերը, «մարսյան նապաստակը» – մարսագնացի եր–ացող եռապատկեր դասավորության անկյան աստիճանը...***,- լռեց հանկարծահաս, իսկ դեմքի խաղաղի վրա կապտավուն մի բոց բռնկվեց ակնթարթորեն ու ալիքվելով գնաց, մարեց աչքերի հեռու, անմշուշ տարածքներում, հետո կարծես ուշքի գալով՝ սառը շարունակեց.-***մի խոսքով՝ պատկերն անբնական, անկենդան է, իսկ չափսերը տատանվում են երկուսից մինչ– երկուսուկես սանտիմետրի սահմաններում:***

Մի՞թե կատակ էր արածը, թե՞ իր հավասարակշիռ պահվածքին բացարձակ անհարիր Նարեկի արարքը դուրս էր ժայթքել իր մշտահողով ուղեծրից – մոլորյալ, հասվեհաս ասուպի պես գահավեժ, ուղղաձիգ շարժվելով, սանձակոտոր ու խելահեղ՝ երկայնակի կիսում էր

երկնածիրը՝ կործանելու ուրախության այն աշտարակը, որ քիչ առաջ երկու գրեթե ծերացող տղամարդ միամտորեն կառուցել էին ավազաթմբերի վրա:

Մինչդեռ Նարեկը հրաշալիորեն տեր ու տիրակալ էր իր գերիզոր մտածողության կատարյալ բոլոր դրս-որումներին – հեռավոր աստղի պես խորհրդավոր, հմայիչ անհայտից առաքում, ծավալում էր իր լույսը՝ երբեք չսպառնվելով – անասելի խավարի փոխված գիշերվա անելակետ դեգերումներից հոգնած ու մոլոր երկրի պանդուխտ, անցավոր բնակիչը բաց երկնքի տակ հույսով նայում, սպասում էր իր հեռավոր բարեկամին, թե վաղը վերջապես գտնելու է տուն տանող ճանապարհը:

Ու հիմա իսկության հասվեհաս պահերից մեկն էր, երբ իր գորավոր, անխորտակ միտքը սլացավ անդիմադիր տիեզերական արագության անպարագիծ սահմաններից, կրկին ու կրկին առավել հեռու հասավ, մի պահ կանգ առավ նրա շնչող, կենդանի, ծավալաշուրթ եզերքին, ընդունվեց, օրհնվեց Մեծի կողմից, ու թույլատրվեց նրան՝ ստուգել այդ ամենը տեղում – մեկնաբանել ամեն ինչ իրեն հայտնի եղանակով, իսկ հետո համակիր վերադարձավ մեզ, որպեսզի բոլորիս համար գատի ու գանգանի լույսը խավարից:

Սակայն ըստ էության ինչ կարծեսար այս պատմությունը, եթե համառ փաստերը արհամարհելով՝ ինքներս փորձենք գտնել խճճված փրկարար թելի ծայրը ու երկար ճանապարհ գնալու փոխարեն էլ ավելի շփոթենք նշմարելի հանգույցները՝ հույս դնելով պատահական դիպվածների աջակցությանը, մինչդեռ փաստերը թակում են դուռը – աղաղակելով՝ հիշողության մատյանից պահանջում են դուրս
Սաշա Յովսեփյան-----

բերել այս հավաստի պատմության ճշմարիտ շարունակությունը, որը մի քանի օր հետո «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի էջերից մեկում ազդարարում – պնդում էր. «ՆԱՍԱ-ի մասնագետների վերլուծությունները – հաշվարկները ապացուցում են, թե «մարսյան նապաստակը» երկուսից մինչ– երկուսուկես սմ լուսավորված քարաբեկոր է»:

...Իսկ համալսարանում դասերը շարունակվում էին՝ յուրաքանչյուր օրվա դատարկը իմաստավորելով ու բացահայտելով թաքնթաքուն գաղտնիք, որի գոյությունը ոչ թե պարտադրված իմաստագուրկ քմահաճություն, այլ հանապազօրյա հացի պես անհրաժեշտություն էր, քանզի Նարեկի մարդեղության չափանիշները, լույսի պես ճառագելով, ծփում, տարածվում էին՝ ճանաչելի դարձնելով իմաստ ու ձ– ունեցող տեսանելիք – անհայտը:

Ահա երկրորդ դասաժամն է. ուղեղների լարվածությունը զսպանակվել է, ու լուծվելու համար նախատեսված խնդիրը՝ կամակոր ու իրասածի կնոջ նման անիմաստ համառ, թույլ չի տալիս – հնարավորություն ուսանողներին՝ գտնելու այն ուղին – միջոցը, ուր լուծումը լինելու էր թե՛ հաճելի, թե՛ մատչելի – թե՛ հաղթական: Ասես ձուլածո անառիկ բերդ էր, որ իր ներսում համառ պահելով բազմաթիվ անհայտներ – անորոշություն ու տարակույս սերմանելով պաշարողների մեջ՝ ավելի էր ընդգծում իր չնվաճման առասպելը՝ լուռ ծաղրի մատնելով բոլոր կողմերից սկսված երկժամյա գրոհը:

Նարեկը կարծես թե մասնակից չէր այդ ամենին, ինչը պտտվում ու անվերջ փոթորկվում էր իր շուրջը, – անկասելի տարերքը չկարողացավ ներքաշել նրան շիկացած կրքերի վահագնածին հորձանուտը. գի ցանկության – հնարավորության բոլոր միջոցները անեանում էին՝ իզուր բախվելով հրաշամանուկի լռության իմաստավոր ափերին:

Դասախոսը նկատեց այս ամենը – ոչ թե նրան պարզապես հրավիրեց մասնակից դառնալու համընդհանուր ջանքերին, այլ բարեսրտորեն ամփոփելով բարկությունը՝ դիտողության պես ասաց.

-Մի՞թե այս բոլորը քեզ չեն վերաբերում, Նարե՛կ...

Նա ելավ տեղից՝ արժանապատիվ, բայց ոչ մեծամիտ, լուռ, բայց խոսուն հայացքը հեռու թատերայնությունից, ելավ, եկավ դեպի գրատախտակը, ուր հիշյալ խնդիրը դեռ համառում էր մեծամտորեն, թե՛ տեսե՛ք, տեսե՛ք:

Բայց. **«Եկողը Սասնա ծուռ չէր, ժայռեղեն ու քարեղեն չէր, այլ փոքրամարմին, նիհար, բաց ճակատով, պարզ հայացքով պատանի էր, ու նման չէր, հաստատ նման չէր տեր ու տիրակալի... ձեռքերը բռնոնցքված են, ուրեմն՝ ամուր է կամոք, հայացքը լուսեղեն է, ուրեմն՝ պահապան է լույսի – գիտության»** (Ն. Յովսեփյան, Նոյյան աղավնու վերադարձը, էջ 77)

Բարալիկ մատների մեջ կապիճը հնազանդ ծառայի պես թեթ– սահեց գրատախտակին: Ասես մոգական ուժի հրաման էր, որի կատարումը հարկադիր ու պարտադիր էր, քանզի հակադրվելը ոչ միայն իմաստագուրկ էր, այլ– անհնարին:

Մի քանի հպում, մի քանի բռնկվող ակնթարթ - համառ գեղեցկուհին առանց սեթ-եթանքի հանձնվեց ու անգոր եղավ դիմադիր լինել հզոր կամքի տեր հրաշամանուկին - այլ-ս գաղտնի ոչինչ չունենալով՝ թույլ տվեց ցանկացողին տեսնել իր մարմինն ու եռությունը:

Անսված բերդի անկումը փոշեհատիկի չափով իսկ չավելացրեց Նարեկի չխամրող փառքը, քանզի նա համեստության բարի սերմնացան էր ու ի սրտե ցանածը մաքրեմաքուր ազնվություն էր, որպեսզի ստոր կիրքը անհավատ մոլեռանդի պես չգա ու ավերի բանականության անմշուշ տեսադաշտը, իսկ երբ ժամանակը հասունանա, հնչեն ու դողանջեն երկնային զանգերը, գա վստահաբար հաստատելու - ավետելու, թե հաղթողն ինքն է - իրավունք ունի վայելքի - փառաբանման:

Ժողովուրդը տեսավ, հասկացավ, ջերմացավ հոգով - Ներքին մի մղումով հարցրեց - ընկրկեց՝ ճանապարհ բացելով առաքվածին (նույն տեղում):

Ի վերուստ փառաբանման կոչվածին փառաբանելը - գտնվածին գտնելը իմաստագուրկ ջանք է, ուստի ոչ թե ինքը գնաց փառքի հետ-ից, այլ փառքը հնազանդ հարկատուի պես եկավ նրա մոտ - ստվերի պես հետ-եց մինչ-... հավերժի թագավորություն /ըստ տեխնիկական գիտությունների թեկնածու, դասախոս Կ. Այվազյանի պատմածի/:

Մարդու միակ երջանկությունը ընտանիքի երջանկության չընդհատվող շարունակությունն է՝ շաղախված կիրակիների տարողությանը, ուր օջախի շուրջ սիրով հավաքվածների սրտաբաց խոսքն ու ավետափվող ծիծաղը ստեղծում-արարում է լիարժեքության այն շոշափելի տեսլականը, թե կյանքի հավերժող ծառի անբաժան մի շյուղ-մասնիկն ենք մենք - իրավունք ունենք թե՛ գարնանը ծաղկելու - թե՛ ամռանը պտղելու:

Վարք Նարեկի-----

Կիրակիների սահմանված այցը տագնապահարույց, ահախեղդ չէր, այլ կարոտախառն, ազնիվ սպասում էր ավագ որդուն, որի յուրաքանչյուր այց տոն ու տոնակատարություն էր, քանզի Ներքին մի հրճվանքով ժամանակը մեզ թույլատրել էր վայելելու Նարեկյան հրաշալի նեկտարաբույր մտքերի գերխտանյութը, որը առատության եղջյուրից անվերջ հորդացող անարգել վայելքի պես անընդհատ լցվում - իմաստավորում էր օրը, ուր խոսքը այլընտրանք չուներ, իսկ խորաթափանց կռահումը՝ անբեկանելիություն:

Վախի - հպարտության ակնթարթները կեսօրյա համառ ստվերի պես կրկակոխ հետապնդում էին ինձ՝ ձեռք չքաշելով, այլ ամուր կառչելով. մեկ մտերմիկ ոգ-որում ու ոգեշնչում էին, մեկ էլ՝ տարափոխիկ, կասկածելի լռում ու սսկվում՝ թողնելով անորոշության թանձրուկի մեջ ծածկակորույս արվող հավատս ու գիշերագույն սքողված չորս պատերի մեջ մաշվող կասկածավոր կալանում:

Ցանկացած բանավեճ մի չընդհատվող ճանապարհ է, որի երկու կողմերում հավատավոր կանգնածները փորձում են ապացուցել ընտրյալ լինելու իրենց համառ կարողությունը - հերթ ու ժամանակ չտալով իրար՝ ականջախուլ աղաղակում են, թե ամենակար-որը այս կամ այն վարկածն է - հենց իրենց ջանքերի գնով տարվելու է մինչ- նպատակակետ, ու սպասվող ակնկալները պարզապես ծնելի իրավիճակներ են, ուր մեր եր-ակայության շրջանակներում մենք փորձելու ենք պահ առաջ կռահել կամ կանխատեսել անխուսափելի կատարվելիքը, սակայն ընդմիջտ մնալով միայն ունայնություն քարոզողի կարգավիճակում:

Եվ հիմա տեսա, թե ինչպես քսաներկու երիցս խենթ երիտասարդներ ինքնամոռաց վազում-վազվզում են կանաչածավալ դաշտի մի ծայրից մյուսը, ասես կրքոտ ներկայացման ցանկալի մասնակիցներ են, ու բախումների վարն ու վերը հանդարտվում, հավասարակշռվում է ի վերջո դարպասների մոտ, երբ չհասկացված խառնաշփոթը վերածվում է անզիջում, կատաղի մարտի, ու պատճառը, ո՞վ զարմանք, սնամեջ գնդակն է:

Ավա՞ղ, տեսա, թե ինչպես քունը գողեգող ու աննկատ խարդավանքի սարդոստայն է հյուսում դիմադիր կոպերիս վրա, - անխուսափելի նինջը օրորում, տանում-բերում է ինձ, ու ժամանակը հրամայաբար զարկում է կեսգիշերային կոչնակը՝ անխուսափելի հրավեր կարդալով ու ցայգալույսի աղոթք:

Եվ սակայն տեսա, թե ինչպես Նարեկի կլանված, անստվեր հայացքը անցել-թափանցել է Էկրանի նյութից ներս ու մասնակից վկա է մարգաշխարհի այս ընդունելի կրքաշաղախ խաղին՝ ոգեշնչելով անձնուրաց թիմերից մեկն ու մեկին՝ անզիջում կոչելով ի մարտ - սպասելով՝ համոզված, թե խաղավարտի սուլիչը հաղթանակը շնորհելու է իր սիրելի թիմին:

-Ուշ է,- ասացի,- վաղը երկուշաբթի է - աշխատանքային շաբաթվա առաջին օրը,- - անշտապ բացեցի ննջարանի դուռը:

-Սպասիր,- թվաց ինձ համոզում է Նարեկը,- ***մի՞թե չես ուզում տեսնել, այլ ոչ թե լսել մի գոլի մասին, որ այս խաղի ամենագեղեցիկն է լինելու:***

Մի պահ երկմտելով կանգ առա կիսաբաց ննջարանի դռների մեջ, ու ափ չունեցող մի գորեղ ուժ ծավալ-ծավալ եկավ, ծանրացավ ուսերիս ու հրամայաբար համոզելով՝ պահանջեց վերադառնալ:

Տեսա, թե ինչպես կամագուրկ գնդակը անհասցե շարժվում, գլորվում է քերծվածքադեմք դաշտի տրորված կենտրոնով ու ասես ոչինչ, բացարձակապես ոչինչ գոլային հանկարծահաս պահի մասին չէր ենթադրում, իսկ մոտակայքում թաքնված հիասթափությունը անորոշ, դառը կասկածի պես գունդուկծիկ շարժվում, ապստամբվում էր այդ իսկ պահին ճաք տվող մաշկիս տակ՝ ընդունայն փորձելով ի չիք դարձնել հավատս, թե այս անգամ Նարեկը...

Բայց ո՞վ երկնային Ամենակարող, մի՞թե քո արդար կամքն էր իրագործվում այս մի բուռ կանաչ դաշտում՝ ստեղծելով միամիտ գնդակախաղի ակնթարթային – անկրկնելի իրավիճակ-ներկայացում՝ դարպասների դեմ դիմաց, որն ավարտվելու էր եր-ելի, ամենագեղեցիկ գոլով:

Տեսա, թե ինչպես անօրինակ զարմանքը ամուր կապանք դրեց ամենախոս լեզվիս, իսկ նա՝ իմաստնախոս պատանի վկայողը, հանգիստ – հեռու երկրային խարդավանքներից՝ իր աշխարհի հետ էր, ու ասես պատահածը ոչինչ չնշմարող պահ էր ու ակնթարթ:

-Նարե՛կ,- ձայնս տագնապած, խավարում էլք փնտրողի ու փրկության լույս չգտնողի պես ահաբեկ երերում, խփվում էր պատեպատ,- իսկ գուցե խաղի ե՞լքն էլ ասես:

-Ի վերուստ խաղը տրված է ցրելու մտքի մշուշը, որպեսզի բանականության հորիզոնը ժամանակ ունենա ի մի բերելու արդար դատելու իր կարողությունը,- ու մի պահ դադար տալով, ասես գաղտնիք էր բացահայտածը, անսպասելի շարունակեց բոլորովին այլ տեղից – այլ տոնով,- **իսկ այս դրաման ավարտվելու է ոչ հօգուտ արքայական թիմի – ընդամենը մի գնդակի տարբերությամբ...,-** – լռեց:

Տեսա, թե ինչպես սառը շեշտադրությունը օտար թռչունի պես եկավ հեռվից ու հայացքի դեմ աղաղակեց հոգևած – անեզրությունից եկած ճամփորդի պես. նրա կիսաբաց աչքերի լուսողող տարածքը իմաստավորեց մեզ գուցե – անհայտ, բայց իր իմացած աշխարհի մի էջ –ս:

Սաշա Յովսեփյան-----

Տեսա, թե ինչպես ժամանակը նրա համար խտացված նյութ-ծածկագիր է, որի անձեռնմխելի բանալին մեկընդմիշտ վստահված էր միայն իրեն, ու ինքը գիտեր անհրաժեշտության պահն ու արժեքը լիաբուռ բաժանելու – տիրոջ իրավունքով արդարացի մերժելու, քանզի իմաստության տաճարի հրաշամանուկն էր – ոչ թե սովորական երկրային անցավորներից մեկը:

Երկրային մեր ողջ գոյության ընթացքում մեզ անդավաճան, աջակից – աջալուրջ հոգին տրված է որպես մարմնի անդավաճան մաս, իսկ հավերժության սահմանն անցնելուց հետո մեր շահերի իրական ներկայացուցիչ դեսպանը տիեզերաբնակ ոգին է՝ հեռու նյութականից – անվախճան: /Էջ 66/

Նյութի առաջությունը կար–որ այն հանգամանքներից մեկն էր, որից նա արարում, ստեղծում էր չբեկվող ու անհերքելի իր հոգ–որ ազնիվ աշխարհը, ուր իմաստունի ապացուցելի փիլիսոփայությունը – անպարտելի արքայի կամքը շաղախելով իրար՝ բացահատում, մեկնում էր երկրային կյանքի բոլոր բաց ու փակ ոլորտները, որ անցնում-դառնում էր իր տեսադաշտով ու տանում հանում էր վեր՝ դեպի երկինք...

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ֆ. Դավթյանը , ուսումնասիրելով Նարեկի ձեռագիր մասունքները, գրել է.

«Նարեկի համար կյանքում մեծագույն հաճույքը իմացական հաճույքն էր: Չբացված գիրքն անշունչ իր էր դեռ–ս, ընթերցված գիրքը՝ մի ողջ Տիեզերք:

Տիեզերք էր Նարեկի հոգին ու տիեզերք կա Նարեկի ձեռագրերում»:

Իսկ իր աշխարհով մտահոգ պատանին հայրենասերի իրավունքով գրում է.

«Իմ շրջապատում ամաչում են մաքուր հայերենով խոսելուց: Ինչու՞: Մենք պարտավոր ենք պահպանել մեր լեզվի մաքրությունը, գեղեցկությունն ու անաղարտությունը: Հաճախ ենք լսում՝ դիմություն – ընդդիմություն բառերը, որոնք կիրառվում են իբր– հականիշներ, միևնույն դրանք ոչ թե հականիշներ, այլ հոմանիշներ են: Պետք է լինի իշխանություն – ընդդիմություն, քանի որ ընդ նախաձանցը ժխտական չէ, այդ դեպքում կլինեք հակառակ-ընդհակառակ, դիմադիր-ընդդիմադիր, բայց սրանք հոմանիշներ են – նույն իմաստն են արտահայտում:

...Գրաբարյան համաբանությամբ է առաջացել այլոք ձ-ը, որը սխալ է, պետք է լինի այլք, սեռականով՝ այլոց – ոչ թե այլոք», – «Չնայած հիմա ասպարեզը նրանցն է, ովքեր նմանակում են օտար բարքեր, ովքեր միտումնավոր արհեստականորեն դժվարացնում են կյանքը – այսպիսով դառնում են իրավիճակի տերը, սակայն յուրաքանչյուր հայի ձեռքում է հայ ազգի վաղվա օրը» /Ձեռագիրը թվագրված է 2002-ին/:

*«Նա ծնվել էր մարդկանց հոգսը թեթ-ացնելու համար...,- գրում Ֆ. Դավթյանը «Տիեզերք էր Նարեկի հոգին» առաջաբանում՝ գետեղված Ս. Հովսեփյանի «Ձեռքերի կիրակի» գրքում/ «Հայաստան» հրատարակչություն, 2004թ/ , ապա շարունակում է՝ ավելացնելով.- **Նյուտոն, Կոմիտաս, Չարենց ու Մինաս էր փնտրում: Չէր սիրում մանր ու չնչին մարդկանց: Իր վարքի մեջ Աստվածային ներկայություն կար, արդար էր հոգին՝ ինչպես մի Հիսուս, որ տաճարից վռնդեց առ-տրականներին:***

Հայոց լեզվի լիակատար իմացությունը նրա համար պաշտամունք էր: Դրա վկայությունը գրաբարի – լեզվի մասին նրա խտացումներն են:

- *Մեր բանակի ամենահզոր դաշնակիցը հայոց լեզուն է:*
- *Ազգի բնորոշումն առանց լեզվի նման է անհասցե նամակի:*
- *Գրաբարը նման է այն թագավորին, որը մահվանից առաջ ավանդել է իր հաջորդին ամուր – հզոր երկիր:*
- *Հայոց ոսկեդենիկ գրաբարը մարմնացյալ երաժշտություն է, որը հնչել է առ Աստված մեր անձեռակերտ տաճարների լուսեղեն կամարների ներքո՝ որպես լինելության աղոթք – աներկբա հույս:*
- *Այսօրվա մեր գոյությամբ պարտական ենք խնկաբույր գրաբարին:*

Այս – համանման բազում խորիմաստ մոքեր, ապշեցնելով ընթերցողներին – նրան ճանաչողներին, միաժամանակ մի հարց են ծնում՝ ե՞րբ է հասցրել այս ամենը...

»Եվ երբ մի առիթով /վկայությունը կրկին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ֆ. Դավթյանինն է/ նա տպագիր գրաբարյան տեքստի մեջ բառի մեկնությունը սխալ համարելով, արտահայտեց իր տեսակետը՝ հիմնավորելով ու վկայակոչելով գրաբարի քերականությունը, կայծակնահար արեց միտքս՝ ասելիք չթողնելով, քանզի – դպրոցում, – համալսարանում նա գրաբար էր անցել: Մի՞թե նրա ջուրն ուրիշ ջրեն էր:«

Նրա երկրային օրերը աննկատ մոտենում էին այն սահմանին, ուր իր իսկ ասելով՝

Վարք Նարեկի-----

Տիեզերական տարածության մեջ երկիր մոլորակը մի կանգառ է, ուր ժամանողները չեն ցանկանում ասել, թե իրենք որտեղից են գալիս, իսկ մեկնողները՝ լռում են համառորեն, թե ուր են գնում...

Իսկ ժամանակի դաժան, դավադիր ձեռքը ի մի էր բերում բազում կողմնակիցներ, որոնք քամու բերանն ընկած պատահական ծվատ ամպի պես կամ երկիմաստ-երկմիտ էին – կամ էլ՝ թուլամորթ, անկայուն, զուրկ՝ դիմադարձ կանգնելու հզոր այս պատանուն, որը գիտեր այն ամենը, ինչը ըմբռնելի, մեկնաբանելի չէ հասարակ երկրաբանական համար:

Անորոշ վախը երբեմն, բայց արդեն համառ սողոսկում էր՝ շերտ-շերտ փորձելով բացել ու նվաճել դեռ ձ- չստացած ու բոլորին անհայտ կատարվելիքը զանազան դիպվածներով, իսկ երբեմն էլ՝ երազ-տեսիլքով, որի մեկնությունը մի՞թե մեզ էր վերապահված – ոչ թե միայն ընտրյալներին:

ՏԻԵԶԵՐԱՍԱՐՄԱՆ

/կյանք երկրորդ/

- 4. ՏԵՍԻԼՔՆԵՐ
Քնած – արթմնի

- **5. ԶՐԱԺԵՇՏ**
Աստծո Քարտուղարը

Վարք Նարեկի-----

ՄՈՐ ՏԵՍԻԼԸ

Թանձր ս-, օձակերպ մշուշը նենգ ու սողեսող, քիստ ու դանդաղ առաջանում էր՝ սառը, լորձոտ մարմնի հպումը ամրագրելով վախից խելահեղ ու հատված-հատված կրկնված դաշտ բլուրների անհ-ք երեսին՝ փորձելով անզգացմունք թույն-արհավիրքը ներարկել ի վերուստ նախաստեղծ դաշտի ծիծաղկոտ մարմնի աստվածընծա ծաղիկների լռությանը:

Ու երկինքն ի վեր, խորհրդավոր անհայտության ամենավերին գագաթից երկնքի երկրային ճանապարհը դառնում ու վերադառնում էր՝ չաղավաղված անդրադարձի պես դեպի անուրվական հորիզոն գնալով ու ձգվելով մշուշե թանձրույթի ծերպը, ուր դեռ հույսը կարոտի պես սփռվելով հոսում էր ներք-, բայց ներք-ում գտնվողները կույր ու անօգնական տորոպում ու տարրալուծվում էին՝ անէանալով որպես հավերժությունից երես թեքած մերժվածներ, – լռությունը չարագուշակ իր ներկայությամբ աղաղակում էր բոլորին ի մահ, իսկ հետո, կերպ առած ու մարմին, նա շերտ-շերտ բաժան- բաժան էր անում մերժվածության սահմանը՝ ելք ու ուղի բացելով հորիզոնից եկող լույսին, իսկ նահանջող մշուշը՝ անպատվար ու անդաշնակից, չկամորեն ու հերստոված հեռանում- վերադառնում էր՝ քրքրելով իր ներսի կծիկ դարձած մաղձը, չհասցնելով ու չհասկանալով, թե երբ եկավ ժամանակը, – իր անպատիվ կեղտոտ փեշերը հավաքելով՝ գնաց հուսախաբ անելու իրենից ներշնչված Չարին, որ այլ-ս անկարող էր դիմադարձ կանգնել հզորացող լույսին ու հավերժող լույսին:

Սահմանաբաժան հալումաշ գիշերը , – թե չքնաղ սեր առավոտը այգաբացվող մերկությամբ պտույտ-պտույտ օղակվում էր շուրջս՝ խոսելով ու աղաղակելով, թե՛ հավատա՛, ո՛վ կին, խավարի պարտությանը – հավատա քեզ շնորհված լույսի հաղթությանը մեկընդմիջտ:

Եվ հանկարծ այնտեղ, ուր դաշտը ծավալվելով ծնկել էր ծալ-ծալ, հանկարծահաս հետ քաշվեց հորիզոնի ծանր վարագույրը, – լույսի արդար կարկաչը ծիծաղածավալ երկնքի – երկրի միացման տեղից անարգել հոսեց մշուշից պղծված հովիտը՝ մկրտելով ու մաքրելով աղավաղված դաշտի մշուշապիղծ հետքերը նրա անարատ երեսից:

Եվ այնտեղ, ուր երկնքից լույսը կայտառորեն իջնում-ծովանում էր հորիզոնի – երկնքի միջ–, հզոր արեգակների պես իջնում էին փառահեղ ծերունիները՝ իրենց շուրթերին բերելով օրհներգումի մեղեդիներ, որ երկնքին էին, իսկ ճերմակ զգեստները ալիք-ալիք շողարձակում էին՝ լուսավորելով երկրային ճանապարհը:

Եվ նրանց խորհրդավոր ընթացքը, – երզը իմաստավոր խոսքի պես գալիս էր դեպի ինձ՝ ճախրելով ու վետվետալով, թ–ին էր տալիս վեր–վեր, իսկ հետո աղավաղված պես իջնում նստում էր ուսերիս, որպես ավետիս ու կամք:

Եվ նրանք առաջանում էին դանդաղագնա, քայլ-քայլ, դեպի այն տեղը, ուր զարմանքով կանգնած էի ես:

Բարձունքի հենց դեմ դիմաց հասնելով՝ ծնկի եկան լուռ ու համաչափ, իսկ նրանց բերած մարդահասակ խաչը, անասելի լույսերի մեջ ճառագելով, լույս էր առաքում՝ արցունք-արցունք հավաքվելով ու լճանալով այն բլրի վրա, ուր կանգնած էի ես:

Թվաց՝ ակնթարթը հազարամյա լռություն էր, որ ողողեց դաշտը, – նույն պահին սառը եղյամակերպ փաթիլներ իջան երկնքի – երկրի միացման տեղից:

-Ո՛վ կին, ահա՛ քո խաչը, – կամքը նրանն է,- աղաղակեցին պայծառակերպ ծերունիները, ապա նայեցին երկնքին, իսկ հետո ելան ծնկած տեղից – ալիք-ալիք ընթացան գնացին լուռ ու անշշուկ դաշտից մինչև հորիզոն, ուր երկրի – երկնքի միացման տեղն էր:

Եվ երբ նրանք ծուլվեցին երկնքի խորհրդավոր բացվածքի հրեղեն լույսին, հպտիտ մշուշը չարախիսնո համառությամբ իրար եկավ – լույսի գորությունից փախիփախ եղած ծվենները ժողովեց, բերեց ի մի ու վիշապագոռ հոսեց եկավ դեպի այնտեղ, ուր կանգնած էի ես մեն-միայնակ բարձունքում՝ բլրի վրա:

Եվ հանկարծահաս մշուշի կապտագույն դեմքից մի ափաչափ անորոշություն շղաճիզ ու փակ բռունցքի պես խելակորույս շարժվեց վերից վար, կախվեց համրացավ ինձնից բարձր՝ երկնքի ճիշտ կենտրոնում, իսկ հետո բացվեց անասելի լռությամբ ու տարածվեց թափանցիկ քողի պես բաց եզրերով, իսկ շլացուցիչ ճերմակը կենտրոնում՝ մաքրության խորհրդանիշ խորհրդով, բայց եզրերը, ավա՛ղ, ս– ու ձյութանման էին. ու եկավ նա, անհրաժեշտ իջավ վտիտ ուսերիս, ինչպես տրամաբանված ցավ...

Սաշա Հովսեփյան-----

Եվ հիմա այս երազը մեզ համար վերացական աշխարհի նույնքան պատրանքային իրողություն էր, որի բոլոր եզրերի գումարելիների արդյունքը տանում էր այնտեղ, ուր մեկնությունը անհարիր է մեր իմացաբանությանը, իսկ ենթադրությունը անարվեստ գուշակություն է – աննյութ տարածքի արձագանք՝ ի լուր բոլորի:

Երազը չմոռացվեց, սակայն օրերի շարահար ընթացքը անցողիկի իրավունքով թուլացրեց ազդեցությունն այն ամենի, ինչը սկզբնապես փոթորկել էր մեր հոգիները: Միևնույն մեր ներկայությամբ ու մեզ համար նա սովորական պատանյակ էր, որի աստվածընտրյալ լինելը զգալով հանդերձ՝ նմանվում էինք կույր խավարում խարխափողների:

Նրա լուսեղեն միտքը առկայծում էր խավարում – բնության առատածեռն շնորհը հոգու մեջ հզորանում էր ժամ առ ժամ՝ դաշնակցած ոչ միայն բանականությանը, այլ տիեզերածավալ ոգուն, որոնց ներդաշնակվելով որպես երդվյալ ու անդավաճան բարեկամ՝ ընթանում էր դեպի երկնային ոլորտներ, – հենց գուցե դա էր անբեկանելի ու անսպառ Էներգիայի պատճառը, ինչը նրա յուրաքանչյուր խոսքը դարձնում էր իմաստություն – բացահայտում:

Թվում էր, թե արվեստագիտությունը նրա տարերքը չէր, սակայն հանգամանքների ընձեռմամբ երբեմն առաջանում էին իրավիճակներ, երբ ամենաթույլ ազդակը դառնում էր պայծառակերպության խորխորատների մեկնություն ու միտքը ճեղքում էր ազգերի մշակութային թանձրույթը՝ ի հայտ բերելով մեզ անտեսանելի տարածքների նորանոր կողմերը, նույնքան անսպասելի – հանճարեղ, որքան իր ապրած կյանքի նախորդ օրերից յուրաքանչյուրն էր:

Արվեստ կոչվող նավը աշխարհի ստեղծման օրից ակոսում է Մշակույթ անունը կրող օվկիանոսի ջրերը:

Ես նրա առագաստի ճերմակ ուռուցիկը տեսնում եմ տիեզերական կանգառների հավերժական ճանապարհներին:

Հավերժության ճանապարհի տեսանելի հատվածը ձգվում գնում է անհասանելի տիեզերածավալ տարածքներ, որի եզրագիծը մշուշապատ իրողությունների գաղտնիս է, ուր կյանքի գոյության անառարկելի հրամայականը թելադրում է մեզ ընդամենը այն – այնքանը, ինչը եր-ի թե ոչ քինախնդրորեն, բայց նպատակադիր սահմանել է հենց ինքը՝ ամենատես – ամենակույլ ժամանակը՝ բացառապես – միմիայն սովորական մահկանացուներիս համար:

Բայց մի՞թե իր արմատների ոգեղենությամբ զորացածը փորձ չէր անելու մեկնությամբ ընդարձակելու մեր իմացության տեսադաշտը՝ հաստատապես որոշելով աշխարհաքաղաքական խաղի լաբիրինթի անորոշ սահմաններում դեգերող մոլորյալ մեղավորներիս տեղն ու դերը, ամենատեսի կարողությամբ վկայելու նա– այն, ինչը որպես ժառանգություն սահմանել է Տերը:

Դարերի փորձով կուտակված իմաստությունն ամբարվել է մեր գենային ֆոնդերի մեջ, գտնելով այն խառնակ արյունը, որ տարածաշրջանի խաչմերուկներով անցնող վայրենին պարտադրել է մեզ, դրանով իսկ փորձելով խաթարել մեր անադարտությունը, պարտադրել ավարառուի իր փորձն ու էությունը: Բայց հզոր մեր կամքը ծառացել է օտար կանչերի դեմ՝ խորտակելով կապ ու կապանք եւ, զուլավելով, շարժվել է առաջ՝ դեպի իր երկնահաս լեռների բարձունքները, ուր արեւածագները ծիրանափայլ են, – ապրելու հույսն անհատնում, ինչպես մեր հոգին, մեր արմատն ու էությունը:

Հենց այսպես:

Եվ հավելելու ամեն մի փորձ մի՞թե անիմաստ չէ նույնքան, որքան այն փորձը, որի նպատակը անիմաստ ժխտելու համարձակությունն է՝ չկամությանը ապավինելով:

Սակայն լուսատու աստղերի պես գիշերային երկնքի խորհրդավոր հերկերի մեջ նրա նետած հույսի սերմերը ծլելու են՝ իմաստավորելով պահերի – ակնթարթների անվերջավոր հոսքը, սկզբնավորելով նյութը – ոգին իրականից մինչ– տեսիլք – հակառակ ուղղությամբ, բերելով անկասելի շարժում, որի հանդիպակաց ամեն կանգառ ս– – սպիտակ իրողությունների անսխալ – վերջին վկայությունն է:

Բառը, գույնը – հնչյունը ազնիվ բարեկամությամբ շաղկապված նրա անբաժան ուղեկիցներն էին, որոնցից յուրաքանչյուրը պահի պահ անհամբերությամբ սպասում էր իր հերթին, որպեսզի անհերքելիորեն համոզի – ընդմիշտ հաստատի իր նվիրվածությունը պատանի իմաստունին:

Եվ նա շարունակում էր ընթացքը՝ շերտ-շերտ գաղտնագերծելով ու նշագրելով ապրելու գոյն ու էությունը, որի տեսանելի բացահայտը պատրաստակամ հաստատողներն էինք, սակայն այն, ինչ հասու չէր իր հսկայածավալ մտքի անսովոր բարդության պատճառով, շոշոփելիության աստիճանի տարակույսից խոսքը համառորեն մեզ հիում տանում էր հակադրության կասկածի երկիմաստ ներաշխարհի, իսկ այնուհետ–, դերփոխ լինելով, իրականությունը ներկայացնում – հաստատում էր՝ շփոթության մատնելով ամենքիս:

Կյանքի իրավիճակները ծնում են պատեհ – անպատեհ առիթներ, ուր չկասկածվող ասվածը մեկ անգամ –ս աներկբա հաստատում է մեր կողքին ապրողի անսովոր իմացության հզոր ծավալները –

Վարք Նարեկի-----

այն բանալու կարողության առկայությունը, որով բոլոր կնքված ու փակ դռները – արգելապատնեշների ակնապիշ դիմադրությունը հաղթահարվելով ընկրկում էին՝ ճանապարհ բացելով նրան, ով իր բացահայտումների ընտրանիով նույնիսկ ընդմիշտ մնալու է երկրային առեղծված:

Եվ մի՞թե շատերից միայն ընտրյալ քչերին չի վերապահված հասկանալու գույնի ու գծի խորհրդավոր աշխարհի դրս-որումները, որը կատարողի բացահայտում-հայտնագործությունն է նկարվող մակերեսին՝ ոչ սովորական վրձնախաղի – ներդաշնակ գունակատարման միջոցով: Ահա ապացույցը.

Մի մեղադրեք սյուրռեալիստ Նկարիչ Սալվադոր Դալիին:

Նրա հանցանքն ընդամենը իրերի խորքը տեսնելու անմեղ ցանկությունն էր:

Եվ դեկորատիվությունից բացարձակ հեռու խոսքի հզոր շեշտադրմամբ մի բացահայտում –ս միանգամից – նորովի.

Ով չի տեսել Վան Գոգի հիասքանչ հռչակավոր «Ար-ածաղիկները», նա չի հասկացել, որ Նկարչի հոգին ար-ի ծարավ է, լույսի կարոտ...

Սակայն զարմանալիորեն բացահայտումներ անողը, գույն ու ծավալ զգացողը, կատարված նկարի հմայքը գեղագիտորեն ընկալողն ու գնահատողը, ինչպես նա– սուր աչքն ու խորաթափանց միտքը տասնյոթամյա հրաշամանուկին չհամոզեցին վրձին վերցնելու, բացի մի դեպքից, որը կրկին ու կրկին հաստատեց նրա ընտրյալ լինելը:

Մոմագույն սեխի մի մեծ կտոր՝ ծանծաղ խորք ունեցող էլիպսաձև՝ ափսեի մեջ հանդարտ ընկղմված, ինչպես դեգերող նավակն անհողմ ծովում, – բաց գիրք՝ խնկաբույր մագաղաթյա էջին դադար առած, ու հանգրվան տարվա խորհուրդն իր մեջ ամփոփած կիսաճաք կիսակարմիր նուռ, նրանից վեր՝ ընդգծված կնիքան տիրական սափորի ներկայությամբ – ջրի խորհուրդ մեկնություն կապույտ ստվեր շտրիխների խորխորատում թաքնված մուգ թե բաց դեղին, – ի հավելումն այդ ամենի՝ կաղնեգույն միջավայր. ահա առանձնացրած համր պատկերը՝ նատյուրմորտ անվամբ. ընդամենը մի պարզ առաջադրանք փոքր եղբոր համար:

Իսկ փոքր եղբայրը, արվեստին դեռ սիրո խոստովանություն չարած, համոզված մտածում էր նրա հետ հավերժ ու ներդաշնակ ընկերության մասին:

Սակայն նրա բնածին ամոթխածությունը տիրաբար արգելում, հետ էր քաշում՝ փնտրելու խոսքեր, հասկանալի դարձնելու իր քրմուհուն, թե ինչու – ինչպես է զարկում սիրտը, ու թվում է՝ ոչ թե ինքն է կամքադիր տերը, այլ փոթորկվող զգացմունքը, որ աներ-ույթ եկել, թափանցել է մաշկից ներս ու հիմա, հարցուփորձ չանելով, եր-ակայություն ու միտք բորբոքելով, շարժվում է ինքնիրեն:

Հակասությունն առկա էր վերացական սիրո – գործնական հետ-անքի միջ-, – ժամանակի բոլոր հատվածները առանց բացառության շաղախված էին մտածումների թանձրուքով, ու օրվա հեռացող ակնթարթների մեջ տեղ չկար ցանկացած վրձնի – նախընտրելի գույնի համար:

Փորձը փորձի հետ-ից հիմնավորապես նախապատրաստում էր նրա ձախողումը՝ տեսանելի հեռվից հազիվ նշմարելի դարձնելով արվեստի ցանկալի – հրապուրիչ ուղին:

-Ըո վերջին հնարավորությունն է,- մի օր ասացի խստորեն, եթե անցնես փորձության այս կամուրջը, կթույլատրվի դաշինքդ արվեստի հետ, հակառակ դեպքում՝ կդառնաս փուչ երազող, որի արդյունքին, հավատա, ոչ ոք չի սպասում:

Եվ թողեցի, որ ջուրը հոսի իր առվով:

Քարը նետված էր, բայց կար նա- քար հավաքելու պատասխանատվության պահը, իսկ դա ժամանակագրությամբ նույն օրվա ավարտն էր, որտեղ ամփոփվելու էր ցերեկվա տ-ողության իմաստը:

Կողք կողքի, հնազանդ զինվորների պես կանչված ու պատրաստ՝ ասես հրահանգ-հրամանի են սպասում անշրջանակ երկու ջրաներկ նկար. մեկը մի կերպ հարմարեցված իր պահանջներին, ինչպես մարմինը զգեստին՝ չկոճկված ու շփոթ, իսկ մյուսը՝ ձիգ, հպարտ ու անվարան՝ ցանկացած պահի պատրաստ ապշահար անելու իր կատարելությամբ, պատրաստ ոչ միայն հրաման կատարելով հարձակվելու, այլ նա- անհրաժեշտաբար հակահարձակման, եթե, ինչ խոսք, դրա կարիքը լինի:

Չարմանքի ալիքը իր մեջ ներառեց լրջությունս –, կոկորդս սեղմելով, դուրս թռավ՝ որպես չգսպված ճիչ:

-Մի՞թե հնարավոր է երկու կատարում միաժամանակ – այսքան տարբեր,-ասացի՝ չթաքցնելով անխառն շփոթությունս,- քե՞զ, թե՞ ինձ փորձելու համար ես արել:

Նարեկի ներկայությամբ տեղի ունեցող այս խոսակցությունը թույլ չտվեց խոտորվելու ճշմարիտ ճանապարհից, որի նպատակը ոչ թե անորոշ, բայց գեղեցիկ սուտն էր, այլ երիցս ճշմարիտ ազնվությունը:

Սաշա Հովսեփյան-----

Փոքրը մտածեց մի պահ ու դադարը ինքնապահովագրման պես վահան դարձրած՝ մատնացույց արեց առաջին ու չկայացված գործը, իսկ հետո հիասթափված ասաց.

-Կրկին չենթարկվեց: Բարդ է, որերորդ օրն է՝ կամակորը համառում է. անիծված նատյուրմորտ:

-Իսկ սա՞, իսկ այս մյուսը- տաճնապը սողոսկեց սիրտս – ես լսեցի նրա խենթ թպրտոցը:

-Նարեկի հեղինակածն է,-լսեցի ի պատասխան:

-Նարե՛կ, ո՞րն է այս պատմության մեջ հավաստին:

-Մարդու համար իսկությունը, ճշմարիտն ու հավաստին նրա զգայարաններով ընկալվածներն են: Ես սիրում եմ անհայտի համարձակ հրավերը: Դա յուրաքանչյուրի հնարավորությունների ինքնահաստատման սահմանն է – անհատի իրավունքը: Նկարչության հիմքը դեֆորմացիաներով երկրաչափական պատկերների համադրումն է տարածության մեջ՝ հեռապատկերի – սահուն գծերի ներդաշնակությամբ, իսկ ինչ մնում է գույների – երանգների միաժամանակյա զուգահեռ առկայությանը, չգարմանաք, դա բնության գյուտն է՝ ծիածանի տեսքով, մնում է միայն բանական լինել, վերցնել վրձնով ու տեղափոխել նկարվող մակերեսին:

Ահա հանճարեղ մի պատասխան, որի դեմ ցանկացած առարկություն կարող է ստվերի պես չքվել ար-ամուտից հետո, – որը վստահ կարող է ճամփորդել երկնականմարում, որպես արարչաձայն խոսք՝ արվեստաբանության հարուստ ու բազմափորձ դաշտին որպես պարզ-ատրում բերելով գեղեցիկ ու ինքնատիպ ծաղիկներ:

Ժամանակին այս նատյուրմորտ նկարը դիտելով՝ Հայաստանի նկարիչների միության անդամ, հրաշալի մարդ – վաստակաշատ նկարիչ Ս. Սարգսյանը այն գնահատեց որպես բազմափորձ ու տաղանդավոր հեղինակի աշխատանք՝ չիմանալով ոչ նկարողին, ոչ էլ նրա տարիքը...

Դեկտեմբերի վերջին օրերի մռայլի մեջ ցուրտը դաժան տիրակալի համառությամբ վստահաբար թելադրում էր իր իսկ կամքը, – անցնող տարին հոգնած ճամփորդի պես հնազանդ մտնում էր ժամանակի անվերադարձ շեմից ներս՝ պատմության փոշոտ էջերին փորագրվելով այս-ս որպես անցյալ:

Ցանկացած տարվա ավարտը – սկսվող նորը Նարեկի համար մանկություն վերադառնալու հրաշալի միջոց էր, ու պարզ միամտությամբ նա կարծես թե հավատում էր Ձմեռ պապի ազնիվ գոյությանը, սակայն թաքնեթաքուն ցանկանում էր նա – ոչ թե խաղալիքների անսպառ առատության շնորհումն նրա ձեռքով, այլ բարության սերմանումն բ-եռից բ-եռ՝ չերկմտելով, թե հեքիաթային ծերուկը հրաշագործ հնարավորությունների կանչված ավետաբերն է:

Բայց – այնպես ճակատագիրը համառորեն, դույզն-ինչ չերկմտելով՝ անասելի ծանր խաչը տանելու իրավունքը վերապահել էր նրան, – նա հեռու – անտեսանելի մի զգացողությամբ ընկալում-լսում էր պարտադրվածի սառը շունչը –, կարծես, չարից հալածված լույսի պես, արարումի իր շնորհին հույս դրած, փորձում էր խուսափել նախախնամությամբ սահմանվածից՝ ավելի ու ավելի համարձակորեն բարձրացնելով ծալքը գաղտնիքի վրայից, – մաքառելով հաստատում էր տաճարից առաքված լինելու իր իրավունքը:

Իսկ հետո տարեմուտի գլխակեր գիշերվա տենդածարավ աչքերի խորքում բենգալյան կրակները նրա լուցկու կայծից չբոցավառվեցին, այլ արնաքամ ու լքված վիրավորի թույլ հառաչի նման պահ ի պահ բռնկվելով՝ դանդաղ խամրեցին – անարձագանք, լքված մարեցին, ճայթուկից արձակված լուսածիր պարկուճը չպայթեց, աստղածածկ երկնքի խենթացած կամարի տակ ընկավ, անկանոն, օղակ-օղակ պտտվեց իր շուրջը՝ դառնահամ ծիխ մեջ ինքն իրեն խեղդամահ անելով, շամպայնի պոնկեպոունկ լի, նրբագեղ բաժակը սահեց, սահեց դավադիր – ձեռքից ընկնելով՝ փշրվեց՝ անմնացորդ ստվերելով ազնիվ ու պայծառ ճակատը:

-Քո թռիչքի թ-երը իմ երազանքի անսահմանն է, տարի՛: Չե՞ս կարող, թե՞ չես ուզում ներդաշնակել հեքիաթս օրերիդ, ասա՛: Չեմ ուզում հավատալ, թե թիթեռդ մեկ օրվա կյանք ունի միայն...

Ճշմարիտ եմ ասում, հաստատապես գիտեր, թե ինքը ով էր – տեղյակ էր իր իսկ առաքելությանը երկրի վրա, քանզի երջանկությանը հուսախաբ բոլոր սպասողների համար հույսի դռները ընդմիշտ փակ ու գոց էին, ինչպես կույր աչքերը, մինչդեռ խավարում նրանց տարաբախտ ձեռքերի անիմաստ փնտրուտը անզոր ալիքվում էր՝ ափ չգտնելով ու հանգրվան:

Բայց գիտե՞ր արդյոք, թե իր բաժին միակ ու եզակի հավաստին որտեղից ուր է ձգվում՝ անսկիզբ ու անվախճան, ու հենց այնտեղ՝ ամենավերջում, ուր Ծիր Կաթինն ավարտում է շրջագայությունը ի շրջանս յուր. – մի՞թե այնտեղ ընտրյալ սպասողների սակավաթիվ բազմությունը չէր դիմավորելու

Վարք Նարեկի-----

հենց իրեն՝ Լույսի ավետաբերին, որպեսզի մի անգամ –ս – մեկընդմիշտ պատրանքներից հետ վերադարձնի երկնային հեքիաթը՝ այն հաստատելով չարով պղծված երկրի վրա:

Մարդուն տրված երկրային ժամանակը խիստ սահմանափակ է:

Օր-ցերեկները ավելի քիչ են, քան՝ օր -գիշերները:

Գիշերները տարածության – ժամանակի մեջ անսահմանափակ են, անժամկետ...

Արթուն մնանք՝ որքան հնարավոր է...

Արարենք ցերեկներ՝ հավերժական գիշերվա սահմանը իր տարածքում կարճելու համար:

Ընտրյալի իր իրավունքը ունենալու դեպքում միայն կթույլատրվեր երկրայիններիս մուտքը արգելված տարածք, ուր Բարու – Չարի չընդմիջվող հավերժական պայքարի ավերակող ճակատամարտը դեռ կարող է թողնել բանականության մերժման նշմարելի հետքեր, որտեղ փերթված, բայց ծվեն-ծվեն միախլուսվել են նրանք՝ ցանկալի լույսը – ատելի խավարը...

Սա երկրի վրա:

Ենթադրաբար եմ ասում, ոչ մարգարեանալով. մի՞թե արթուն մնալու կոչը –ս մեկ պատվիրան չէ նվիրվելու պայծառակերպ լույսին, որպեսզի կարողանանք ըստ Նարեկի սահմանածի՝ հավերժական գիշերների արգելափակումով թույլտվություն – իրավունք ստանալ վերադառնալու դրախտ՝ թեկուզ որպես անառակ որդիներ...

ՅՈՐ ՏԵՍԻԼԸ

Անասելի թանձր, ս– ծխածածկույթը անանուն տարածքների եղկելի անամոթությունից հեռու, մշուշապատ ու բաց, տխուր մերկությամբ մեջքածալ կքանստել էր՝ երկտակվելով նշմարելի հորիզոնի – երկնքի դիմագուրկ ու տարուբեր հայացքի տակ, անհանգիստ սպասելով ինչ-որ հրաշքի, որի անվերադարձ մեկնումը չբացահայտված առասպելի պես արձանագրվել, մնացել ու տարածք-տարածք ծալքերի մեջ խամրած ու ժանգակեր խրվել, համրացել էր:

Իսկ նա՝ անորոշ լռությունը, լցվել ու պայթելու տագնապից վախվորած բռնել էր կքանստածի ոսկրոտ ձեռքը՝ արմատի պես միահյուսելով մատները նրան՝ փորձելով իրեն հուսախաբ չանելով ու կասկածավոր հավատալ նա–, թե ցայգալույսի բացակայությունը տիեզերական հավերժությունից առաջ բացարձակապես գերծ է անեծք-բանադրանքից:

Եվ այնտեղ, ուր տարածքի լղոզված ափերի մեջ բռնկված անասելի տենդը խելահեղ վազում, գլորվում էր՝ երակ-երակ արշավելով, ցանկասիրաբար առգրավելու փորձ անելով սրտի – մտքի անպաշտպան ամրությունները, – անամոթաբար ճոճվելով ճոճվում էր հորիզոնի չորս կողմերի ճիշտ կենտրոնում՝ դեպի իրեն եկող, անկանոն ձգվող կույր ու խուլ անարգանքապաշտների հիպնոսված ճիչ-աղաղակներից փքվելով անիմաստ, շարունակաբար իջնում ու իջնում էր՝ ծածկելով ու տեսակորույս անելով եկողների խառնիճադանք, կեղտոտ հետքերը բոլոր կողմերից:

Բայց բացարձակ անամոթների ոգեշնչված խաժամուժը, հանկարծ – անսպասելի կանգ առնելով, ծնծղաների անկանոն նվնդոցների, աղամակաշի դափերին զարկվող ձեռքերի դիվահար խաղացավի ու վնգստացող աղմուկի տակ ձեռքաթաթ շուրջպար բռնելով՝ երերող օղակի մեջ առան ինձ՝ ծամածռվելով ու անընդմեջ աղաղակելով:

-Արի՛, արի՛, եթե ուզում ես հոգուդ լույսը ապրի երկրի վրա,- – ձեռք ճանկերի շարժվող պատը, ափլափումով ու քաշքշելով, խրխինջ-խրխինջ կրկնում ու արծազանքում էր՝ արի՛, արի՛...

Կարծր խավարը էլ անասելի թանձրացավ շնչասպառ շուրջպարի կենտրոնում, – խելահեղների գունդ ձորձերի դանդաղ, կաթիլ-կաթիլ հալվող երանգները մեկտեղվեցին կեղեքված հողի դատարկ մերկության վրա՝ որպես արյան լերդացող վտակ ու գահավիժեցին խորխորատ գուրբի մեջ՝ այնտեղ, ուր կանգնած էին նրանք՝ լույսից մերժվածները:

-Ո՛վ տեր,-աղաղակեցի երկինքն ի վեր,-մի՞թե կամքդ է – թույլ կտաս այլակերպների ու ճիվաղների այս խառնամբոխին խմելու դեռ չպղծված արյունս, որ քո իսկ ձեռքով խաչակնքված խաղողից է – մի՞թե ամենակուլ խավարին կհանձնես հողաշեն մարմինս, որ քո օրհնած հացից է:

Այս խոսքերը ծարաված շուրթե՞րս ասացին, թե այդպես մտածում էի միայն հոգուս մեջ, երբ դղրդացող երկրի բոլոր չորս ծագերի լանջ- դաշտավայրերին սփռված ծաղկացողի անուշաբույր ու անարատ զարկերը, ձգվելով անսահման ու թեթ– վեր բարձրանալով, կտրելով հատեցին ի վերուստ սահմանված ժամանակն ու անվերջավոր տարածքը՝ կուտակվելով երկնքի հսկայածավալ գմբեթի տակ, իսկ հետո եկան միաձուլվեցին՝ ճեպընթաց վերափոխվելով հրեղեն ու լուսե սյան, որ, իջնելով երկնքի ամենաբարձր տեղից, տիրաբար մխրճվեց-խրվեց հողի մեջ, ճիշտ այնտեղ, ուր իմ կանգնած տեղն էր:

Ականջակոչ աղաղակի ու վայնասուն սարսուռի մեջ հունցվող – տրորվող խառնամբոխը ընկրկեց, հետ քաշվելով՝ գետնամած տապալվեց հողի մերկության վրա ու բազմաչք, բազմաբերան որդերի

Սաշա Յովսեփյան-----

ճիվաղ բազմությունը իրենով ծածկեց՝ տարածվելով նրանց վերքաբաց մարմինների վրա, ագահաբար ըմբռնվելով եղածը:

Իսկ հրեղեն սյունը անթերի ալիքվում էր՝ երկնի լազուրից իջնելով, ինչպես ցայտող ջրվեժի լուսեղեն սահանքների ձ–վածքը՝ գեղեցիկ ու հրաշատեսք, – կարծես կանչում, հմայում էր անխոս:

Եվ հանկարծ, լուսեղեն շիթի ալիքվող կողն ի վար ու նրա գունագեղությանը ներդաշնակ , իջավ հյուսածո պարանի մի ելարան, սահելով եկավ դեպի ինձ ու հավեց ձեռքիս՝ կանչելով անվերջ ու քնքուշ:

-Արի՛, արի՛...

Ու տարավ դեպի վե՛ր, վե՛ր, ուր երկնքի ամենաբարձր տեղն էր, այնտեղ, ուր, չգիտեմ, սկսվու՞մ, թե՞ ավարտվու՞մ էր պայծառակերպ լույսը:

Ու հենց այնտեղ, ուր երկնքի անտեսանելի փեշը ալեծուփ սյան եզրին մի շրջանով ավարտուն է դարձնում լույսի շիթը, նրա եզրագծին նկատեցի ու տեսա հրաշալի երփներանգ ծաղիկների մի փունջ, որ տատանվելով սահում-գնում էր վար ու վեր՝ անկումի վերջնական հրամայականով:

Իսկ ներք-ում, ուր դեռ արյան ծարավի կանչվածները, շնչակտուր ու շնչահեղձ լինելով, տենդահար լափլափում էին իրար, տագնապած հոգիս մղկտում ու լալիս էր անկման եզրից առկախ լուսողող ծաղիկների համար, որոնց հրաշալի նեկտարաբույրը խաղում ու վետվետում էր երկնքի անափ խորխորատում:

Ու գնաց, գնաց փրկարար ձեռքս, կարո՞ղ ես ասել, թե ում կամքով, Տե՛ր, հասավ ու վերցրեց փունջը հրաշագեղ ծաղկանց ու հրելով տարավ այնտեղ, ուր լույսի հրաշափառ միջուկը՝ պայծառակերպված բյուր-բազում անգամ, շատրվանում էր ցայտաղբյուրի պես, հենց գմբեթի տակ, անսահմանի մեջ:

Եվ տեսա, թե ինչպես երկնաբնակ ծաղիկները երիզվեցին լուսապսակով, իսկ հետո լուրջան մեջ պատկերի պես համրացան, ինչպես հուշարձան՝ առաջին լուսաշերտ սյան պատվանդանի վրա:

Իսկ հետո այնտեղ՝ գմբեթից էլ վեր, ուր գրեթե չէր եր-ում տարածքի ավարտը, լուրջունը ճաք տվեց, իսկ այնուհետ- շրջանած- ծիածանվեց անվերջ ու անվերջ, ու նրա խաղացկուն փեշերից իջան ճերմակ ծաղկաթերթեր մազերիս ս- տարածքի վրա ընդմիշտ:

Գա՛նս սրբասուրբ, անմե՛ղս, քեզ շնորհված երկրային օրերի բեկվող ու չբեկվող գործերը դեռ կիսաճամփա, ո՞վ էր, գիտե՞ս, որ եկավ անկոչ ու անհրավեր, շեշտադրված՝ որոշելու քո փոխարեն այն, ինչը ջրում չբռնված ձկան պես անորոշ լողում էր երազանքիդ աշխարհում:

Ո՞վ կանչեց, երբ կանչողների մեջ դու բացակա էիր, իսկ նա՝ ճակատագիր կոչվող ս- շունը՝ անանուն ու համառ, հաչում էր անեծքի պես օրերիդ վրա:

Չկամ, ինչպես դաշտային փուշ, եկավ, շուլալվեց կյանքիդ նրա ս- հաչոցը՝ չարախիսնդ ու համառ, իսկ դու, հավատավո՛ր միամիտս, քեզ փորձության ենթարկելով, փնտրում էիր անվարան լույսի շքեղ բանալին խավարի չբացահայտված տիրույթում, փորձում էիր բացահայտել տիեզերամերձ ու անհասանելի, անվերնագիր տարածքներից մինչ- անվերջավոր աստղաշխարհի անորոշ եզրերը ու իմացությանդ երբեք չառարկող բանականությանդ հետ ի մի, շաղախված նրան ու ներդաշնակ, վերադառնում էիր, ինչպես երկար սպասված հույսը՝ բերելով մարդկանց երկիր քո իսկ բացահայտած գաղտնին:

Ու մի օր, ի վերուստ նախանշված, թե չարակամորեն պարտադրված, տեսա հենց քեզ, խոնա՛րիս, - նրան, որի անիծյալ անունը քո բաժին իմաստուն պարմանությունը ընդմիշտ ջնջել-մաքրել է իր էջերից, հաշտ նստած կողք կողքի ու մտերմաբար, ասես նախաստեղծ այս աշխարհում ոչինչ չի եղել, գրուցելով ու խոսելով բացել էիք ժամանակի փակ փեղկերը - առանց բարձրաձայնելու խաղաղ հաշտվում էիք բոլոր վիճելի տարածքների կնճռապատ հարցերի շուրջ, ուր քո ստեղծած լույսի հավերժ թագավորությունն էր խոսքիդ գործողամբ:

Իսկ հետո, երբ նա ինքնագոհ գնաց-կորավ ՝ ծածկվելով մշուշի թանձր շերտերի ծալքերի մեջ, հորիզոնից այն կողմ, - հետքի տիպա՞րձագանքը մաքրեց ժամանակի ամենագոր անձր-ը, պարզապես ջանադիր քերելով լվաց իր հիշողությունից՝ իշխանությունը հանձնելով Ոչնչին, այն ժամանակ, գուցե - հենց այդ պահին դու հոգևած նստեցիր բաց դռան շեմին - հիշեցիր օրերդ անմնացորդ, որ եկան ու անշուշտ անցան:

Ու գիտեիր, ավա՛ղ, գիտեիր՝ որտեղ է վերջին կանգառդ ու շտապում էիր՝ չվարանելով, ու երիցս շտապելով էլ թվերի խորհրդավոր քառասյին աշխարհից հպարտորեն ու չպարտված գորավարի պես վերադառնում էիր քո երազած ու օրհնաբանված երկիրը, որի նվիրյալ թագավորը ինքդ էիր՝ պարզ ու միամիտ, ինչպես հրաշափառ ու սքանչելի Մանուկը՝ խելացի, գերիզոր - իմաստուն, որ պատգամված

Վարք Նարեկի-----

Երևախախտմամբ, ուր քո պաշտելի Տիգրան Մեծ արքան, հազարամյակներից վերադառնալով, Նոյն հապատակի նախաստեղծ երկիրը քեզ հանձնեց, հանճարս:

Բայց դու չուզեցիր հավատալ վերջին կանգառի գոյությանը, որը իսկությամբ արդեն հետապնդող ստվերդ էր՝ պնդաճակատ ու համառ, ինչպես քեզ պարտադրված ճակատագիրը:

....Օրերի տխուր ցուրտը անընդմեջ ու դանդաղ, խոնարհ ու հաշտ նահանջում էր՝ չկասկածվող իր պարտության հետ մտերմացած, – ար–ի ընդունելի տաքը, հերթագայող ամսվա՝ փետրվարի վերջին սահուն ու ողորկ, թեք, ուղիղ կամ կոր գյուղական տանիքների վրա խնամքով հարդարված ու կանչող սավանների թիկն տված, տիրաբար ու ինքնագոհ համբուրում էր իր գրկում խլրտացող ձյան ճերմակ մարմինը:

Մեծ ու փոքր կտուրների՝ քառակուսի թե ուղղանկյուն զգացումներից ծնված ծլթոցների կաթիլները անցնող դարձվոր քամուն երկար սպասված բամբասանքի պես տալիս-ամնում էին ասելիքը՝ չվիճարկելով այս պատմության հավաստիությունը, որը ոչ յոթ սարի հետ–ում թաքնված հեքիաթ էր, – ոչ էլ՝ անծանոթ ու օտար ականջներին կախ տալու գիտել:

Ճնճողիկների մի քանի հետաքրքրասեր, վաղահաս զույգեր, թվում է, թե հենց այնպես եկան ու թըճ իջան սառը կաթիլքով ինքն իրեն սնող հանդարտ ջրափոսի մեջ – ամոթի սահմանն անցնելով՝ արձակ ու համարձակ, բացլանք ու մերկատոտիկ անամոթների պես տրվեցին լոգանքի՝ փորձելով ժամանակ առ ժամանակ հրաշալի հորինված այս իրական թե չիրական պատմության իմաստը միամտորեն շարահյուսել՝ թե հենց այսպես է բարբաջել անտարբեր ու պաղ կաթիլքը դարձվոր քամուն:

Պատուհանի նեղ քառակուսու՝ ասեղնակար գարդանախշերի կամավոր պարտադրված տիպիկ ներկայությունից զերծ ու ողորկ ապակին փոխնիփոխ ու վախվորած անդրադարձնում էր դրսի՝ գլխիվայր շրջված բնապատկերի ամբողջությունը, ինչպես որ կար:

Փոքր եղբայրը անշարժ կանգնել էր պատուհանի հնամաշ փակ փեղկերի հարթության դեմ դիմաց՝ փորձելով ճնճողիկների՝ բնապատկերին չներդաշնակվող խաղը համադրելով մեկնաբանել ջրի օղակվող անդրադարձում կարմիր, սառած տոտիկների առկայությամբ – թ–իկների անվերջ թափահարվող աղմուկի մոռացված վեհությունը մաս–մաս տեղափոխել ճերմակ թղթին ծնվող ուրվանկարի վրա:

Բայց պահի անորոշ, անմեկնելի ամբողջությունը եկավ, հավաքվեց ուղեղի տագնապահարույց մի անկյունում՝ հարցի ձ–ով տատանվելով ու կայունանալով. փորձեց հասկանալ, մեկնաբանել տեսածի իմաստը, սակայն խճճվեց, խճճվեց ու ելք փնտրելով՝ եկավ, դիմեց մեծ եղբորը՝ Նարեկին.

–Մի՞թե չեն մրսում այս փոքրիկ, թույլ արարածները ու չեն տեսնում, թե ինչպես ցայտող կաթիլքը, ջրափոսի պռնկին չհասած, կրկին սառցակալում է:

–Ճիշտ ես,– պատասխանեց Նարեկն ու հայացքը կտրելով Շլիմանի հաստափոր գրքից՝ ասաց,– **ցանկանում ես լսել բացատրությունը,**– թուղթ ու գրիչ վերցնելով՝ սկսեց. **– Երբ ջուրը դեռ ընդհանուր սառած մակերես չէ, տեսականորեն ու նա– գործնականում այն որոշակի բարձր է գրոյից: Ենթադրենք՝ այս դեպքում ճնճողիկի ոտքի մակերեսի յուրաքանչյուր մմ քառակուսու վրա գրոյին մոտ սառնության ազդման հնարավորության չափանիշը ելնում է նրա...**

Ու տեսնելով փոքրիկ զարմանքից կիսաբաց բերանը, ուր մեկնաբանված եր–ույթի իմաստը, մի պահ խավարում առկայծող մոմի պես հանկարծահաս մարելով, ավելի անորոշ դարձրեց ստվերված պատկերների ներկան ու անհայտը. ճիշտ այդպես էլ աչքերի լայն բացվածքում հայտնված հարցականները, ազատ անկմամբ հավաքվելով, կոպերի վրա ծանրացան, ու փոքրը շփոթված ճպճապցրեց թարթիչները:

Նարեկը ժպտաց փոքրիկ միամիտ անգիտության վրա.

–Չիմա ավելի պարզ կբացատրեմ, եղբայր:

Եվ գրչի ծայրից կյանք առնող թվերի անվերջ բազմությունը անապատի դատարկի վրա շար ու հար ընթացող ուղտերի քարավանի նման շարժվեց վստահ դեպի հորիզոն՝ հպարտորեն տանելով մի կար–որ ու թանկարժեք բեռ ավագածածկ տարածքի մյուս ծայրում ծարաված սպասողների համար, իսկ ընդհատվող անհաշիվ գծերն ու նրանց տեսակների բազմությունը քամու պես երբեմն–երբեմն փոխում էր բնապատկերի տեսքը, իսկ նա հմուտ քարավանապետի պես տանում առաջնորդում էր իր իմացության ընտրանին աստղաշխարհի մի ծայրից մյուսը, որպեսզի հավերժի դատարկությունը ծածկվի կանաչ տարածքներով:

Պապը ոչ կորամեջք էր – ոչ էլ ծեր, սակայն տարիքը մի քիչ, չնկատվելու չափ առել-տվել էր ժամանակին ու աշխարհի եկած առաջնեկ թռռան մեջ խանդաղատանքով, ուշադիր փնտրում էր պատմական հեռու անցյալ դարձած իրողության ծալքերից վերադարձած իր կորած, խեղճ ու տխուր աչքերով, ոտաբոբիկ մանկությունը, որ հիմա եկել, շոշափելի, սուս ու փուս կանգնել է իր դիմաց այս հրաշալի, գեղադեմ մանկիկի տեսքով, ու նրանից ճառագող լուսե ժպիտը ավիշի պես դանդաղ, բայց նեկտարաբույր ու լիարժեք լցվում է պոնկեպոնոնկ պապի՝ ար-ի ջերմից արդեն ավյուն ու կյանք չստացող հոգևած երակների մեջ, ու արյան մոլոր վազքը, լեռների քար ու քռայից անապակ ու խենթացած իջնելով, առվակի պես իրենով ողողում է կարոտից տրոփող սրտի ազնիվ տարածքը՝ ապրելու ծարավ – ուժ տալով մանկության քաղցրություն չտեսած պապին:

Մեծ ու փոքր խենթեր էին ասես բնության այս երկու անմեղ ստեղծագործությունները, որ ցայգալույսի շողերի հետ ձեռք ձեռքի տված գնում, համերաշխ ձուլվում էին հորիզոնի բախտորոշ, կարծր եզրագծի աջ ու ձախ կողերին ու հետո խայտում էին կուտակվող մշուշների բաց ու փակ խորքերում՝ մեծ աշխարհի՝ իրենց բաժին տեսանելին մեկ անգամ –ս հայտնագործելով:

-Է՛յ, հե՛յ-հե՛յ...

Ձայնը պապինն էր որոտընդոստ, ամուր կյանքով իմաստնացած, որ աշխարհի եկած փոքրիկ մարդու ներկայությունից խենթացած՝ Ելում, բախվում էր երկնամերձ ամպերի քարեղեն քիվերին՝ անհասգիստ անելով տիրական, մռայլադեմ նահապետ արծիվներին, ու նրանք թ-երի հզոր թափահարումով պոկվում էին ծանր ու մեծ քարափի սրահար ծերպերից՝ կապարագույն ոտքերով հետ իրելով գերկարծր ապառաժը, ուր մանր ու մեծ խիճ-բեկորները գլոր-մլոր գահավիժում, իջնում էին անդնդախոր ծորերը ու անկման հառաչը, կուտակվելով, աղմկահար որոտում էր գարնան խելահեղ ամպրոպի պես, – ինչ-որ տեղ, կարծես թփուտում, վախվորած եղնիկը սրում էր ականջները ու համրանում՝ վախն ու տագնապը սրտի մեջ:

-*Է՛յ, հե՛յ-հե՛յ*,- պատասխանում էր Նարեկ անունով աշխարհի եկած փոքրիկ մարդու քնքուշ ձայնը,- *հե՛յ-հե՛յ-հե՛յ*...

Թ-աբաց արծիվները հանգստացած ու վեհորեն վերադառնում էին քարափների կատարների իրենց անհասանելի հանգրվանը՝ բա՛րձր-բա՛րձր, ամպերի մեջ խճճված գագաթներից հսկելու դաշտավայրի խաղաղ անդորրը, իսկ եղնիկը, եր-ի թե այնտեղ, կանաչ թփուտներում հանգստացած՝ միամիտ դուռնը մեկնում է վայրի վարդի՝ կարմիրով զուգված թփուտին՝ անմեղ աչքերի մեջ կյանքը մի անգամ –ս վերաիմաստավորելով:

Ու երբ նրանք՝ մեծ ու փոքր խենթերը՝ կորած մանկությունը գտած իմաստուն ծերուկը – կյանքի իմաստը իր համար հասկանալի դարձնող փոքրիկ հրաշքը, օրվա հոգևության փոշին աչքերի ու ոտքերի վրա շաղախված վերադառնալով, նստում էին կարպետի զուլավոր նախշերով ծածկված թախտին՝ մեջք մեջքի, իրար նեցուկ ու հույս դառնալով օրվա երկու կեսերի պես՝ միաձույլ ու անբաժան:

–Փոքրի՛կ, ի՞նչ կար աշխարհում, -հարցնում էինք Նարեկին՝ ակնկալելով անսովոր պատասխան:

-*Աշխարհը մե՛ծ, մե՛ծ է, իսկ ես՝ փոքր-մոքր: Մեծ աշխարհը փոքր մարդը կարո՞ղ է ճանաչել:*

Իսկ հետո քնելուց առաջ դավադիր ժպտում էր պապին.

-*Քո պատմած հեքիաթը կիսատ մնաց, պա՛պ, աշխարհը մե՛ծ, մե՛ծ է, իսկ քո պատմած հեքիաթը՝ փո՞քր-փո՞քր*, -ու խորամանկ կկոցում էր աչքերը, իսկ քիչ հետո, թե՛ *գնամ երագիս հետ-ից*,- ու քնքուշ գլուխը դնելով բարձին՝ փակում էր հոգևած աչքերը:

Չգիտեմ՝ սովորական, թե պատահական մի օր, երբ երկրային մուրը – լույսը չէին սահմանազատվել, պապը, աշխարհի դարդ ու ցավից հոգևած, սուսուփուս պառկեց թախտին ու ծանր տնքաց: Ձայնը բնաբեկ թռչունի պես անզոր պատեպատ զարկվեց ու անհույս զարկվելով էլ մեր աչքերի առաջ կուչ եկավ խեղճացած պապի ծարաված շուրթերի անզույնի վրա – թպրտաց:

Յե՛յ -վա՛խ,- մրմնջաց պապը, ժամս եկավ, ս- աքլորը ծուղորուղու կանչեց ս- գիշերվա մեջ, ս- գնացքը, ս- ուղեգծի վրա սլաքվելով, գնաց անդդիդդ, -ու հայացքը անզորակից ու միայնակ գնաց, հասավ տեսիլքների հեռավոր թագավորություն ու շարժվող անհասկանալի ուրվապատկերների մեջ տեսավ նրան՝այն միակ ս-ազգեստին, որ հիմա պնդաճակատ համառի պես ահա եկել կանգնել է համրաձայն կաղնե փակ դռան հետ-ում ու ոսկրացած ձեռքերը իրար շփելով չարախինդ ժպտում էր.

-Եկար ու գնալու ժամանակն է, հա՞,- պապը կարծես հաշտ էր ճակատագրի հետ,- ուզածդ ընդամենը ա՞յդ է, ա՛յ կողքահաստ: Չէ՛, մի քիչ էլ կսպասես, համա՞նս, դեռ ասելիք ունեմ, հասկանու՞մ ես, - ու իրեն օղակող մեր երերացող պատկերից մարմրող ժպիտով կանչեց, իր մոտ բերեց լրջացած չորսամյա Նարեկին,- աստղերից ինչու՞ իջար, որդի՛ս. քո ինչի՞ն էր պետք այս տխուր աշխարհի ամենամեծ հեքիաթը,- իսկ հետո միջանցիկ քամուց փրկված մոմի երեր բոցի պես մի պահ պայծառացավ.-շնորհյալ գառնուկիս պահապա՛ն եղեք:- Անորոշ լռությունը ցավի պես թափանցեց

Վարք Նարեկի-----

մեր աչքերից ներս, իսկ հետո հեռու՛-հեռու՛-հեռու՛, անորոշ ու ծավալվող տարածքից զորավոր վերադարձողի պես աղաղակեց.- Նարե՛կ, Նարե՛կ...

Ամեն ինչ վերջացավ, ու մեր ցավի վրա իջավ դաժան ու մեծ լռությունը...

Մարդկային ծովի փոթորկվող ալիք էր կարծես ձեռքերի ճոճքի վրա դեգերող պապի միայնակ մակույկը, որ գնում, հեռանում էր դեպի հավերժության սահմանը:

-Մի՛ տարեք պապիս, խնդրու՛մ եմ, մի՛ թողեք հեքիաթս կիսատ,- ու բռնելով սգվորների փեշերից, արգելում, խնդրում էր.- *մե՛ծ ծով, դու երկնքի չափ ես, ու պապիս նոր տունը քո փեշին է, չէ՞,-* իսկ հետո նստեց չինական վարդի ծանոթ թփի տակ.- *պա՛պ, երբ ես էլ մի օր քո հետ-ից գամ, ինձ կպատմես, չէ՞, հեքիաթի կեսը, դու ինձ չես խաբի, չէ՞, պա՛պ,-* ու փոքրիկ ձեռքով մաքրեց թավիշ այտին գլորվող բյուրեղացած, տխուր արցունքը...

Յուրաքանչյուր երկնային ճամփորդ ամեն օր ավելի է հեռանում մեզնից՝ մշտապես մնալով որպես բարի խորհուրդ - հիշողություն. ուրեմն մտապահենք, որ լուցկու հատիկների պես մենք էլ, մի ակնթարթ բոցավառվելով, անցնելու ենք հավերժական տիեզերքի հիշողության ծալքերով՝ որպես երկնային ճամփորդներ՝ դառնալով նրա անբաժանելի մասնիկը:

Թ-աբաց, տագնապահար, միայնակ մի թռչուն լքված հալածյալի պես թրատեց երկնքի մշուշվող սահմանն ու իր մորմոքող երգը չավարտած՝ ահասաստ պապանձվեց մոշի ս-ապտուղ թփուտում ու անասելի խուլ լռությունը երկնքի փեշերից գլխիվայր կախ ծորաց ծանր ու անասելի - իջնելով տարածվեց ու սփռվեց այս ծեր աշխարհի կնճռապատ, հազարամյա դեմքին...

Խորհրդավոր ս- գիշերը եկել, երկտակվել-չոքել էր լույսի անպարագիծ եգերքին - քինախնդիր, ճահճահոտ երախը մեկնել, դրել էր նրա անամպ ակունքին՝ փորձելով հագուրդ տալ ներսը աղտեղող մաղձին ու անասելի թույնին. - քանի որ չարի կամքի չհակադրվող-կատարողն էր, ավարառու - ավերակող մտքերի սադրանքն էր նրան հրահրող-տանողը, կատաղաբար գոմռում ու մեկ-մեկ էլ ոռնում ու վայրահաչում էր՝ կատաղած անգորությունից, մարմնի այլակերպ ու անկանոն օղակները փաթաթելով ու կապկպելով սարսափից մեջբակուզ բարձունքների անպաշտպան ու խոնարհ մարմիններին:

Բայց երկրի վրա լույսի անպաշտպան ակունքը գնալով զորանում ու զորեղանում էր՝ պահ ու վայրկյան չկորցնելով - շատրվանելով վեր, հետո ավելի վեր ցայտելով՝ խաղացնում էր կաթիլքների համազարկը երկնքի ակոսված ծիրում - ծիածանվելով կապում-ամրապնդում էր երկնքի - երկրի անդավաճան սերը:

Յերարձակ հարսը կանաչ չտրորված դաշտի մեջ փայտյա փոքրիկ տաշտը դրել էր բաց երկնքի տակ -, ամպի անաղարտ ճերմակը այլուր դարձրած ու դաշտի սրսուռ ցողը նրան խառնելով, շաղախում էր խմորը, իսկ այնուհետ- գունդ ու կլոր քարերի հարթ կողերի վրա ձեռքի ափով քնքուշ կնքում էր աստվածային նեկտարը, մի քիչ ար- ու մի քիչ էլ գունեղ ծիածան հավաքելով փեշի մեջ՝ կից էր անում ափերով ու տաշտի շաղախի վրա մաղում-ցանում էր երգելով. ասես մանանա էր մեղեդին ու խունկ-խնկաբույր էր խոսքը:

Եվ հանկարծ ու հանկարծահաս ս- գիշերը կծկվեց, կուտակվեց իր շուրջը, անգոր երախը դանդաղ հետ քաշեց լույսի ծուփ-ծուփ ակունքից, - հագիվ, քիչ-միչ տամկացած անզգացմունք շուրթերը ճաքեցին ու ճաքճեցին, ինչպես մի անգամ պատահաբար հեղեղված դաշտի ընդմիշտ ծարավ մնացած դատարկ ամայությունն ու արմատի զորություն չունեցող խաբված ցողունը, որ նման է շորորող փետրախոտի - ծափ զարկող քմահաճ քամու պատրաստակամ կամակատարն է:

Իսկ երկնքի ծեծծեքուն ծովը միայնակ տան գլխավեր-ում անհասանելի ու անպարագիծ է, եզրը մշուշված է, ոսկեզօծ, որ փախցնում-տանում է անմեղ հայացքն իր հետ՝ ծովի հրաշագեղ հայելու վրա վետվետալով, որպես անբեկանելի ուղի - հավերժի ճանապարհ:

Պապը վերադառնում է երկնային ուրտներից՝ ոտքի թաթերը հագիվ աստղափոշուն հպելով, իսկ ճանապարհի ուր-մուրն իջնում է անսահմանից՝ սահուն, համաչափ, հեռու՝ հեռվից, ու լույսը ծաղկածիծաղ շարժվում է միաձուլյ ու անբաժան, նրա չորոշմվող հետքերով:

Հարսը հայացքը դարձնում է վե՛ր-վե՛ր ու ձեռքի ափով մաքրում է կուտակվող մշուշն աչքերի, ու շփոթ միտքը վարանում է ընդունել տեսածը երկնքում. մի պահ կորցնում է իրականի ու պատրանքի չբեկվող սահմանը շղթայող համառ տրամաբանականը, բայց համարձակությունը ի գեն կոչելով ու պատրաստակամ զորակցում է նրան, – հարսը շարժում է ծարավ շուրթերը, – բառերի խոնարհ ու անձայն պարսը, դեռ չթ–ած, վերադառնում է կասկածավոր դեպի փեթակ բերանն ու համառ լռում:

-Հա՛րս, հա՛րս.- պապի ձայնը քարին փշրվող զարկվող ջրի կաթիլի պես հավում, դողանջում է հարսի ականջներում, ու արձագանքը քարավանատեսք, հանդարտ, սահուն իջնում է պարանոցն ի վար.

Սաշա Հովսեփյան-----

Վեր առ ձեռքերդ խմորից
Ու խմորդ, հա՛րս, թող տաշտին,
Ել հեռացիր քո բնից
Ու տաշտդ թող ս– դաշտին:

Լալիս է հարսը հուսահատ ու անձայն սիրով շաղախած ճերմակ-ամպեղեն խմորի վրա, արցունքն անարգել հոսում է, հոսում ու վտակի պես հառաչում, փախչում է խենթացած, նրբին ձեռքերը ճգնում է հանել խմորից ու լվանալ, մաքրել երկնքի պսպղուն կաթիլքի տակ, բայց անզորությունից փլվում, հուսահատ նստում է տան շեմին:

-Հա՛րս, հա՛րս,- ձայնում է պապը, ա՛խ, կրկին.

Տունդ տանիք չունի,
Պատերը փուլ են եկել,
Նման ես անտուն թռչունի,
Մազերդ ճերմակել են թել-թել:

Հարսը հեծկտում է, ու լացի ձայնը բեկբեկ փշրվում է փխրուն խեցու պես, ձեռքերն անձայն հանում է խմորից, տանում, դնում է ջրվեժող վարսերին, թախկում են մազերը ճերմակած, իսկ հետո մշուշ է իջնում ս– քարից, գալիս, չոքում է իր դիմաց:

-Հա՛րս, հա՛րս,-պապի ձայնը ասես մոլորվում, գերվում է թուխ ամպին, ու սիրտը, զարկելով անորոտ մղկիտից, մեկեն ուզում է փերթվել, արցունքը ծորում, իջնում է այտերին, իջնում է անանուն խորհրդի տարածքից ու մարում դաշտի հոգնաշատ ունկերում, իսկ հետո մշուշի պես աննկատ ելնում, շարժվում է դեպի վեր, գնում, հասնում է հենց այնտեղ, ուր քիչ առաջ պապն էր լույսերի մեջ շրջանակված:

Երկու միանման, կից սենյակները կարծես խորանարդներ են, ու ներսում դիմադարձ խավարը ճարպիկ հիպնոսողի պես իր չերերող կամքը թելադրում, պարտադրելով խեղճացնում է նրա չդիմադրող չորս անհանգիստ անկյուններին ու հպտիտ Էուլյան մեջ չարախիճ հրճվում է իր ճղճիմ հաղթանակով:

....հառնակ ժամանակը, ի հեճուկս անհայտի չբարբառելով լավ ու վատ, հրում, իրարով է տալիս չորսնիստ խորանարդները, ասես խաղալիք զառեր են ու հենց ինքը ամենակարողի իրավունքով անեզր տարածքի տիրոջ հետ անզիջում մարտավեճի է բռնվել. դուլզն-ինչ չմտահոգվելով ու առանց ենթադրություններ անելու աղմկում է, թե գուցե կա մեկը, ով այս պահին պարտադրված ու ծնկաչոք պարսավվում է ճակատագիր- զորեղի կողմից, ու նրա տարաբախտ զոհի թափառ հայացքը շոշափում է երեք խորանարդի խուլ պատերը՝ իզուր դուռ ու ելք փնտրելով այնտեղ, ու ոչինչը որոշողն է:

Բայց կարծես ամեն ինչ անկայուն շարժվում, մշուշվում է, այնտեղ, ուր հարսը քնած էր մահճակալին՝ հոգու մեջ ահասատ տեսարաններ, որ գալիս, սեղմաշուրթ կուտակվում են հենց իր գլխավեր–ում ու ճոճվելով ու ճռնչալով գնում-գալիս են անկյունից անկյուն:

Ու հարսը, քնած թե արթմնի, տեսնում է դեպի իրեն ձգվող տիեզերածավալ ուղին ու նրա ալիքվող, առկայծող մակերեսին ցրված, վարուվեր նժարվող աստղափոշին, ուր պապի լույս ոտնահետքերը պատգամաբեր ասույների պես անսպասելի մերձենում, միաձուլվում են ու բռնկվելով հրավիժում, կաթիլ-կաթիլ հալվում, անկվում են ուղ–որ երկրի – հավերժող երկնքի միացման տեղում:

Լռությունը դեռ կասկածավոր կծկվում է իր մեջ ու արթնացումը անշտապ ու պատրանքախաբ զգացողության պես աններդաշնակ ու գունաթափ, ս–, անթափանց գիշերվա մեջ սպիտակագգեստ քայլում, անշշուկ մոտենում է մահճակալին՝ անզգույշ հավելով հարսի բաց ձեռքին ու շտապ հեռանում է՝ ասես վախենալով ուշանալ ս– ճակատագրի նախանշած գնացքից:

Հարսը ճշում է վախժորած – լսում է փութով հեռացող քայլերի ձայնը՝ կըտ-կըտ,կըտ – տեսնում, թե՞ միայն զգում է, ավա՜ղ, խորանարդի արգելքից այն կողմ, խավարում հեռացող որդուն:

-Հա՛րս, հա՛րս,- ծով երկնքի հեռու իր տանը պապը լալիս է հուսակտուր, ու արցունքը ամպի փեշից թափվում է այս տխուր երկրի վրա՝ կա՛թ-կա՛թ-կա՛թ:

Հարսը մեն մի ակնթարթ հույսով նայում է արցունք անձր-ող չարագույժ երկնքին՝ տեսնելով, թե ինչպես են գլորվում իր տառապած այտերի վրա նրա սգագույն խորշակող կաթիները, ու հասկանում է ամեն ինչ, ծնկում է անկյանք անձր-աջրի մեջ՝ ձագը կորցրած թռչունի պես անվերջ, անվերադարձ կանչելով:

-Նարե՛կ, Նարե՛կ...

Աշխարհի անտեսանելի մասը, որը մշտապես մեր անբաժան ուղեկիցն է, անտեսում ենք՝ երբեք իրավասու չլինելով: Սակայն հենց այդ չընկալված մասն է, որ կարող է մեզ անսպասելիորեն մատնել կործանման կամ դարերի միջով հասցնել բանականության կողմից նշված տիրույթ:

Մեր զգացական աշխարհից դուրս կյանքը առանց մեզ էլ ինքնին գոյություն ունի, իսկ հակառակ տրամաբանելը պարզապես մեր մտածողությանը կորդի ապավինել ունայնությանը:

Վարք Նարեկի-----

Թփագուրկ ձորի անկանոն շուրթը հոգնած կախվել, ծանրացել է նեղ, նիհարիկ հովտում կիսաթեք փռված ու կողերը ծալծալ դաշտի անորոշ դեմք-ձ-վածքի վրա, ու ասես նախապես ինչ-որ չասված, չարտաբերված մի բան եկել, ծանր դեմ էր առել անհագուրդ կոկորդիս, փնտրելով ու ելք չգտնելով կուտակվել, ահագնացել էր ծանրությունից, իսկ տարաբախտ շուրթը ճկվել ու դողեղող կախվել է:

Ճմռված, խարակված դաշտի ստվերամած, փուլեկ կողերում գորշացող ձյունը դեռ չհալված խլրտում, խաղում է մարտ ամսվա տաքից ու օր անց, ավելի ու առավել կծկվելով, կրճատում, հավաքում է նախախնամությամբ իրեն հատկացված անհարմար սահմանավարտը, ուր մինչ այդ ահեղասաստ տիրակալ էր ինքը ու չարակամ թելադրող:

Ծաղրված ձորի դեմ առ դեմ հենց նա է՝ հսկայամարմին ու խոժոռ ժայռը, որ արհամարհանքով, հրամայական նայում, հսկում է վերից-վար իր քարակոփ ոտքերին կարճ կտրած փեշերը անխնամ փռած դաշտին – մերկ ձորին, որի աղքատ խեղճությունը երիցս ծաղրված կախ, տատանվող շուրթն է:

Ներք-ից, ուր երկնքի տեսանելին սահմանափակ է, թվում է՝ ավելի ահասարսուռ է տիրական բազենների չհաշվարկվող գահավեժ սլացքը, որ ձորահատակի կողերի մեջ շնչահեղձ առվի հայելում արձանագրված վրձնահարված է, իսկ հետո թեթե՛, անսկատ քամուց հաշտ փշրվող մանր ալիքը այլափոխում, ձ-ակերպում է պատկերը ու տեղը մնում է արձանագրված, ենթադրված մի անսովոր առասպել, թե ինչպես տիրակալ ժայռի անշարժ ծնոտի տակ անձավակուլ երախ-խորխորատի մահառատ եզրին տարիներ, իսկ գուցե թե դարեր առաջ, ո՞վ իմանա, ձորում մոլորված, խաբված առվի համար մենամարտելով ճակատել են հսկայաթ-երկնակուլ բազեն – մարդակեր հրահարք վիշապը:

Այս ամենը ես մեկիկ-մեկիկ պատմեցի ուսանող հրաշալի որդուս, երբ հոգնած նստել, հանգստանում ու սրտաբաց խոսում էինք երկրային ժամանակավորի – երկնային հավերժականի երբեք չլուծվող առեղծվածների շուրջը՝ կիսատ ու չկատարված թողնելով խաղողի անջրդի, չորացած ու խճճված ճյուղերի մեջ սեղմված մետաղյա չենթարկվող բարակ հենալարերի թույլ ամրացումները:

Չգիտեմ, հերթական թռիչքն էր այն նույն բազեի՞, թե՞ սա բոլորովին ուրիշ մեկն էր, սակայն ավելի խոշոր ու ավելի հզոր ձայնելով ու անհասկանալի կանչելով պտտվում, սավառնում էր դաշտի սահուն կիսաթեք հարթության վրա թ-աբաց՝ թափահարվող ստվերը իր թռիչքի հետ ճոճելով վար ու վեր:

Մարգաթմբի վրա չորացած խաղողի կանոնավոր բները՝ ցանցառ խուզվածքով, միագիծ ու շար-շար, ասես ժամկետային գինվորների մի կերպ հավաքած դասալիք վաշտ լինել, որ առանց ոգ-որության, անորոշ սպասում էր կարգադրության:

Ու ինքներս մեզ հրամանատար կարգելով նույն մարգի հակադիր, հեռու բ-եռներում, շարունակելով ստուգել՝ հայր ու որդի համբերատար կարգավորում էինք անփութների բաց, փոշեծածկ օձիքներն ու թույլ, անկյանք գոտիները:

Հրաշալի գրույցից մնացած տպավորության չբացահայտված ծվեններն էին դեռ լողում ներքնաշխարհիս անամպ ու մաքուր տարածքում՝ շեղելով ու բեկելով ուշադրությունս, թե՞

պարզապես հենց այնպես, ճակատագրի հերթական փորձությունն էր, երբ կտրված, հանկարծակի կտրված ժանգակներ մետաղալարի սուր ծայրը, պոկվելով, խրվեց ձեռքիս բարակ մազանոթի մեջ ու մի մի կտոր իր հետ առնել-տանելով՝ հանդարտված հետ քաշվեց:

Ազատություն ստացած արյունը դուրս ցայտեց՝ անզուսպ ճանապարհի հարթելով հազիվ կանաչած հողին, ու մի պահ երերացող, մշուշված հայացքիս առաջ տեսա մարզի հակադիր, հեռու եզրից դեպի ինձ եկող, շտապող Նարեկին:

-Մի՛ վախեցիր,-լսում էի նրա նուրբ, խորհրդավոր ու տիրական ձայնը, որ թեթեւ-քամու պես սահուն, անաղմուկ լցվում, ծորում էր հոգուս մեջ՝ անվերջ հուսադրելով.**- ոչինչ չկա, ոչինչ չկա...**

Իսկ հետո տեսա նրա բարակ, արծաթագույն մատների հանդարտ, քնքուշ հպումը արյուն ժայթքող խելահեղ վերքին:

Տեսա, ճշմարիտ եմ ասում, նրա խորհուրդ հայացքի հեռու՝, անպարագիծ տարածքները, ուր երկնային անմեկնելի ուղիների աստղաշաղախ ճանապարհներով կյանք-թռչունները փութով վերադառնում էին դեպի ինձ:

Տեսա, թե ինչպես է հզորանում ու գործանում լույսի անսպառ, պայծառ հոսքը՝ անվերապահ կամրջելով անցումս մահառիթ անդունդի վրայով:

Ու երբ վերցրեց, հետ քաշեց ձեռքը ձեռքիս վրայից, տեսա լերդացած արյան գորշ դադարը կիսափակ վերքին:

Իսկ հետո աչքերի հորիզոնների մեջ տեսա սովորական ընթացքը երկրային օրերի, – նրա հեռացող կերպարը հանկարծահաս տաճնապեց ահախեղդ սիրտս, ու անանուն, հեռավոր մի տրտմություն թանձր մշուշեց իրողությունը, – հեռացողը աննկատ ներդաշնակվեց բնությանը՝ եր-ալով ավելի հաղթ ու ավելի բարձրահասակ...
Սաշա Յովսեփյան-----

Ու միայն մի բառ երեք հեծկտանքի պես եկավ անսպասելի ու թպրտաց, հառաչեց շուրթերիս.

-Որդի՛ս, հանճա՛րս...

Հակասական, թե՞ միասնական աշխարհի անտարիք իմաստուն մերժվածներին է թեր-ս վերապահված անարգել ու անդիմադիր վերադարձը դեպի հետ, դեպի ժամանակի ունայնություն, որտեղ բյուր ու բյուրեղացած պատկերների տիեզերածավալ ցուցասրահում անցյալի փառքերը իրենց վերապահված դերը մեկընդմիշտ խաղալուց հետո առեղծված վերլուծականը թողել են նրանց իմաստուն մեկնությանը՝ ըստ կասկածամիտ երկրայիններին, ու սեղմաշուրթ լռել:

Տիեզերական տարածության մեջ երկիր մոլորակը մի կանգառ է, ուր ժամանողները չեն ցանկանում ասել, թե իրենք որտեղից են գալիս, իսկ մեկնողները լռում են համառորեն, թե ուր են գնում...

Իսկ մի՞թե ժամանակի մեջ մեզ հատկացված չափաքանակը իրոք անցնում է ինքնակամ ոչ ավել, ոչ պակաս տիեզերական բաց ու փակ կանգառներով, ուր անտեղյակ ժամանողներն ու նույնքան անտեղյակ մեկնողները իսպառ մոռացել են իրենց ի վերուստ տրված խոսելու շնորհը, այն միակ հավաստի տարբերակիչ նշանը, որ անխառն բանականությամբ ամրագրված է homo sapiens-ներին – դեռ այսքանից հետո անասելի շտապելով՝ իբր թե մոռանում ենք, թե՞ արդեն վաղուց մոռացել ենք իմաստունների մարգարեությունը, որ անցյալի չտրվող լռության կարծրաշերտերից պեղելով սովորական մարդկային միտքը՝ հրելով տարել, հասցրել են Գիրք Գրոցով վկայված Լեռան գագաթը, ուր մի ժամանակ ծնրադիր չոքել, աղոթել է Մարդու Որդին:

Եվ նա, ով բարեպաշտորեն արթուն է մնացել այդ պահին ու հավատարիմ հավերժական ժամանակներին, որպես արժանի պարգե-, խոնարհաբար ձեռնադրվել է հրաշամանուկ – ընդմիշտ իրավունք է վերապահվել միմիայն նրան՝ գաղտնագերծելու անցյալի անորոշը – գալիքի հայտնի անսահմանը:

Վերից վար իմաստագուրկ զգացմունքը այսկողմյան աշխարհում ընդամենը տրորված մի ճանապարհ է, դեպի մեզ եկող խեղճացած, կարկատված մի փողոց՝ կծկված գավառական անշուք քաղաքի կենտրոնից մի ափաչափ հեռավորության վրա, ուր կասկածավոր համակարգվում են ոչ միայն պարտադիր կամավոր մեկնողները՝ գինվորագրվելով հայրենիքի ներկա – ապագա սահման համարվող քար ու հողին, այլ–նրանք, ովքեր դրա իրավունքը առայժմ չունեն:

Այլ երկրներից սահմաններով գատված աշխարհագրական տարածքը չի կարող կոչվել հայրենիք, եթե նրա վրա ապրողները զուրկ են հայրենիքի զգացողությունից:

Իսկ նա ոչ միայն արտաքին բարեմասնություններով էր նման երկրային ընտրյալի ու բոլորի աչքին հենց այդպես էլ եր–ում էր, բայց – այնպես միաժամանակ մնում էր անհայտ աստվածային այն կատարելությամբ, որը, որպես անբաժանելի ժառանգություն, նախախնամության կողմից ազնվորեն ստացել է ի ծնե:

Իր ներկայությունն իսկ ավարտուն ու վերջնական դաս էր ոչ թե անհագուրդ ուտելու – անքանակ խմելու բուրժ կարողություն ունեցողների համար, այլ այն ազնվագույն մաքրվածների, ովքեր դեռ չկասկածելով հավատում են իրենց անարգել վերադարձին դեպի չարաղետ խավարին մեկընդմիջտ հաղթանակած ազնիվ լույսը:

Ահա անտրամադիր մի հայր – պայծառակերպ մի որդի դանդաղ բարձրանում են եռահարկ գինկոմիսարիատի շրջադարձ աստիճաններով, որոնցից յուրաքանչյուրի հիշողությունը հավանքար մաշվել է՝ տարիներ ի վեր ծեծվելով փոշոտ, ցեխոտ, անմաշ ու մաշված ոտք-ոտնամանների վար ու վեր, անընդմեջ հոսքից, ու հազիվ թե նրանցից մեկն ու մեկը հիշի, թե անառարկելի հրամայվածը , իր անպաշտպան ուսերը տրորելով, ինչպես իջավ ու գնաց. բայց ու՞ր, որտե՞ղ... գնաց գեւքի կոչո՞վ արդյոք հայրենիք կոչվող աշխարհագրական որոշակի տարածքի պահպանման:

Ուսերից կախ ու գույնը ճապաղ ուսադիրներով ինչ-որ մեկը ձ–ակերպում, ստուգում է փաստաթղթերը՝ անհամ ու մերկ սրախոսություններ անելով մսեղ, գունդ ու կծիկ քարտուղարուհու հետ, իսկ հետո բացաչք զարմանում՝ իր իսկ աղագուրկ անհամաբանությունները կատարելապես ըմբռնելով ու աչքով անելով Նարեկին:

Նարեկի անմեկնելի դիմագծերը հավաքվում, խտանում են, – անամպ դեմքի վրա գրեթե աննկատ հայտնվում է այն անհասկանալի, խորհրդավոր ժպիտը, որից մի դեպքում մարում, կորչում է անիմաստ կռվելու ցանկությունը, մյուս դեպքում հանկարծահաս փակվում է արյունահոս վերքի քմահաճ ակունքը:

Մի պահ, – ուսադիրակիր հրամայողը անակնկալ խճճում, ամբողջովին կորցնում է ասելիքը՝ իր անորոշ շփոթության համար մեղավոր համարելով անտեղյակ քարտուղարուհուն, բարկությունից կարմրատակելով՝ կրծում է բեխը – հաստատում պատանի ուսանողի տարկետման իրավունքը՝ միաժամանակ կասկածավոր ասելով.

Վարք Նարեկի-----

-Պատերազմ լինե՞ր, էս ջահելությունը գնար հերոսանար,- – աչքերի ծուռ խաղը դավադիր երկյուղում է մահվան հեռու, ահասարսուռ շնչից:

-Ովքեր խոնարհվում են պատերազմի Չարին, նրանք դեմ են բանականությանը:

Անսպասելի պատասխանը չենթադրվող, դիպուկ արձակված գնդակ է, ու նրա չհապաղված թռիչքը անվրեպ խոցում է քաջաբար՝ հավերժ քաջնազարականին թողնելով թրջված ու բեխակախ:

Հետո իջնում, խառնվում ենք փողոցի հ–քին, ուր կյանքը անձանձիր, անկայուն դերակատարներով խաղում, մաղում է չավարտվող իր անժանր ներկայացումը՝ հաճախակի ու անկիրք, ընթացքում փոխելով հոգնած դերասաններին, ու անանուն ներկայացումը, կրկնվելով, ձգձգվում, մնում է մշտապես անավարտ:

Մի քիչ քայլելուց հետո ասես ինքն իրեն զրուցում , թե՞ այս անգամ անորոշ հարցնում է ինձ.

-Գիտե՞ս, գնալու եմ 2008 թվին... բանակ... բայց եթե գնամ:

Տխուր մի զգացում որտեղից ուր թ– առած չղջիկի պես խցկվում է գիշերամած հոգիս ու տակնուվրա անելով մինչ այդ հրաշալի դասավորվածությունը՝ իրերի ընթացքը փորձում է շրջել գլխիվայր, ինչպես ինքն է՝ անհրապույրն ու մերժվածը:

-Եթե գնա՞ս,- զարմանում եմ՝ չհասկանալով նրան,- առողջ ես, ուժեղ, խելացի – տաղանդավոր, ի՞նչը կարող է քեզ խանգարել:

-Ոչինչը,- լսեցի դեպի ինձ հեռու՝ հեռվից եկող ձայնը՝ թույլ ու անորոշ:

-Ինչը՞,- թվաց սխալ եմ լսել, ու խոսողը ինքը չէր:

Նա նայեց ինձ շեշտակի, աչք չթարթելով, ու թվաց մեկը անսպասելի խփեց գլխիս, բառերը լողացին շուրջս ու արծիվ տեսած ճնճուկների պես թռան ցանուցիր:

-Մեծ Ոչինչը, Մեծ Ոչինչը,- լսում էի ես բառի արձագանքը, որ անսանձ ձիու պես խելահեղ սլանում էր անարգել դեպի անվերադարձ անդունդ:

Խորամանկ ժամանակը մաշված խաղաքարերի պես մեզ գլորում, նետում է աչ ու ձախ, նետում է անզգացմունք խաղատախտակին, – չարախինդ ու դավադիր ձեռքերը շփում, ագուցում է իրար, տեսնում է շրխկոցով մեր անմեղ զարկվելը կյանքի կոշտ, չէջոտ կողերին ու չարախինդ ժպտում է մեր մարդկային անզորություն վրա:

Ժամանակավոր այնպիսի եր-ույթ, ինչպիսին կյանքն է, թող մեզ չհասցնի խելահեղ ուրախության, քանզի կա հավերժականը, անվերադարձը...

Ապավինելով կյանքին՝ տրամաբանություն փնտրենք նա- մահվան մեջ:

Ու ես տեսնում, զգում եմ անմահությունից առաջ նրան՝ պայծառատես պատանուն՝ իր խորունկ խոհերի հետ ամբողջացած, հենված, դադար առած կիսաբաց դռան մաշված կողափայտին ու լուսե միտքը՝ անանուն խաչմերուկի չորս բոլորը ոլոր-մոլոր, պտույտ-պտույտ...

Ու տեսնում եմ նա- ճշմարիտ Ամենագործի կամոք աստղային հավերժությունից իջած ընտրյալ դեռահասին, որ հենց այդ պահին մարդեղեն էր ու երկրային, - Տաճարից էր իր խոսքն ու կերպը:

Իսկ հետո տեսա հայացքի անամպ քնքշանքի մեջ բարուրված անմեղ ճնճղուկի՝ ի վերուստ չարտոնված թռիչքն ու տխրեցի:

Տե՛ս, քո սիրած ճնճղուկներն անվնաս

Շեմին նստած փետուրներն են հարդարում,

Չես ուշանա, մի՛ շտապիր դու, տղա՛ս,

Երբ հեքիաթդ դեռ կիսատ է այս երկրում:

Տեսա, թե ինչպես նա լուռ շրջվեց՝ չբացահայտվող թախծը տխուր աչքերի մեջ, - տուն մտավ չշտապելով, իսկ կիսաբաց դուռը դանդաղ, անհրապույր ճռռաց ու մտամոլոր օրորվեց ծիսիկների վրա. փակվի՞, թե՞ չփակվի... բայց անհրաժեշտ քամին էլ, որտեղից որտեղ, դուրս պրծած ս- ճակատագրի քիսախնդիր չար ձեռքից, եկավ ու կամք, կարծիք չհարցնելով՝ զարկեց փակեց դուռը՝ հոլովելով կյանքը:

Տեսա, թե ինչպես է անմեղ խաղում փոքր եղբոր հետ, ասես Էությամբ վերադարձել, գնացել էր մանկություն, ուր մոլորված ու խեղճ, չհայտարարված պատերազմի դառը, արցունքախեղ ծուխը շաղոտ փեշերին սուս ու փուս մանկությանը սպասելով՝ իրեն ձայնում-կանչում է կարոտ-նարոտ, բայց ձայնը մարում, մնում էր անհնար վերադարձի չվերծանվող կեռմաններում, ու նրա տխուր արձագանքը զարկված թռչունի պես ընկնում է անտերունչ ու վերքը կրծքին:

Տեսա, թե փոքր եղբայրը, խաղի կանոնները խապառ մոռացած, ինչպես է զարկում հրճվելով, իսկ նա պատասխանում է ու պատասխանի մեջ դնում իր մաքուր սիրտն ու չաղծված Էությունը:

Ով չգիտի, որ երեխաները սիրում են կռիվ-կռիվ խաղը, որտեղ զոհերն ու ավերածությունները պայմանական են:

Սաշա Յովսեփյան-----

Ով չգիտի, որ մեծերը -ս սիրում են կռիվ-կռիվ խաղը, որտեղ զոհերն ու ավերածությունները պայմանական չեն:

Երանի այն մեծերին, որոնք կընդունեն - կընդօրինակեն կռիվ-կռիվ խաղի փոքրերի տարբերակը:

Երանի պատգամախոս իմաստունին, որ հասակով պատանի էր, բայց բաց էր ու տարածական էր հոգին ու մաքուր էր. ինչպես նորընծա մանուկը՝ բաց ու թափանցիկ էր անմեղ հոգին, ու խնդիրք անողին վերցնում, լիաբուռ տալիս էր, որովհետ- անչափ սիրեց այս տխուր, բայց զարմանալի աշխարհը - նրա ինքնասեր ամբարիշտ բնակչին. սիրով վերցրեց ու սրտանց առավ Լեռան մեկընդմիշտ տրված աղոթքն ու Տաճարի անբեկանելի խոսքը - բաժանեց ու նվիրեց՝ բացարձակ ոչինչ չթողնելով իրեն, քանզի ի ծնե էր իր ունեցածը, - տրվածը վեր-ից էր:

Երանի նրան, ով մանուկ էր մաքրեմաքուր մանկանց հետ, իմաստուն էր ոսկեբերան իմաստունների հետ - Ուսուցիչ էր՝ պաշտելի բանականությամբ կարգված, որպեսզի Արդար Սեր բաժանի - Հավերժող Լույս ու ցույց տա տաճարի չխոտորակվող ճանապարհը, որ փառասեր շատերը մոլորվել ու հավերժ կույր լինելով մտոք՝ անելանի խարխափում ու հայհոյում են՝ խավարում գայթեղով:

Երանի...

Ու երբ մանկացած պատանիները հոգնած նստեցին կողք կողքի՝ մի քիչ շունչ առնելու, հանկարծ ինչ-որ տաք զգացում եկավ, սրընթաց փորփրեց փոքրի ոգու անապակ աշխարհը - ինչպես զուլալ ջրի մեջ նետված պատահական քարից մեծ ու փոքր, բեկվող ու չբեկվող ալիք՝ շառավիղները եկան, բախվեցին նրա սթափության ամուր պատնեշին, - նա փշուր-փշուր հավաքեց տղամարդացող իր ողջ համարձակությունն ու ասաց.

-Նարեկ, ների՛ր, մոռացա ու մեկ-մեկ սրտանց խփեցի, մոռացա, որ սա ընդամենը խաղ էր, ու խաղի նման չէր խաղս, ասա՛, ինչու՞ չհակադարձեցիր հարվածիս հարվածով, եղբա՛յր:

-Լինել հիշաչար, նշանակում է՝ լինել փոքրոգի...

Լինել փոքրոգի, նշանակում է՝ լինել անմարդկային...

Լինել անմարդկային՝ նշանակում է սեփական ձեռքերով ստորագրել դատապարտող այն վճռի տակ, որը պահանջում է հասարակությունը տվյալ անձի համար՝ ըստ նրա կատարած գործերի:

Լռեց, ասես ճանապարհ էր ընկել, ու ինչ-որ մեկը հիմա կիսաճամփա հետ էր կանչում, ու մի պահ հապաղելով՝ ավելացրեց տխուր.

-Հիշողությանդ մեջ թող մնամ այնպիսին, ինչպիսին որ հիմա եմ, Նաիրի եղբայր.— բարի կայծեր բռնկվեցին նրա տիեզերատես աչքերի հեռավոր թանձր մշուշում ու մարեց հանկարծահաս, գնաց ձուլվելու մշտնջենականությանը:

Լռությունը կրկին ընդհատվեց իմաստնախոսությամբ.

-Եկեք՝ կռվելուց առաջ ի սրտե ժպտանք իրար:

Եկեք՝ ժպտալուց հետո իրար ձեռք սեղմենք:

Ձեռք սեղմելուց հետո մեկընդմիշտ հավատանք, որ արժանի ենք մարդ կոչմանը:

Եկեք պարզապես ժպտով ապրենք...

«Շատերս տարիք առնելով էլ՝ միամտաբար կարծում ենք, թե կյանքում մենք ենք ընտրում, իրականում մեզ են ընտրում... Նարեկը գիտեր այս իրողությունը: Գիտեր ի սկզբանե, որովհետեւ ընտրվածի վստահ խոնարհությունը միայն կարող է իր միջով անարատ անցկացնել Ընտրողի ճշմարիտ խոսքը եւ անխաթար ու անկորուստ հասցնել մահկանացուներիս»: /Ն. Աթաբեկյան/

Այո՛, գիտեր ու գնաց անմահությանն ընդառաջ՝ ժպտով...

Ընդամենը կույր չկոչվելու համար երբեմն ճակատագիրը, որպես քաղության նոխազ, հասարակությունից ի մահ ընտրում է հոգով – մարմնով կատարյալներին:

Վերջին կիրակին էր նրա, ամենավերջինը, – ի վերուստ ստեղծված այս մոլորյալ, մեղավոր հողակտորի վրա ժամանակը ծանր ու մեծ նստել է նույն խաղատախտակի շուրջ ճակատագիր կոչվող անհայտի հետ՝ ցանկացածը տալով – ուզածն առնելով. հիմա էլ իրենց չպարտադրված համաձայնությամբ, կասկածավոր սեղմում են իրար ձեռք ու ակնածանքով մատ տնկում աստվածընտիր հրաշամանուկի վրա, որպեսզի հետո անկողմնակալ ու արդարադատ եր–ան, սակայն երկուստեք ամբարիշտ ստահակների պես գիրկ ընդ գիրկ փաթաթվելով օձակերպ՝ թփթփացրին ուս ու մեջք՝ հաջող գործարքը համարելով կնքված, իսկ հետո իրենց հանձնելով գինարբուքին՝ անքանակ ըմպեցին մահվան մատռվակի հրամցրած մոռացումի գինին ու խենթորեն քրքջացին այս աշխարհի միամիտ ու փուչ ունայնության վրա:

Վարք Նարեկի-----

Իսկ այստեղ՝ փորձակիր երկրի վրա, կեսգիշերից հետո բնականոն եկող երեք անհեքիաթ օրերից ընդամենը երկուշաբթիի սովորական գիշերը անճաք լռության մեջ լղոզվել, ողողվել էր լուսնի տարակարծիք ներկայությունն ու աղոտ, հալումաշ բնապատկերի պատրանքածին, իրարամերժ խորհրդով, կիսաթեք, ցեցակեր ցանկապատի անկանոն, տխուր ստվերները ձգել, փռել, հասցրել էր փոշեծածկ, նիրհած ու անորոշություն տանող ծաղկատար ճամփեքին ու տեղ-տեղ մոլորվելով խորդուբորդի մեջ, դուրս արձնելով փոսերախներից՝ մեկ երկարում ու մեկ էլ անսպասելի կարճանում-կծկվում էր՝ վախախեղդ լինելով ծեր ու լքված շան պատահական հաչոցից:

Մի հրաշալի պայծառ, երիտասարդ աստղ հանկարծահաս լքեց գիշերվա ճոճքի խորախորհուրդ կամարը ու շնչակտուր սլացքով եկավ, իջավ վար, ծկլթաց ծիածանաձ–, մեկընդմիշտ վրձնվեց անպարագիծ երկնքի ս– անսահմանությանը – անտեղյակ երկրայինների զարմանքին ի տես՝ պտղունց-պտղունց թափվեց, մերվեց դաշտերի նիրհած ակոսներում՝ որպես չմեկնաբանված ու չվերծանվող խորհուրդ լռության անըմբռնելի հանգերգում, որի անմեկնելի մեղեդին մթության մեջ անշշուկ գալիս-այցելում է աննկատ ու ծորում արթուն մնացածների մշուշված հոգիներում:

Եվ հանկարծ ահասաստ լռում են նրանք՝ աստղ-ասուպի կործանման անողորմ վկայագիրը կազմելով, երկմտելով ու նա– հաստատ հավատալով, թե՛ հենց որ բացվի ցայգալույսը, իսկապես կանչվելու են Լուսի արդար դատաստանին՝ որպես հանցակից ականատես ու չարագործ վկա:

Բայց երանի՛ ձգվեր-երկարեր նախորդ կիրակին, ու երանի՛ ժամանակը ընդմիշտ մնար արբած ու քնած, երանի՛ առավոտը լուստ – արեգակն արդար չբացեին երբեք երկուշաբթի օրվա ս– վարագույրը, ու ամեն ինչ լիներ ու մնար այնպես, ինչպես որ երեկ էր...

Բայց չէ, Լույսը ալիք-ալիք կտրում-հատում է երկրային ծավալապաշտ ոլորտներն ու իջնում-ծորում է՝ քաղցր քնից արթնացող առավոտի երիտասարդ մարմինն օծելով անասելի

վճիտ մաքրությամբ ու անուշաբույրով – արթնացած թռչունների ճախրանքի թ-ատարած ծափիկների թռռ-թռռ-ը խառնում-միաձուլում է իր երգացանկի մեղեդուն:

Ու կրկին հիշեցի օրեր առաջ ասած իր իմաստուն խոսքը.

Թռչնահամերգը չի կարող կեղծ լինել, եթե նրա խմբավարը բնությունն ինքն է:

Անմասցորդ նվիրումով նրան ճանապարհեցինք երկուշաբթի օրը, հայրական տան շեմից՝ չփորձելով հրաժեշտի պահին գրկել, որովհետև՝ իրոք գիտեինք, որ սոսկալի խորշում է սիրազեղ զգացական արարքներից, – տեսանք, թե ինչպես խոնարհ, վերջին անգամ իջնում է թեք աստիճաններով, որով նա երբեք ու այլ-ս չէր վերադառնալու:

Իջնում, գնում էր ու ասես չէր ուզում առաջանալ. կարծես զորավոր ուժի հրամայականով քայլքը անասելի դանդաղում, իսկ հետո բարձրանում ու էլի իջնում, բեկվում էր, – ակնհայտ ու բաց էր պահի երերող անորոշության մեջ հրաշագեղ պատանու մտքի անսովոր թռիչքը, որ խիզախորեն խախտել, ձ-ափոխել էր բնության հայտնի ու անհայտ օրենքներն ու եկել, վերադարձել էր՝ փախչող, անեացող տիեզերախաղի անմեկնելի կանոնները շերտ-շերտ գաղտնագերծելով ու բացելով անդիմադիր՝ արդեն իսկ հասկանալով իր՝ Առաքված լինելու խորհուրդը – հիմա գուցե հապաղում դանդաղում էր՝ կատարելու երկրային կյանքի իր վերջին ու ամենավերջին պարտականությունները, թե՞ երկմտելով փորձում էր մնալ մեզ հետ՝ մերժելով ի վերուստ սահմանվածը, – անմասցորդ տալ ու նվիրել իր հանճարեղ մտածումների ու բացահայտումների մի մասնիկը –ս, տալ իր երկնաբույրը, որ փոխվել էր չընդհատվող ու կանչող լույսի, – առաջնորդում-տանում էր մեզ՝ ականակիր խավարի չճկվող պատենշները ճեղքելով վերից վար, անվերջ հրավիրելով ու կանչելով:

Մտածում էր. չգսպանակվող միտքը թ-ավոր դարատես արծվի անդիմադիր սլացք էր, – կամա թե ականա, անսահմանի խորհրդավոր, անզուսպ դարպասները հետ գնացին՝ բացելով երկնահրավեր, չմշուշված թռիչքուղին, որից անդին այլ-ս ամենակարող Տիրոջ իրավունքի նախանշածն ու ճշմարիտ հրավերքն էր, – իր անժամկետ մեկնումը նրա օրհնությամբ էր:

Մի պահ, թե ակնթարթ կանգ առավ, շրջվեց, դանդաղ նայեց ներք-ից վար, ա՛խ, ժպտացող, միամիտ, սովորական, երկրային միս ու արյուն ունեցող երիցս անտեղյակ իր ծնողներին, ու աչքերի մեջ եկան, բախվեցին անեզր երկինքն ու նյութեղեն երկիրը, քամահար ամպերի բարդ, անձ- կուտակումները գլուխ գխի շողարձակվեցին մերկիրան շանթախռովքից, – կորստյան կաթիլները, պոկվելով խեղված ամպասրտիկից, իջան իր քնքուշ, դեռ չտղամարդացած այտերին ու բացահայտեցին հունցվող կարոտի, անմեկնելի ցավի ու հավերժ լքումի այս տխուր-ուրախ աշխարհը:

Վերադարձավ, գրկեց բոլորիս հերթով՝ ամուր-ամուր, տվեց ի ծնե իր օրհնյալ դեռատի մարմնի անեղծ, ընդունելի շերմությունն ու անհուն սերը, հանձնեց ու պահապան կարգեց իր ոգեղենությունն ու մաքրությամբ մեզ անցած սրբությունն ու ասաց.

Ես էլ հյուր եղա այս աշխարհին, ինչպես բոլորը՝ անհրավեր բերելով ցողի պես մաքուր մարմինս – հարուստ էությունս՝ որպես անտեսանելի միկրոաշխարհ՝ նվեր:

Հանկարծահաս անորոշությունը իր գիրկն առավ մեզ ու տարուբերեց երկնքի, թե երկրի միջ-, ու չիմացանք, թե սկսյալ այդ պահից՝ մենք ինչ էինք անում, ու մի կերպ հասկացանք, որ մեր

Սաշա Հովսեփյան-----

զարմանքաբաց բերանների մեջ բառերը՝ որպես աշնանային թռչուններ, լքեցին իրենց սիրազեղ բները, ու հիմա նրանց ամայի դատարկության մեջ աղմկում-վշտում էր անհրավեր քամին՝ թել-թել պոկելով հյուսածո հանգրվան տունը, ուր կյանք առնողը արդեն իսկ դատապարտված էր Սուրբ ու Ամեղ լինելու:

Նա պապակված համբուրում էր մեզ հերթով. ասես ընդմիշտ, անվերադարձ մեկնող մի ճամփորդ էր, ու մեկնումը դեմ ու հակառակ էր ապրելու – տալու իր ոգեղեն մտածումներին, երբ բառերի անսովոր թագավորությունը իրենն էր, բայց հիմա ինքը չէր որոշողը, այլ որոշված էր ու պիտի կատարվեր ի վերուստ կարգված կամքը:

-Ուշանում ես, Նարե՛կ,-ասացի կցկտուր՝ մի կերպ բառերին իմաստ հաղորդելով:

-Ուշանում եմ... ինչի՞ց..., -նայեց մշուշված աչքերով, ու նրանց խորքում տխրությունը թաց էր,-***չե՛մ ուզում, մի՛ դատապարտեք հրաժարումս, ուզում եմ ձեզ հետ մնալ ընդմիշտ,***- ու տեսա հայացքի խոնարհ աղերսի մեջ դեպի վեր՝ անվերջություն տանող ճանապարհի նեղ, բարալիկ մի շերտ, ուր դեռ հրեղեն լույսը միամիտ խաղում-վետվետում էր, իսկ հետո, չարի կամոք, մթամած ձորերից սողեսող դուրս պրծավ անտանելի ս-ասիրտ խավարը, ծանրացավ ու ծավալվելով՝ հալածեց հուսախաբ լույսին, ու ամեն ինչ մթնեց՝ ինչպես ս- գիշերը:

-***Լավ,-*** իր ճակատագրին հաշտ ու ներդաշնակ պատասխանեց նա՝ աստղերից իջած հրաշամանուկը,- ***թող լինի՝ ինչ լինելու է...*** ու գնաց:

Աներ-ույթ մի դաժան ձեռք տանիքի քիվի տակ նորածնի ծիծեռնակաբունը վերցրեց ու խելահեղ ատելությամբ զարկեց ցեմենտած հարթակի չեչոտ, կարծր դեմքին ու քրքջաց մեծաբերան իր չպատժվող ամենագորության վրա, թունոտ չարախնդաց բնի ներսում գտնվող ձվերից մեկի ջախջախված, կոտրված կեղ-ից դանդաղ դատարկվող անգոյության վրա, որ տարածվում, ծորում էր աննպատակ, իմաստագրկվելով՝ որպես ունայնության հրավեր:

Ո՞վ էր, որ գողեգող եկավ, աննկատ բախեց հոգուս միամիտ դռները, գոչեց ու կոչնակեց անվերջ, ու կորստի տագնապը անթաքույց, ալիք-ալիք ու անդիմադիր եկավ, դեմ առավ խլահառաչ կոկորդիս ու խեղդվեց.

-Ա՛խ, Նարեկս... գնա՛ց...

Երազները մեր չիմացության աշխարհի պատգամներն են՝ առաքված մեզ, միևնույն մեր մեկնաբանման կարողությունն ամփոփվում է օրվա տպավորության շրջանակներում:

Եր-ի թե ոչ մի հրաշագործ այլ-ս ու երբեք չէր կարող դիմադրել ու դիմակայել այն ամենին, ինչ կատարվելու էր հաստատապես, սակայն տագնապն ու ցավը ամենուր էր բացահայտ տեսանելի բոլոր հարթություններում, ուր անմեկնելի անորոշությունը, ապավինելով չգոյին, խաբում էր ինքնագոհ՝ փորձելով համոզել ինձ, թե երեքշաբթին պարզապես սովորական մի օր է:

Միևնույն փողոցը, ուր արագաքայլ աճապարում էի՝ պահ ու վայրկյան առաջ հասնել աշխատավայր, թվաց անբառաչ ու կամագուրկ, մորթազերծ արված անտերունչ անասունի անփառունակ դիրքով եղկելի մի պատկեր, ուր նրա ձիգ երկարությամբ մեծ ու փոքր խանութների անվերջանալի ու ոչինչ չասող շարանը մերկ կողոսկրերի պես անթաքույց ցուցադրում է իր նեխաշունչ ներսն ու ավերակ դուրսը՝ տեղիք տալով դառնահամ-լեղի զգացողության, որ չմարսված կոշտ կերակրի պես անվերջ խմորվում ու կատաղի հունցվում է՝ հրամայաբար ու բարձրակոչ պահանջելով ելք ու մուտք՝ դուրս թափվելու անգուսպ մտադրությամբ:

Ի՞նչ էր լինելու պահի ի պահ, - որն էր ճակատագիր կոչվող անանուն-աներ-ույթի նախապատրաստած խաղի իմաստը, որ ուշանում, մեկ հեռանում, մեկ էլ վերադառնում էր բացեփաց, - նրա սիրտ ու հոգի խառնող-խառնակող տանջալի բույրը արդեն շոշափելի զգում էի մոտակայքում, չափազանց մոտ ու շփոթահար, - այլ-ս անելիքս չիմանալով՝ անիմաստ պատեպատ էի զարկվում ազատագուրկ ու դատապարտված թռչունի պես չհասկանալով - չմեկնելով կալանվելուս պատճառն ու իմաստը:

Եվ գուցե դա էր հնարավոր այն առիթը, որ մտամոլոր ժամանակը նիհարած, ոսկրացած ձեռքերը դրել էր անհ-ք դեմքին, որպեսզի չտեսնի չարաղետ այն ամենը, ինչը ինքն ու ինքն էր որոշելով մտահղացել ու հիմա ծնկել էր անորոշ փողոցի մի փոքրիկ անկյունում, ծորձապատ մուրացիկի պես կծկվել, կուչ էր եկել իր պատյանի մեջ, ու չունեցած խիղճը տանջում, հաշիվ էր պահանջում, սակայն մեծագույն անամոթը դեկորատիվ հեծկլտալուց բացի արդարանալու - ասելու այլ-ս ոչինչ չունեք:

Արագացան քայլերս՝ փախուստ տվողի պես փրկության անհնար ելք ու դուռ փնտրելով, սակայն ինչ-որ մեկը համառորեն փորձում էր դարանակալ թիկունքից բռնել զգեստս ու, չհասցնելով, կրկնակոխ, հ-ի-հ- հետապնդում էր՝ անպաշտպան ծոծրակիս մահաբեր շնչելով ու ցինկի շշնջալով.

Աչքերիդ խորքում ցավն է մորմոքում,

Մի բուռ մոխրի պես փռված կանաչին,

Վարք Նարեկի-----

Եվ արձագանքը, հավքի պես արթուն,

Ապրում է, ինչպես, ա՛խ, հույսդ վերջին:

Հարվածը ուժգին էր, հաշվարկը ճշգրիտ, քանզի անսպասելի երեքացի չառաջնորդվող կույրի պես - գետնամած չտապալվելու համար հենվեցի փողոցի կարծր եզրաշերտով ինչ-որ սառնության՝ չընկալելով ու չհասկանալով, թե ինչու է ձեռքիս ափը սպուռնի պես ներծծում ու առաքում մարմնիս մեջ ծարավող սարսուռը, որ վտակ-վտակ խառնվում է չբաղդատված արյանս տրոփող վազքին՝ անտարբեր ու խելացնոր, գրեթե մտակորույս, ավերելով ու քինախնդիր ավերակելով սրտիս փակ հանդարտությունն ու բացաչք տարածքները, ուր դեռ փայփայած հույսի ճմլված, անորոշ պատառիկները դանդաղ ու ծույլ շարժվելով գնում էին՝ հավատալով, թե՞ ակամա կասկածելով, որ դեռ բացվելու են ոչ թե երկրային պիղծ, այլ երկնային օրհնյալ դարպասները, որից անդին ու նրանից էլ հեռու ձգվում է անվերջ ու հավերժ լույսի հաստատուն թագավորությունը:

Սակայն հանկարծակի հալածյալ մի վտիտ թռչուն կանչում է աղեկտուր ու սրտակեղեք –, բնականոն կողմնորոշումը իրապես կորցրած, անել նետվում է մեքենայի կարծրանյութ անիվների տակ – երկրի կանաչ անվերջության կարոտն ընդմիշտ թախծոտ աչքերի մեջ երկրային ծաղիկների գունեղ ծիածանախաղի շքեղ սրբերանգները – միայն ու միայն հենց այդ պահին մի քիչ, թե շատ քիչ գունաթափվեցին, իսկ ժպիտը քարացավ, ինչպես թիկունքիս համառ արտաշնչողն ու խելահեղ շնչացողը:

Աչքերիդ խորքում խելահեղ կկուն
հրեն նետում է խանձվող կանաչին,
Սիրտդ լալիս է խավարում անտուն,
Ականջդ՝ անվերջ մեռնողի կանչին:

Օրը կորուսյալի նման սառն է, մի քիչ անձր-ախառն-թաց, բայց մարմնապատյանս դեպի ներս անապատի լուրջություն է՝ անհնչյուն, դատարկ ու անտանելի, անասելի շոգեխեղդ ու պատեպատ անող, ու այնտեղ երկդեմ ստվերը տեսիլք է չիրավիրյալ, ինքնակամ հայտնվող, որ մեկ էլ հանկարծորեն, խռովկան, հուսախաբ անելով՝ չքվում-չվում-կորչում է՝ անորոշ քսվելով հորիզոնի երկու կողմերի ցանկասեր շերտերին, հուսալով, թե երբ-է փրկություն ու ակնկալվող ելք կգտնի ընդմիշտ անելանելի այդ դժոխային հնոցից, ուր դատապարտվածները արգելապատնեշված ու դուրս են հեքիաթի գերիշխանությունից, իսկ կանայք այնտեղ, ավա՛ղ, սգվոր ու ս-ազգեստ են ընդմիշտ:

Վստահ չէի ու հավատացած, թե դեռ խնայված ուժ ու չերերող կորով ունեմ քայլելու, – պատահաբար նեցուկ փնտրող ձեռքս հաստատուն դրվեց հենարան կետի, ուր բարեհաճ բանականության թե քինախնդիր կամքի անուրախ ենթարկվողն էի ակամա, – շփոթահար գիտակցությունս վերջնական ու վաղահաս չէր լքել կանխորոշված աղետի ենթարկված, բզկտված մարմինս, որտեղ հույսը համառորեն համոզում-ձայնում էր ինձ՝ կոչելով զգաստության, իսկ հետո հաստատուն բացելով մշուշախառն, տառապած աչքերս, փորձում էր դեմ ու հանդիման լինել նրան՝ աներ-ույթ այն մեկին, որ համառորեն ու կաշուն երեքշաբթի առավոտյան կրնկախոխ հետապնդում էր ինձ – շնչում մահառիթ խոսքեր:

Աչքերիդ խորքում, ա՛խ, մեկը թաքուն
Յեքիաթ է պատմում օրերի պես հին
Երկար չես ապրի, տես՝ ձայնեց կկուն,
Ու կորբանա քեզ սիրող մի կին:

Էլ ի՞նչ էր մնում ինձ անելու, եթե ոչ առկայծող լուսատիկների պես հավաքել բանականությանս վերջին փշրանքները, որ մոլոր ու թափառ, անկառավար լողում-շարժվում էին աջ ու ձախ՝ անիրազեկ բախվելով իրար ու ակամա անկվելով տեսիլք-ասուլների պես, քանզի նրանց բացահայտ անկումը մնում է մութ ու խորհրդավոր երկնային անպարագիծ խորխորատների չմեկնաբանված բացահայտումներ բոլոր անտեղյակների համար, որ դեռ ապրում են, կան ու կարող են ապրել ունայնության բավիղներում, մոլորյալ այս երկրի վրա՝ որպես անիրազեկ խաբեության ընտրված զոհեր:

Ինչ-որ մեկը, չերկնչելով, համառ թփթփացնում, հրում է հոգսաշատ ուսս՝ փորձելով հասկացնել, թե դեռ մարդկային կերպի մեջ եմ, ու ոտքերս, ձեռքերս իմն են, իրապես ենթակա-կամակատար են ինձ, ու դեռ կարող եմ քայլել:

Հրում է ինձ կոպտորեն ու ձեռքս ճզմելով ցավացնելու աստիճան՝ սեղմում, ասես պոկում է այն կետից, որ նեցուկ, հենարան էր եղել ակնթարթային ու ակամա անկումիս այստեղ՝ հենց այս մարդաշատ, բայց անհոգի փողոցի տհաճ պատրանքաշարի ներկա քառսային այցելությամբ՝ տեղ ու դուռ չթողնելով մտածելու, խորհելու կամ գոնե մտածածը մի կերպ հասկանալու. թե ինչ էր անանունի բացահայտ ուզածն ու ցանկությունը, երբ անմեղ-անմեղ էի ու մեղքիս աստիճանը անշոշափելի էր ու նվազագույն հյուլե:

Իսկ հենց նա, որի նյութեղեն առկայությունը փաստ է ու հիմա փորձում է ապարդյուն անզգա ձեռքս վերցնել, հեռացնել հենման անանուն կետից ու հավասարակշռությունս խլելով՝ տանել,

Սաշա Հովսեփյան-----

հասցնել ունայնության մերժելի սահմանը, ուր մտացիր քամին ի վիճակի չէ անգամ իրենով լցնել մտքի ալիքվող օվկիանոսում բոլորից լքյալ հույսի առագաստի դատարկ ուռուցիկը, հիմա այս պահին ի՞նչ է ուզում չընկալված ինձնից, ու համառության պահանջատերը պատճառը մեկնաբանելու փոխարեն ամուր կառչել է անդիմադիր մատներիս՝ փորձելով պոկել, ու աղաղակում է կորուստ ունեցողի պես:

-Ձեռքդ հե՛տ քաշիր դագաղից:

Տեսնում եմ խանութի քարեղեն պատին հենած դագաղը ու ձեռքս նրա ս–, ծանր տիրության մեջ՝ թ–աբաց ու զարկված:

Տեսնում եմ անմեղ ծաղիկների խոնարի բոլորքը՝ անթեղված սրտերով ու գլխահակ:

Տեսնում եմ քամուց ծածանվող ս- երիզների բրոնզագույն թռիչքը՝ ոչ մի տեղ ու անճանապարհ:

Ու լսում եմ խելակորույս նրան՝ հետապնդողին, ով վերջապես եկել, հասել է ինձ ու համառ շնչում է ականջիս չարախինդ:

Աչքերիդ խորքում կրակը թաքուն
Հուլիսի ծվեն է մեռնող կանաչին,
Երկար չես ապրի, տես՝ ձայնեց կկուն,
Ու քեզ կլքի հրաշքդ վերջին:

Օրը երկուշաբթի էր, սական սովորական չէր ու նախավերջինս էր անմահությունից առաջ:

Տեսա, թե ինչպես անանդրադարձ ջրամանից պարզ, թափանցիկ հեղուկը սահեց դիմադիր բաժակի լուռ դատարկության մեջ – արգելափակվածի համառությամբ փորձեց համակերպվել ու հաշտվել՝ մի բուռ տարածքում իմաստավորելով իր ներկայությունը, բայց հետո խռովահույզ հասկացավ եղածը, – խռովքը գնաց, եկավ, ափեափվեց, տառապանքով բարձրացավ վեր, ու բաժակի թաց, բոլորված եզրը կարոտած աչքի պես խոնավացավ իսկ հետո դանդաղ, համառորեն սահեց թափանցիկ, սառը կողերն ի վար՝ գնալով ու տարածվելով դատարկ սեղանի անխոս դեմքին:

Տեսա, թե ինչպես թարմ թերթերի ճերմակ մաքրության վրա նախադասությունների շարքը հանկարծակի կանգ է առել՝ սպասելով, թե ինչ-որ մեկը պիտի գա ու ժամանի, որպեսզի մեկընդմիջտ պարզաբանվի անորոշ լռության իրական պատճառը՝ սկսվող սկզբից մինչ- կանխատեսվող ավարտը –, ի վերջո, հասկանալի դարձնի այն ամենը, ինչը երկրային տարբեր ծագերից բամբասանքախառը եկել, դեմ ընկնելով լցվել է սահմանափակ էջերի մեջ ու հիմա կասկածելի, համառ սպասում է փորձառու իր մեկնաբանին:

Տեսա, թե ինչպես նա, որ եկել-առաքվել էր իմաստության տաճարից, աշխատասենյակի դռան շեմի ձիգ ուղղանկյունը անցավ անվարան, ու իր հայացքի քնքուշ զորությունը անարգելք տարածվեց սենյակով մեկ իսկ հետո վստահ գնաց դեպի հարցահարույց թերթերը, որպեսզի ոխակալ սուտը զանազանի ու զատի բացարձակ ճշմարտից՝ արգելելով առաջինը – ճամփա տալով ցանկալի երկրորդին:

Տեսա, թե ինչպես նրա պատանեկան հրաշագեղ հասակը ձգվեց-գնաց դեպի վեր, ու դեմքի խաղաղի վրա եկավ ծավալվեց քողագերծ անող այն երանելի ժպիտը, որի դեմ անզոր էր երկրային մարդու կամքը, խորամանկությունը, քինախնդրությունը չարությունն ու ընչաքաղցությունը, – նրա պայծառ ճակատը ստվերող անաղարտ մտահոգությունը բացահայտ ապացույց էր դիտողին, թե իմաստուն պատանու հոգու մեջ ավելի – առավել ծավալվող երկնային լույսը մաքրում է աղտեղությունից ճանապարհը, որով գնալու է Աստծո ստեղծած մարդը:

Տեսա՝ կանգնած եմ համրաշուրթ, նրա հետ ուս ուսի, որպեսզի վերջապես փարատեմ աչքերիս կարծեցյալ խաբկանքը թե բարձրահասակ է ինքը – թե ես հասակով նրա հասակին հավասար եմ իսկապես – ոչ պատրանքախաբ, ինչպես որ հիմա թվում է ինձ իրենից մի քանի մետր հեռավորության վրա:

Իսկ հետո մենք՝ ես – նա՝ որպես խոնարհ աշակերտ – իմաստուն ուսուցիչ, զրուցում, անմնացորդ բացահայտում ենք ինքներս մեզ – գաղտնիքներ, որոնք հեռու են իմ ընկալումների սահմաններից, ինչպես ժամանակը – տարածությունը, իսկ նա տիրոջ իրավունքով մեկնաբանում է ժամանակի խաղը՝ կատարելով իր առաքելությունը – մեկիկ-մեկիկ, իր ոսկեբերան շուրթերով բացահայտում է գաղտնիքը գաղտնիքի հետ-ից՝ մեզ թողնելով իր զորեղ միտքն ու անխախտ խոսքը:

Երկրային գաղտնիքների բացահայտման բանալին երկրամերձ լեռների անհաս գագաթներից էլ վեր է:

Մի՛ խաբվեք ու մի տրվեք անդունդների քմայքոտ ու հավերժական կանչին, ուր խավարը ծնում է խավար:

Վարք Նարեկի-----

Բարձրացեք լեռները, ինչպես ուխտագնացը երկյուղած դեպի ակունքը լույսի, – նրա հրաշագործ ավագանում թաթախեք ձեր հոգին մաքրագործելով:

Կանգ առավ, լռեց:

Տեսա՝ աչքերի մեջ անվերջ, անխախտ ձգվող տարածքներ՝ հեռու, բարձրաբերձ լեռներից էլ վեր, անեզր անսահմանից էլ այն կողմ, որի ավարտն ու վերջը լույսի թագավորության մեջ է:

Տեսա՝ անտարբեր երկինքը հավաքվել, ծավալվել է կույտ-կույտ ու գլուխ գլխի հակվել, խոնարհվել, համրացել է, իսկ հետո բացաչք տեսա, թե ինչպես են խելահեղ ցնցվում նրանք անմնացորդ՝ բախվելով իրար ու ի սրտե սգալով անվերադարձ կորուստը, որ երկրային ճամփաներից անդին է:

Նա անցավ փողոցը անշտապ, ու ընթացքը կայուն, խաղաղ էր, բայց հանկարծ կանգ առավ մի պահ, թե անկթարթ. ի՞նչ մտածեց, ի՞նչ տեսավ իրականում, չգիտեմ: Իսկ գուցե թե միտքը այդ պահին սանձեց ժամանակ կոչվող վայրագ նժույգը ու նրա հետ ճեղքեց հավերժականի թանձր շերտերը ու բացահայտեց անբեկանելին:

Ու հիմա փողոց կոչվողը մարդաշատ, անկանոն սլացքն էր, որի միապաղաղ ալիքների զարկվելը նրա հրաշալի մարմնին իմաստազրկվել էր մեկընդմիջտ, ու անբացատրելի խորհրդավոր մի ժպիտով նա վերադարձել ու նայում էր աչքերիս.

-Չայրի՛կ, ուզում եմ քեզ մի բան ասել:

-Ասա՛, ինչ-որ բա՞ն ես մոռացել, Նարե՛կ:

-Այո՛, ուզում եմ, որ մահին չհավատաս:

-Նարեկ...

Նրա հայացքը թույլ չտվեց վերջին անգամ գրկել իրեն, ու նա ժպտած առաքվածի մաքրությամբ՝ լուսավոր, պայծառ, իսկ հետո շրջվեց ու գնաց ընդմիջտ:

Երեքշաբթի էր, ճշմարիտ եմ ասում, նախավերջինս էր իր երկրային օրերից, ու իմ վերջին հնարավորությունն էր՝ տեսնելու նրան այստեղ՝ երկրի վրա Աստղերից Իջած Որդուս...

Երկիրը հրամայաբար հատեց վերջին գիշերվա ամենակուլ սահմանը, - ամեն ինչ ընկղմվեց խավարի անկիրք տիրություն՝ հանձնվելով մոռացության դաշտերի մշուշված հիշողությանը, ուր դեռ քինախնդիր տրոփում է ապրիլ կոչվող նեռ ամսվա սակավածաղիկ ու եղյամածածկ սիրտը, - որի ներսում բույն դրած հրավիրյալ չարը համառ սարդի պես գործում- խճճում էր հիշողությունից դուրս պրծած լույսի տրոփող ծվենը՝ արագաքայլ բարձրանալով կամ իջնելով իրեն հայտնի ճանապարհի պիղծ հատվածով, վախկոտ ավազակի պես ահասիրտ թաքնվելով ու մեկ էլ դարանակալ չարանենգի պես հանկարծակի հարձակում գործելով :

Խավարի տխուր վարագույրի թանձր, մութ փեշերը պահ ի պահ չկամորեն բախվում են սանձազերծ քամու մոլազար ցանկությանը, - չնախատեսված հանդիպման հանկարծահաս արձագանքը փախեփախ բախվում-զարկվում է կարծրասիրտ, քաջբախաբ քարափներին՝ արթնացնելով ծեր ու իմաստուն, բայց քչախոս արծվի ունայնացած կյանքի հիշողությունները, սակայն մեն մի անկթարթ միայն, իսկ հետո չկամորեն վերադառնում է՝ մեքքաջարդ ու հ-իհ- կծկվելով, մրսկան բլուրների ու անմարմին ձորերի անհրավեր բաց գրկի մեջ պատսպարվելով. ասես չի եղել ոչինչ, ու ոչինչ չի լինելու, բայց հանկարծ՝

Երկնքի փեշից աստղ ծկլթաց,

Լուսատիտիկը ճրագն իր մարեց

Յոգնած կածանին լույսը մոլորված

Լուռ հառաչելով՝ տխուր ծվարեց:

Սակայն երկնային անսահմանության հավերժական ծիրը գնալով ձգվեց մինչ-բանականության ամենակարող ու ամենատես Տիրակալի՝ միայն իրեն հայտնի մերձ - մոտ սահմանը՝ որպես փութաջան ու արտակարգ դեսպան, - լիազորվածի բացահայտ հանդնգնությամբ փսփսաց համառ նրա ականջին երկրային առաքյալի շնորհների մասին, թե իմաստության տաճարի լույս Յրաշամանուկ պատանին անմնացորդ բաժանում տալիս է լիաբուռ ոչ իրենց կամոք այս աշխարհ եկածներին - ցույց է տալիս միակ ուղին, որի իրավունքը տրված ու վերապահված է ի վերուստ իրեն՝ որպես ամենագետ - նվիրյալ Աստծո քարտուղարի, սակայն՝

Ս-- մութ գիշերվա ակնախոչում

Մի կկու կանչեց, ա՛խ, կյանքս կարճեց,

Անցյալ ու ներկա՝ դատարկ մի հնչյուն,

Անանուն, անհույս մահին կամրջեց:

Սաշա Յովսեփյան-----

Եվ լքյալ ասուպները ցավատանջ ու անկեղ- այրվեցին հոգեպարար՝ բուռ- բուռ թափվելով հորիզոնի ընթացքահաս գծից այս կողմ, որպես մրսկան գարնանային ծաղիկներ, որ հետո հազար ու բյուր անգամ, ա՛խ ու ավա՛ղ, մարված սրտերի պես լուռ ու անշշուկ խոնարհվեց մայրամուտից առաջ այնտեղ, ուր երկինքը փլվում է անդիմադիր, ուր հոսում- թափվում է տառապանքի արցունքը՝ ծովանալով, ուր ձորերը անմխիթար սգերգու աղջիկներ են՝ լքված ու անսեր, ուր ծիածանի գույները հալվում-մաշվում են երազախաբ ու թպրտում, ինչպես թռիչքի պահին երազանքի զարկված թռչունը, – ուր ագռավների սգազգեստ երամը երկնքի ս- աչքի մեջ անվերադարձ հեռացող ս- առագաստ է.

Ու խավարի մեջ մի չար ոտնաձայն
Իմ շեմի վրա կանգ առավ տրտում
- Ո՞վ է,- գոչեցի, պատասխան սակայն՝
- Տղայիդ մահն է,- ինձ ձայնեց կկուն:

Ու տեսա հենց իրեն՝ Նարեկ կոչվող Աստվածընտիր պատանուն, որ իջել եկել էր երկնային սրբասուրբ ոլորտներից ու մեկընդմիշտ բաժանել էր երկրի վրա ապրեցնող լույսը սպանող խավարից:

Տեսա, թե ինչպես բարձրահասակ, հրաշագեղ մարմնի չորս բուրրը պտտվեց պատգամաբեր աղավկին՝ լուսածիր օղակներ գծելով նրա շուրջը, ապա թափահարեց օդեղեն թ-երը, – արեգնափայլ լույսը իջավ զգեստի – իմաստուն գլխի վրա, ինչպես սրբերինն է:

Տեսա ինձ մեկնված նրա խնկաբույր ձեռքը, ու ափի մաքրեմաքուրի մեջ՝ ամպեղեն ճերմակ չգրված թղթերի փաթեթը, որ թ- ու ոգի առած՝ սահեց եկավ դեպի ինձ – գրքի բաց էջերի պես ըստ կարգի դասդասվեց աջ ու ձախ :

Տեսա հուսատու ժպիտի հրամայականը՝ իրեն վերապահված բարձունքից անմնացորդ դեպի ինձ առաքված լուսաշող – իմաստուն՝ որպես իրազեկ անգիտությունից փրկող ամենագոր – անառարկելի խոսք, որի կատարումը պարտադիր է ու անբեկանելի:

Տեսա ոսկեղնիկ շուրթերի գեղեցիկ շարժումը, որի վրա խոսքը մեղրահյուս էր, ու բույրը նեկտարի էր:

-Գրի՛ր,- ասաց գորովագույթ ու հպվեց ինձ անվերջ վերադարձող քնքշությամբ:

Տեսա, թե ինչպես է սրբագործ լույսի կաթիլը անապակ ցողի պես հավում՝ օծելով հոգիս ու մարմինս, դարձնելով ինձ կորովի, պատրաստ՝ դիմադիր լինելու դաժան փորձությանը:

Տեսա կրկին ինքն է՝ հրաշագեղ Նարեկ որդիս, որ կրկին պարզել է ինձ ձեռքը – այս անգամ թղթերի փաթեթ է ափի մեջ, բայց գրված են էջերը ոսկետառ, ու ձեռագիրն աներկմիտ իրենն է:

- Կարդա՛, այս է գիրս, – ոգեշնչումս իմաստնության Տաճարից է:

Կարդա ու տար աշխարհին, – թող տկարներին հույս լինի, զորեղներին՝ դաս, իմաստուններին՝ հավատ, հոգով աղքատներին՝ լույս...

Տեսա, թե ինչպես ոգեղենացած թերթերը անշշուկ շարժվեցին, եկան դեպի ինձ – դասավորվեցին, ինչպես իմաստնության մատյան ձեռքիս վրա ու շապիկին Աստվածընտիր պատանու ամենատես աչքի սրբասուրբ պատկերն է:

Տեսա, թե ինչպես է հեռանում նա համրաքայլ – անշշուկ ծաղկազարդ դաշտի անթերի տարածքով, ու ոտնահետքը անեանում, ելանում է, ինչպես ցողը՝ ցայգալույսին :

Տեսա, թե ինչպես նա երերող հորիզոնից այն կողմ՝ ծաղկաբուրբ դաշտի հրավիրյալ կենտրոնում, պատ է շարում, ու քարը գիրք է, շաղախը՝ լույս, լույս է ինքը, – լուսեղեն է խոսքը

- Այս է վարքս – վկայողը դու ես, մա՛րդ, պատս ամուր է – հաստատուն, ինչպես վարքս – կյանքիս այն մասը, որ տրվել է ինձ ի վերուստ, – կյանքս լույս է, ինչպես շաղախը, որ ոգեղեն է, ու շնորհը գրքերի մեջ է, որ թողնում եմ քեզ:

Տեսա, թե ինչպես նա բարձրանում գնում է վեր, իսկ արցունքի կաթիլը խորշակելով ավերում է հոգիս, ու դեմ դիմաց ես եմ – անապատի հողմը, որ խենթորեն պարելով՝ ձ-ափոխում է ամեն ինչ, ու սարսափելի ամայությունը նվաճում է ծաղկազարդ, անմեղ տարածքը:

Տեսա, թե ինչպես անկարող ձեռքերս մեկնել եմ իրեն ու անիմաստ փորձում եմ նրան պահել-պահպանել գրկիս մեջ, բայց ափ նետված ձկան պես անգոր, անօգնական եմ, գի ինքը այնտեղ՝ վեր-ում է, ու ես ներք-ում հուսահատ թափահարում եմ թ-երս, ու թռիչքս, ավա՛ղ, արգելված է մեկընդմիշտ ու մերժված է առհավետ:

Տեսա, թե ինչպես նա ժպտաց մի անգամ –ս, ու ժպիտը անմեկնելի պաղ ու սառն էր՝ ինչպես եղյամը, – խավարը անհագուրդ կլանում էր լույսը, իսկ ամպերը խելահեղ զարկվում էին իրար, – երկնային օրհներգը ծվատվում էր՝ անհույս խավարի անկարեկից ափերին զարկվելով անհառաչ ու տխուր:

Տեսա, թե ինչպես իր օձյալ հեռվից, խոսքը շուրթերի վրա, աղավաակերպ ճախրանքով սլացավ վեր, իսկ հետո բյուր ու բյուրեղ իջավ, եկավ, հասավ ինձ, բայց հրամայական էր ձայնը, ու վճռական էր ասվածը.

- **Վեր կաց, ես քեզ ասում եմ՝ արթնացի՛ր, Մա՛րդ Աստծո՛ւ:**
Վարք Նարեկի-----

Ճշմարիտ եմ ասում՝ բացեցի աչքերս. վերջին օրվա լույսն էր իր երկրային կյանքի, - օրը չարաղետ չորեքշաբթի էր ու ս- էր՝ ինչպես անեզր խավարը:

Թեթ- գլխացա՞վն էր պատճառը, թե՞ գիշերվա ահասարսուռ մղձավանջը, որ գուսպ արգելեց աշխատանքի մեկնելս, ու մնացի տանը՝ կույրի պես խարխափելու անգիտության դարպասների մատույցներում՝ ինչ-որ տեղ, ուր անորոշության սրբանցքների անտարբեր, չոր կողերին զարկվող գեղծարար քամին անկառավար մեկ հուսախաբ նահանջում, ու մեկ էլ, նախահարձակ լինելով, ցուցադրաբար գլուխը խփում է անվերջանալի կոշտ պատ-պարիսպներին ու կրկին հանդարտվելով՝ չգիտես ուր է խցկվում - ինչու:

Պատշգամբի բաց տարածքը վերից վար հնարավորություն է տալիս՝ ամբողջովին տեսանելի տիրույթում իմաստավորելու շարժումը ճանապարհի մի փոքր հատվածում, ուր մեկ կամ մի քանի հոգի դանդաղ բարձրանում են նեղ սրբանցքով ու մարդակորույս բարձր պարիսպների մյուս կողմում ասես հանկարծակի անհետանալով՝ թողնում են անորոշության մեջ առավոտյան մտքերս, անիմաստ շարունակություն փնտրում ու հոգնատանջ քարշ գալով՝ վերադառնում են տուն՝ ձեռնունայն:

Քնալով հանկարծակի հայտնված ամբոխը շատանում է, - նրանց խոսակցության պատառիկները անկանոն ժխտախառն տարածվում են չաղծված ցայգալույսի պաղ օդի մեջ՝ չխաթարված ու ամբողջատեսք, ու մեկ էլ մերկ, անորոշ ալիքի պես հ-ի-ի- շարժվում գալիս են լսելիքիս ուղղությամբ, բայց մնում են գրեթե անհասկանալի ու ինչ- որ տեղ չբացահայտված, կամաց-կամաց օձակերպ սողոսկում են հոգիս, որպես անհատնում տազնապ ու սպանիչ ցավ:

Հիշում եմ գիշերվա երազը, որ մատուցվել էր կանխավ, ուր գույների տեսլականը մռայլ համատարած էր երկրային բոլոր ծագերում, ու մատնանշումը որոշակի ու բացահայտ պատգամ էր ինձ՝ որպես միակ երկրային դժբախտի, թե՞ ընտրյալ մեծարվածի, ու հիմա բաց պատշգամբի իմ բարձունքում այցելում, գալիս է դեպի ինձ՝ անորոշության մեջ թողնելով տեսանելի տիրություն, որի անունը անկասկած մահ է:

Ու զգում եմ արյանս պաղ վազքի հրամայականը եղյամածածկ երակներիս մեջ, - նրա սարսուռը, չսանձված ու անհնազանդ, պտտվում-գալարվում է շուրջս, ուղի ու ճանապարհ կորցրած, խենթացած վտակի պես ցած է նետում ինքն իրեն քար ու քարափից՝ շառաչելով, շնչակտուր զարկվում հաստակող սալաքարի երախաբաց ատամնաշարին ու ցավից ուշակորույս՝ պատեպատվում է լերկ ու մերկ, անծաղիկ ու փուլք տված ափերին ու գնում է ոլոր-մոլոր՝ ցավն իր ներսում հունցելով, ու հոգին վշտահար տանում, տանում է՝ ու՛ր - ու՛մ այս անտերունջ աշխարհում, որտեղ գերի են բոլորը մահին, ու հերթագրված են մեծից փոքր:

Մեկը շշուկով խոսում է հետս. ձայնը աներկմիտ հասնում է ինձ, սակայն կայուն տեսադաշտի մեջ անգո - բացակա է ինքը, իսկ խոսքը շարունակ դողանջում, հնչեցնում է տազնապն իր ու համառ կանչում, պահանջում է տիրաբար, որ ելնեմ շուտափույթ ու գնամ, բայց որտե՞ղ - ու՛ր. չի ասում ոչինչ, լռում է սեղմաշուրթ, ու համառ դատապարտյալ, թե՞ մահապարտ է ասես ու գաղտնիքը չգերծված տանելու է իր հետ, ուր գնում են այս աշխարհից պարտադրված բոլոր հեռացողները:

Չգում եմ՝ արդար խոսքը իմ ներսում է, ու խոսողը նախաստեղծ հոգիս է, նա է՝ միակն այն, որ աներկբա նյութեղեն տարածքները հատում -անցնում է վստահ, պահ ի պահ - անսկիզբ ու անվախճան վերած-ում կանոնակարգում է քառսը, ուր փոթորկվում, ալիքվում է ամենատես ժամանակը, ուր երկնային ոլորտները մաշկագերծ են, բացկեղ- - անհրավեր, իսկ ոգին կանխում, արգելափակում է ընթացքը ժամանակի - փորձ է փորձում հավաստի մի տիրույթում - իր գոյության պահից սկսյալ՝ գորավոր տեր է կանգնում մարմնին ,որ իր տառապանքի պատյանն է:

Չգում եմ, որ ինչ որ տեղ՝ հորիզոնից այն կողմ, ուր չի թափանցում որոնող հայացքս, հավաք թե հավաքույթ է, ակամա, թե՞ մտածված դավադրություն է, - կին- տղամարդ հավաքվել, ի մի են եկել , ու երաժշտությունն անարգել հոսում, լցվում է դահլիճի անիմաստ դատարկը, լցվում է չորկող սեղաններին շարված բաժակների ունայնության մեջ, իսկ

դառնալիս գինին կատաղի ցուլի պես շնչում -արտաշնչում է կիրքն իր ու դեռ զսպված, բայց զսպանակված է հաստակող ու մահառիթ շշերի մեջ:

Չգում եմ, թե ինչպես գողեգող մոտենում է մեկը Նարեկին, գալիս է լուռ ու սողեսող, մտքինը ստոր դավ է ու ծարավ արյան, խնդրում- աղերսում է շողոքորթ, որ նա՝ աստվածաշնորհ պատանին, խոսքն իր լիաբուռ ցանի ակոսներում մտքի, ցրի ու շաղ տա իր ներսի ի վերուստ պարզ-ածը, լցնի պոնկեպոնկ իմաստնությամբ ահռելի անչափելի դատարկը ու տանի աստղաշաղախ բառ ու բանով հոգով աղքատներին, դեպի թագավորությունը հույսի, ուր ապրում - ապրելու են ընդմիջտ մինչ անպարագիծ տիեզերքի - հավերժ ժամանակի ավարտը Սերը ,Հավատը - Հույսը:

Ու խոսում, մեկնում է նա ճշմարիտը, որը միակն է, ինչպես մի Նոր Հիսուս, որ կրկին մի անգամ -ս վերադարձել է երկիր, մարդեղացել է Նորից, ու աստվածաշնորհ ասելիքը գերծ է պատրանքից,

Սաշա Հովսեփյան-----

մաքուր , գուլալ է՝ ինչպես մանուկը Նորածին, ու լույս է անադարտ - ճնապարհ է ցանկալի, որով գնալու են խոտորվածներն այս աշխարհի - հոգով կույրերը, մեծամիտներն ամբարիշտ - ընչաքաղցները ամմիշտ, դրամասերները նենգ ու մաքսավորները չարակամ , փառասերները դատարկամիտ - դատողները անարդար, - ինքն է միակն ու ուղղորդողը, որովհետ- ի ծնե էր գորությունը - մենաշնորհը, որ տրվել էր իրեն՝ Աստվածընտիր Հրաշամանուկին:

Իսկ հետո հայտարարվում է մրցույթ ուր ձ-ը բանաստեղծությունն է կատարյալ, եությունը հավերժությունն է անպարագիծ, միտքը թռիչք է, չզսպվող բառը նեկտար է ծաղկեբույր, - բոլորը ի մի՝ կատարելություն է, ինչպես Տաճարն Իմաստնության.

*Ում՝ ինչ փուլթ,
Թե բախտի գիրը, ա՛խ, եղավ անգույթ,
Թե ինչ Վերո հեռու- հեռու՝ տարածքում
Մի աստղ մարեց,
Անշունչ- շնչավոր՝ ոչ ոք չիմացավ,
Սակայն տիեզերքը վշտից կարկամեց,
Ցավից համրացավ...*

Իսկ նա՝ այն մեկը՝ ազահ արծաթասերն ու օձակերպ նենգը, մատռվակում է կեղծաժպիտ, ասես Նոր Նեռ է չարակամ, ու թույլը ժայթքում, ծորում է հպտիտ հայացքից, ծուռ աչքերը խաղում են բներում, վազում են մեկ աչ, մեկ ահյակ, կուտակված մաղձն, ա՛խ ներսում եփվում է որպես հրաման ու կանչն իր նախնու՝ սպանել միտքը հանճարի, թույլ չտալ լույսի առաքում - գինին ծորում է դավադիր թույլի պես բաժակի մեջ ունայն:

Տեսա, ավա՛ղ, հրաշամանուկս վերցնում է բաժակը մահառիթ ու դանդաղ տանում է շուրթերին անապակ, իսկ այն մեկը՝ աչոք շիլն ու մտոք չարասերվածը, անհամբերությունից կրծում է քառակուսի եղունգները - ... *իր հաճույքի համար պատահական գնդակ արձակած տգետը ընդհատում է լույսի արագությունը գերազանցող հանճարեղ միտքը:*

«Իսկ նա՝ Աստվածընտիր պատանին, ըմպում է մի կում - հետո կարմիր գինու ցայտող շիթերից կաթիլներ է ցանում ներկաների շորերին ու ժպտալով շշնջում .« Այս է արյունն իմ» :

Այս խոսքերից հետո նստում է գրում մի բանաստեղծություն.

Անսահմանությունը տիեզերքի անցանքս դաշտն է, ուր աստղերը նրա հուր ծաղիկներն են:

Երազանքի դաշտը երկնքի սահմանն է, ուր թռչունները նրա թ- ծաղիկներն են:


Ծովերի դաշտը ջրերի խաղն է, ուր ձկները նրա լուռ ծաղիկներն են:

Երկիրը դրախտ կորուսյալ պատրանքների դաշտն է, ու մարդիկ նրա զույգ ծաղիկներն են:

Մոռացությունը մահվան լռության դաշտն է, ուր հիշողությունը նրա սուրբ ծաղիկներն են:

Իսկ հետո գլուխը քնքշությամբ դնում է գեղեցկուհու ուսին...

Այդ պահից նա այլ-ս այս աշխարհում չէր» / Ֆ. Դավթյան /



ገብቶ ለሀገሪቱ

.....ԵՎ ՄԵԾԵՐԻ ՀԵՏ
ՆՍԵՑ

ԽՆՁՈՒՅՔԻ....

ԱՍՏՎԱԾԸՆՏԻՐ ՊԱՏԱՆԻՆ

Նարեկ Զովսեփյանի «Առաքելություն իմաստության տաճար» փոքրածավալ գիրքը («Հայաստան» հրատարակչություն, 2005 թ.) կարդալիս ես մի քանի անգամ վերադարձա առաջին էջին՝ ճշտելու, ճշգրտելու այնտեղ հրապարակված կենսագրական տվյալները՝ իսկապե՞ս ծնվել է 1986թ ու մահացել 2004-ին, իսկապե՞ս ապրել է ընդամենը 17 տարի... Ուրեմն բոլոր այս տարիներին, երբ մենք, մեծահասակներս, տարված ենք եղել մեր վեճերով ու պայքարներով, մեր մեծ ու փոքր առօրյա հոգսերով, Իջ-ան փոքրիկ քաղաքում, մտավորականի սովորական մի ընտանիքում ծնվել ու մեծացել է արտակարգ մի երեխա, համարյա հրաշամանուկ:

Դեռ հազիվ պատանի՝ հրապարակ է հանել գիտական աշխատություններ՝ մետաղի կարծրությունը մեծացնելու, ներքին այրման շարժիչների օգտակար գործողության գործակիցը բարձրացնելու մասին, կազմել է ավտոմեքենաների՝ առաջին սնուլներից մինչ-վերջին սնուլն ընդգրկող ուսումնասիրություն- հավաքածու – միաժամանակ գրել է՝ ոչ պատանեկան ոտանավորներ, առաջին սիրո տվայտանքներով թրթռացող նամակներ ու օրագրեր, այլ սեղմ, կարճառոտ խոհագրություն, փիլիսոփայական մտածումներ, որոնք հիացնում են, ցնցում, ստիպում զարմանալ: Ինչպե՞ս չզարմանաս, երբ կյանք մտած-չմտածը թղթին է հանձնում, օրինակ, այսպիսի գրառումներ՝ »Միայն մի դեպքում գումարելիների տեղերը փոխելիս արդյունքը նույնը չի լինի՝ երբ մարդը հարուստ է կյութապես, բայց աղքատ է հոգով«, »Մի առաջնորդվեք շան – տիրոջ հոգեբանությամբ«, » Ձեզ հաց նետողը կարող է նա- աքացի տալ«, »Մարտահրավերներից պատասխանիր միայն նրանց, որոնք պատիվ կբերեն քեզ՝ թե՛ հաղթանակի – թե՛ պարտության դեպքում«, »Հաց մի՛ տուր այն մուրացիկին, որը տառապում է որկրամոլությամբ«, »Կարգ ու կանոն հաստատելու պատրվակով սեփական ժողովրդի դեմ ձեռք բարձրացնողը ոչ թե օրենքի պահապանն է, այլ օրենքի ստրուկը«:

Կարդում ես գիրքը – չես դադարում ինքդ քեզ հարց »տալուց«՝ որտեղի՞ց այս հազիվ պատանիացող տղայի մեջ այսքան հասունություն, հոգու փորձ, ընդհանրացման կարողություն, այսպիսի լեզու՝ դիպուկ, լակոնիկ, զգացածը ձ-ի բերելու հմտություն: Իսկ հապա »Նոյյան աղավնու վերադարձը« վերնագիրը կրող յուրատիպ, սրտի մաքուր այրումով գրած կիսաիրական- կիսահեքիաթային հորինվածքը: Ասես Նորօրյա վիպասք է, Նորատիպ էպոս ու հերոսն էլ՝ Նարեկ Առաջին թագավորը, Սասնա ծռերի շառավիղն է, 1000 տարի հետո հայտնված մի Նոր միամիտ ու արդարախոս Սասնա մանուկ, որ անհավասար կռվի է բռնվում ժամանակակից Մսրա -Մելիքների հետ: Ասես մեր հեքիաթներում գործող երեք եղբայրները կրտսերն է, որ ինքնավստահ ճամփա է ելնում գտնելու Հազարան բլբուլը կամ անմահական ջուրը՝ իր երկրի վերքերը դարմանելու, իր անկյալ ժողովրդին ոտքի կանգնեցնելու համար:

Գրքի նախախոսքում Նարեկի մասին գրվում է՝ »Երբ ծնվեց, տան գլխավեր-ում հայտնվեց երկնային լուսատու մի գունդ, լուսավորելով տունը, բակը, թաղամասը: Հրե գունդը անսպասելի կիսվեց ու հեռացավ«:

Ես, առհասարակ, հակված չեմ հավատալու նման հրաշապատում նախանշանների: Բայց կարդալով գիրքը, չես կարող չհավատալ, որ այս տրտմաշյա պատանու մեջ ինչ-որ վերին ուժ- կոչենք այն բնություն, նախախնամություն, Աստված դրել է մի առաքելական ներշնչանք, շնորհ, տվել է մեր ժողովրդի ձիրքերի դարակուտակ շտեմարանից մի ահագին բաժին:

Իր սեղմագրություններից մեկում Նարեկը ասում է. «Ապավինելով կյանքին, տրամաբանություն փնտրեք նա- մահվան մեջ»: Դժվար է տրամաբանություն փնտրել անչափ շատ ասելիքի ու անելիքի կոչված տասնյոթամյա պատանու ցավագնորեն վաղաժամ մահվան մեջ, որ վրա է հասել անսպասելի, սրտի հանկարծական մարումով: Թեր-ս այն, որ աշխարհ է եկել, որպեսզի գիսաստղի պես մի պահ եր-ա երկնքում, իր բյուրեղյա լույսով լուսավորի մեր մթազնած հոգիները, մղի մեզ ինքնամաքման, ինքնահսկումի - իր ահազանգող վախճանով օգնի մեզ բացելու արդարության արգելափակված ճանապարհները...

20.02.06թ, Եր-ան

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
Ամենայն Հայոց բանաստեղծուհի

»Հայաստան օրաթերթ«, 3 մարտի, 2006թ

ՀԵՌԱՎՈՐ ԱՍՏԴԻ ԼՈՒՅՍԸ

Ժամանակը Տերն է սահմանում: Մեր կյանքի□ ժամանակը, մեր ներքի□ կյանքի ժամանակն՝ առավել: Եվ հաճախ այդ ժամանակային հոսքերը չեն համընկնում ո□չ ծավալներով, ո□չ տ-ողությամբ, ո□չ էլ խորությամբ, բայց երբե□ք՝ ուղղությամբ: Շարժման սլաքը միշտ նույն ուղղությամբ է՝ դեպի այն աստվածային ծրագրի իրականացումը, որն արդեն իսկ մեր մեջ՝ աշխարհ ենք գալիս: Ծրագրի իրականացման ժամանակն էլ Տերն է սահմանում...

Նարեկի համար սահմանվածը տասնյոթ տարի էր. մարմնավորի□նը, արտաքի□ն կյանքինը, իսկ ներքին կյանքինը՝ բազմապատիկ ավելի, որովհետ- խորությունը ոչ թե ապահով թ-ալողով, այլ վտանգավոր սուզումով է չափվում, եսաճանաչման ու կենսագնահատման խորությունը՝ հաճախ կյանքի գնով:

Նարեկինը այդպե□ս եղավ: Ներքին կյանքը, սակայն, միշտ ավելին է, քան կյանքը, - կանխորոշված էր գուցե, որ հենց նա պիտի վտանգավոր սուզումով իրագործեր իր ծրագիրը:

Այս գրքի նախախոսքում մի ուշագրավ վկայություն կա Նարեկի մասին. »....Երբ ծնվեց, տան գլխավեր-ում հայտնվեց լուսատու մի գունդ՝ լուսավորելով տունը, բակը, թաղամասը... Հրե գունդը անսպասելի կիսվեց ու հեռացավ« - ` »Մանկությունը- երեք »խաղալիք« էր սիրում՝ ժամացույց, խաչքար, գիրք«: Աշխարհում պատահականություններ չեն լինում, -, ուրեմն, պատահականություններ չեն Բեթղեհեմի աստղը - Նարեկի լուսե գնդի զուգադրումը, ոչ էլ »խաղալիքների հայտնությունը նրա մանկության մեջ՝ որպես ժամանակատարածություն, մահվան-հարության - իմացության ու հավերժի խորհրդանշեր...

Շատերս տարիք առնելով էլ՝ միամտաբար կարծում ենք, թե կյանքում մենք ենք ընտրում, իրականում մեզ են ընտրում. ահա այսպես՝ Ծննդյան աստղի նշանակետով, ուղենշող »խաղալիք« խորհրդանշերով, մինչ-իսկ անվանակոչության անվրեպ ճշգրտությամբ, որով հաճախ կանխորոշվում է մարդու ողջ երկրային ընթացքը:

Նարեկը գիտեր այս իրողությունները: Գիտեր ի սկզբանե, որովհետ- Ընտրվածի վստահ խոնարհությունը միայն կարող էր է իր միջով անարատ անցկացնել Ընտրողի ճշմարիտ խոսքը - անխաթար ու անկորուստ հասցնել մահկանացուներին: Առանց երկմտելու եմ ասում, քանզի Նարեկի՝ մեր դասագրքային իմացությունների չափուձ-ման մեջ չտեղավորող գիրքը հուշում է Աստծու քարտուղարության առկայություն - ճշմարիտ խոսքով ապաքինելու ձիրք:

*Մի-նույն Աստծո գավակներն ենք մենք.
Մի-նույն Բնության բառերը.*

***Թարգման լինենք Աստծո – բնության միջ–
Հավատանք մեր բաժին բանականին...***

Չփորձենք սահմանել՝ բանաստեղծություն՞ն է, թե՞ արձակ, խո՞հ պարզապես կամ թե՛
ասույթ, քանզի –□ այն է, –□ այն, –□ մյուսը՝ անձ–, ինչպես կրակը, – ահռելի, ինչպես շշուկի
արձագանքը լեռներում: Պարզապես արարչական հորդոր անվանենք, որ մեզ է հասցրել
Աստծու քարտուղարը: Եվ որպես հորդոր ընկալենք նա– մյուս »մաքսիմները«, որ քնքշության
ու առնական խոհի մի զարմանալի համակցություն են.

***Թիթեռի մեկ օրվա կյանքի մասին
բնախույզի գիտական վարկածին
հավատացինք բոլորս...
Այդ հեքիաթին չհավատաց
միայն թիթեռը....***

Այսպիսի՝ ողբերգական քնքշություն – նույնքան՝ անխնա ճշմարտախոսություն: Այսպիսի՝
–... բնականաբա□ր, որովհետ– Աստծու խոսքն էլ իր նման հավասարատես է ու
անկողմնակալ, ինչպես որ ցավոտ, բայց ապաքինող է ճշմարտությունը: Ի վերջո, կյանքն
ապրվում է առանց նախնական խաղափորձերի կրկնախաղարկման իրավունքի, մե՞կ
անգամ, – ընդմի՛ջտ, ահա թե ինչու, Նարեկի դիտարկմամբ՝ **»Դեկորատիվ զգացմունքները
դատապարտված են դեկորատիվ մահվան«:** Վե՛րջ: Անդին՝ ընտրության քո՛Բ իրավունքն է,
»Դու ասացիր«-ի անխուսափելիությունը, – կտրվի քեզ ըստ քո պատկերի ու նմանության:

Նարեկի գիրքը նման է իրեն՝ խաղի ու վախի լիակատար բացակայությամբ, ցանկացած
կեցվածքի (նույնն է՝ դեկորատիվության) կատարյալ մերժումով, ազատությամբ՝ ձ–ի
ինքնասպան փնտրտուքից: Միայն շարունակվող սուզու՛մը՝ Մարդու Ժամանակի –
Տարածության մեջ, միայն շարունակվող ճանաչման հրճվա՛Բքը, որ լիաբուռ շնորհում է
մեզ.

***Գաղտնագերծված բոլոր պատերազմների
պատճառը, ի սկզբանե, հացն է...
Այդ առիթով տեղի ունեցած
բոլոր մեծ ու փոքր ճակատամարտերի
վերջնական հաղթանակը հացինն է...***

Մարդու Ժամանակի –ս մի նիստի՝ պատմության հետազոտությունը շարունակվում է
Նարեկի »Նոյյան աղավնու վերադարձը« ծրագրային պատումում(այն նույնպես կարելի է
հորդոր անվանել), որտեղ պատմական, հոգեբանական, մարդաբանական խտացումներին
զուգադրվում են նա– հասարակական-քաղաքական անցյալ-ներկա-ապառնի անցքերի
վերլուծում-գնահատումները՝ նույնքան դիպուկ, անաչառ – անխնա, ինչպես
»մաքսիմներում«:

Նարեկ-վերլուծաբանի ուշադրության կենտրոնում այստեղ Երկիրն է, Պետությունը,
հայրենիքը, Ժողովուրդը, սակայն Նարեկ- Աստծու քարտուղարը դարձյալ ու կրկին ս–եռված
է Մարդուն, նրա կեցությանն ու առաքելությանը, լույսին ու ստվերին, ծննդին ու վախճանին:
Եվ ընթացքը վերստին Գյուտի միջով է՝ հանրահայտը մի նոր, անսովոր անկյունից դիտել
տալու շնորհով.

***Ի՛նչ զարմանալի զուգադիպություն.
Մարդը – անասունը
նույն արարչագործության
արդյունքն են...***

Եվ այնուամենայնիվ, չնայած այս տխուր գյուտին, Նարեկի աշխարհը մարդակենտրոն է
ու հայացքը՝ հավատավոր.

***Մաթեմատիկա չեն սիրում շատերը:
Իզուր:
Տիեզերքն ամբողջովին
գաղտնագրված է թվերի մեջ.
Երանի գաղտնագերծողին...
Որովհետ– ճակատագրի ընտրյալը***

հենց նա է՝ գաղտնագերծողը...

Այս »Երանի«-ն արդեն ինքնաճանաչման ուղենշում է, ճանապարհ, որին ոտք դնողին տրվում է ներքին կյանքը ցմրուր ապրելու, աստվածային ծրագիրը լիովին իրագործելու շնորհը՝ արտաքին կյանքը, երկրային ընթացքը կարճելու, հաճախ ուղղակի հատելու դիմաց: Ծագրենի կաշվի երկընտրանքն է, որ ընտրյալներին է միայն՝ առանց սխալվելու իրավունքի:

*Կյանք, թե մահ.
Իհարկե՞՞ կյանք:
Սակայն չմոռանանք,
որ վերջին խոսքի իրավունքից
օգտվողը միայն մահն է...*

Ընտրյալները գիտեն ամեն ինչ. գիտեն սկիզբը – վերջը, գիտեն եղածը, առկան – լինելին, գիտեն, որ կյանք կա կյանքից հետո, որ շարունակվում, հույս, հավատ – սեր է պարզ–ում պարզապես մահկանացուներիս, ինչպես այն հեռավոր աստղերի լույսը, որ մեզ է հասնում իրենցից բազում աստղատարիներ հետո՝ արարելու – ապրեցնելու, ինչպես հետո էլ, բազում երկրատարիներ անց մեզ ապրեցնելու է Նարեկ Զովսեփյան պատանու արարչաձայն խոսքը:

*ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու*

ԵՐԱՉԱՆՔԸ ԹՈՂՆԵԼՈՎ ԵՐԿՐԱՅԻՆՆԵՐԻՍ

Ճակատագիրը Նարեկի համար սահմանել էր այլ ճանապարհ...
Մինչդեռ նա՝ բնատուր ծիրքով այդ պատանին, կարողացավ շփոթի մատնել ժամանակը, չհաշտվել նրա անտարբեր ընթացքին՝ իր խոհը, իր մեծ երազանքը թողնելով կյանքին ու երկրայիններին:
Նա ար– էր երազում ու գարուն – փորձում էր գտնել վատը լավով փոխարինելու հնարքը:
Իր գրավոր խոսքում ջանաց կյանքի առեղծվածները որպես խորին խորհուրդ մատուցել – կանաչ ու ծաղկած տեսավ դեպի Տաճար տանող այդ ճանապարհը...

*ՎԱՀԱԳՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
»Չայաստան« հրատարակչության տնօրեն*

ԱՌԱՔՎԱԾԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

....Թերթեցի Նարեկի »Առաքելություն իմաստության տաճար« գիրքը: Պատանու ձեռագրերը հրատարակության էին պատրաստել գրական աշխարհում հայտնի Ներսես Աթաբեկյանը – Վահագն Սարգսյանը: Սա, ինքնին, խոսուն փաստ է, որ գրքին պետք է ուշադրություն դարձնել:
Այն տպավորությունը, որ ստացա գրքի ընթերցումից հետո՝ զարմանք էր ու խորհրդավորություն:
Բնության – հասարակության եր–ույթներն է փորձում քննարկել Նարեկը – իր դիտողականությամբ կարողանում է համոզել դիմացինին, որ այն ինչ ինքն է ասում՝ այդպես է, որ կա: Եվ եթե չիմանաս, որ նա կյանքից հեռացել է 18-ը չբոլորած, կարող ես կարծել, թե այդ խորունկ մտքերն արտահայտողը կյանքի չարն ու բարին տեսած, զգացած անհատականություն է, որ իր կյանքի տասնամյակների բարձունքից մեզ է փոխանցում իր ապրածն ու փորձը: Նարեկը առեղծվածային անհատականություն է: Նրա նմանները ծնվում – Աստծո կամոք էլ հեռանում են՝ նորոգելով հնուց ի վեր գոյություն ունեցող ճշմարտությունները՝ միմյանց կապելով տարբեր դարերն ու ժամանակակները:

Նարեկը եկավ ու գնաց, – կարծես ոչ ոք չիմացավ: Նոր պիտի իմանան: Մեզ բաժին հասած թոհուրոհի մեջ թվում էր, թե ամեն ինչ կործանվում է, ոգու սով է եկել: Եվ կարծես գալիս է ժամանակը, որ պետք է ետ նայենք: Եվ պիտի նկատենք Նարեկ անունով մի պատանու մեծությունը, որը գուցե մեզ նա– հեքիաթ թվա:

Մինչդեռ Նարեկը գիտեր, որ »եկող Սասնա ծուռ չէր, ժայռեղեն ու քարեղեն չէր, այլ փոքրամարմին, նիհար, բաց ճակատով, պարզ հայացքով պատանի էր, ու նման չէր, հաստատ նման չէր տիրակալի«:

Տողերը Նարեկին են: Նա գիտեր՝ ինչի համար է եկել: Եվ ժողովրդին հետագայում հասու լինելը նա նկարագրել է. »Ժողովուրդը տեսավ, հասկացավ, ջերմացավ հոգով ներքին մի մղումով հարցրեց ու ընկալեց՝ ճանապարհ բացելով առաքվածին:

Սուտքը տաճար բաց էր«:

Ո՞վ կարող է մեկնել առաքվածի խորհուրդը:

ՌԱՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի Ազգային գրադարանի փոխտնօրեն
»Հոգ–որ հայրենիք« թերթ, 2006թ., մայիս

ՀԱՆՃԱՐԸ ՏԱՐԻՔ ՉՈՒՆԻ

«Բազումք են կոչեալք, սակաւ ընտրեալք»,– ասում է Աստվածաշունչ մատյանը: Մեծերի ծնունդը աստվածընտրյալ, բայց – անկանխատեսելի էր–ույթ է: Նրանք երկնային ասուպի պես շողարձակում են ու անցնում, սակայն նրանց կարճատև– կյանքը (Դուրյան, Մեծարեց... տվյալ դեպքում Նարեկ Հովսեփյան) կայծակի շողարձակման է նման. նրանք իրենց վայրկենական փայլատակումով լուսավորում են ողջ շրջական՝ ինչպես էլ այն կոչվի՝ երկիր թե տիեզերք...

Երիցս ճիշտ է իմ հոգեբարեկամ Պարույր Ս–ակը, ըստ որի »օրենքներ չկան, կա լոկ իրավունք«: Արձագանքելով նրա »Վարք մեծաց« բանաստեղծությանը, տարիներ առաջ ես մեծերի մասին գրել եմ.

Նրանք ապրում են ապագայի մեջ՝

Ներկան ծախսելով որպես ապառիկ...

Իրոք, մեծերի ծնունդն առեղծված է. ու՞մ մտքով կանցներ, որ Նարեկ 1–ին արքան այդ տարիքում (17–18) մեծերի հետ կնստի խնջույքի, թաս կբռնի նրանց հետ... տիեզերքի առեղծված բացահայտելու հավակնությամբ, բայց ոչ հավակնոտությամբ:

Նարեկն այնպիսի խտացումների է հասել, որ միայն ժամանակի ընթացքում ավելի տեսանելի կդառնա, մի պայմանով, որ երկրային մարդիկ իրենց որոնումներում բարձրանան մինչ– Նարեկ 1–ին արքայի նվաճած երազային բարձունքները:

Հոգեբանները վաղուց են նկատել, որ հանճարը տարիք չունի՝ ոչ ֆիզիկապես, ոչ էլ հոգ–որ թռիչքներում, որովհետ– նրանք – աստվածընտրեալք են, – իրենց ներքմբռնողությամբ (ինտուիցիա) հեռուն տեսնող...

Միանանք Նարեկի ուղենշած հեռագնա ճանապարհին, մեր հոգիներում կրենք ու դեպի հավերժը տանենք նրանից ստացած ու ամբարած հեռահար լույսը...

ՌՈՍԱՆՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ

բանաստեղծ, մշակութաբանության պրոֆեսոր
6. 01. 2006թ., ի քաղաքամայր Եր–ան

ՉՕՐԱՎՈՐ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ


Կարելի՞ է հավատալ, որ կենսախիղ, եռանդուն ու կորովի Նարեկն այլ–ս չկայ:

Կարելի՞ է եր–ակայել, որ ժպտուններես ու հաղորդական տղան մեկնած է այս աշխարհէն: Անշուշտ բոլոր զինք ճանաչողները, ո՛չ պիտի հաւատան, ո՛չ ալ պիտի եր–ակայեն նման ակամայ »բացակայութիւն« մը:

Բայց նախախնամութիւնը ունի իր խիստ ու անգիր օրենքները, որոնք սակայն, երբեմն վաղաժամ, երբեմն ալ անողոք կերպով կը հարուստեն սիրելիներու, որոնց շարքին էր Նարեկը:

Գաղափարախօսականի տեր տղայ մըն էր Նարեկը, զօրավոր անհատականութեամբ եւ անշեղ նկարագիրով:

Պեյրուժ



ՄԻ
ԲՈՒՌ

ԽՈՒՆԿ

ՍԱՂՄՈՍՆԵՐ
ՆԱՐԵԿԻ
ՀԱՄԱՐ

ԵՎ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ

Առաջին օրը անձր-ներ չեղան,
այլ եղավ միայն լույսի հիացում
– նրանց խորքում՝ ճաճանչների մեջ հույսի – սիրո,
անշշուկ, անխոս, ինչպես մի ժանյակ,
որ անձեռակերտ էր ու ոսկենկար,
բացվում էր վարդը թերթիկ առ թերթիկ:
Եվ կային հստակ արցունքի նման
երկու կաթիլ ցող անմեղ ու մաքուր թերթերի վրա...

Իսկ հետո, հետո օրեր անց սակայն
մի աստղ պոկվեց երկնականարից,
հրե գունդ շքեղ
խորհուրդ երկնային առաքված դեսպան
– կախված մնաց օրոցքիդ դիմաց երկփեղկված մեկեն,
որպես մեկնություն տիեզերախորհուրդ
– ճակատագիր մեկընդմիջ տրված մի
պահ, մի վայրկյան,
քեզ, հրաշք տղաս,
ընծյուղված ինձնից – իմ միջոցով,
բայց ոչ իմ կամոք, այլ երկնավորի...

Իսկ երկրորդ օրը ար-ը ջերմ էր,
երկինքը՝ լազուր, հավատն անսպառ – հավերժական,
ինչպես աչքի մեջ կարոտն սպասված
– նամակի պես առաքված երկար,
որ պիտի մեկեն խորհուրդը բացեր կյանքի – մահի,
ուր գարունները ծաղկունքի տեղակ
անապատվեին տաք տենդից խաբված,
աղաղակի պես մի աղեկտուր, որ էլ վերջ չունի,
– որպես թռչուն, ա՛խ, նետահարված,
չարականորեն խլված ճախրանքից ծիածանագույն իր երազանքի
– դարձած երազ թափանցիկ ու նուրբ օրերի խորքում...

Իսկ երրորդ օրը
անպտուղ դարձավ ծառն իմաստնության,
մշուշի ծալքը ծածկեց ամեն ինչ,
անձր-ը թափվեց ս– սուգի նման,
իսկ ջութակները
մարդեղեն ձայնով երգեր երգեցին ցավ ու մորմոքի,
ոտնաձայները մելամաղձորեն ծանոթ-անծանոթ
եկան համրացան, ինչպես խաչարձան տրտում ու հոգնած,

անխոս, որպես վիշտ, տանջահար ընդմիշտ,
բայց աղեկտուր երկինքը սգվոր,
ա՛խ կանչեց անվերջ
աստղերի խորքում երազ թռչունին,
բայց կանչերն, ավա՛ղ, հալվեցին ս-սաթ մշուշների մեջ
– օդում մնաց միայն մի փետուր կապույտ ու նրբին...

ԴԵ ԵԿ, ԹՈՉՈՒՆ ԻՄ

Դե եկ, թռչուն իմ, երազ իմ հրաշք,
եկ ու հյուր եղիր իմ աշուն այգում
ու տես առանց քեզ ինչպես են շարվել
ս- ագռավները ս- զարդերի պես ճյուղերիս վրա,
ուր տեր-ները դեղին ու գունատ
խնկամոմի պես մարում են հանդարտ
վերջին օրվա հետ առանց աղաղակ:
Ծարավ կարոտը չմեկնաբանված կույր աչքի նման
մոլոր ու թափառ եղյամ է ցանում անվերջ ու անժամ
` չզգալով սակայն, թե գույներն, ավա՛ղ,
ինչպես են հալվում խամրած այտերիս՝
արցունքի հանգույն լռիկ ու դաժան:
Իսկ հետո, գիտե՞ս, հրաշք իմ թռչուն,
երկնքի փեշից մի աստղ սահեց՝
մեն մի ակնթարթ իր պայծառությամբ
ցույց տալով ճամփան մարդկային հոգու,
որ ունի անցյալ, ներկա, ապագա
– լույսի ծփում պահ մի ավազափ,
սակայն խավարը վրեժխնդրորեն
նրան ստվերեց չարակամորեն՝
փորձելով անվերջ, էլի ու էլի
մութի ծալքերում պահել ամեն ինչ
– չար լռությամբ,
ա՛խ, հետքը ծածկել ավետաբերի...

Դե եկ, թռչուն իմ, սրբասուրբ հրաշք
– մաքրեմաքուր երկնային իմ ցող,
վերստին դարձիր եզերքը հույսի,
ուր որ երկիրը երկնքին անդարձ խնկարկում է միշտ.
դու դարձիր այնտեղ աղբյուր օրհնության,
ուր հոգիները՝ անմեղ ու ներված,
միշտ ծարավ լույսիդ,
մոգերի նման երկրպագելով քեզ այցի կգան:
Դու լինելությամբ լցրու, ա՛խ, այգիս,
ուր որ խոսքերդ մրգեր են հասուն,
ախորժող քիմքին հավերժ ու հավերժ
– պարս են մեղվի, որ ծաղիկներից
զորավոր կամքիդ նեկտար քաղելով՝
թե՛ տաճար, թե՛ խորշ
լցնում են մեղրով քեզնից առաքված – երանելի:
Ու երբ տիեզերքն աստղերի խաղով
խորհրդի նստի չմեկնաբանված շրշյունի խորքում,
իմ շեմի վրա կարոտից փերթված
օրվա գունագեղ իմաստը դարձիր,
թափուր հեքիաթս եկ լցրու քեզնով
– չար հողմերին իմաստուն խոսքիդ զորությամբ սանձիր...

Դե եկ, թռչուն իմ, երազ իմ հրաշք,
եկ հասկանալի դարձրու ամեն ինչ.
իր թե առարկա ամենաունայն
– միտք՝ հափռված դատարկի կողմից եղկելի ու փուչ,
քո ներկայությամբ կստանա իմաստ,

– ով էլ ելնի խոսքիդ գորութեամբ,
 ճարտասան հմուտ, թե մի գորական,
 հաղթանակողը հենց նա կլինի:
 Քո ներկայութեամբ սիրտը ճախրանք է,
 ոգին իմաստուն,
 պահը հավիտյան դյութված ու շքեղ
 ծաղկի մեջ գարնան,
 աշնան գույներում,
 ճերմակում ձմռան,
 ամռան տապի մեջ կարոտն է անցյալ,
 որ լուռ, բայց հանկարծ ճաքում է ներսից՝
 աղաղակի պես տղամարդկային,
 – սիրտն է փլվում իմ այգու խորքում
 – հաշտ – անքեն խոտերի վրա,
 ծաղիկների մեջ,
 երազ ծառի տակ հուշե զգեստով
 տարիներ հետո մոխրացող արդեն...
 Դե եկ, թռչուն իմ, երազ իմ հրաշք...

ՍԱ ՆԱՎՆ Ե ՄԻԱԿ

Սա նավն է միակ,
 որ հեռանում է կյանք կոչված ափից
 խաղաղ ու հանդարտ,
 նավամատուցն իր թողնելով դատարկ,
 ուր որ ամբոխն է հունցվում կավի պես՝
 չարարչագործված,
 դեռ կերպ չստացած – մարդեղություն,
 ու ծովից վեր–, ալիքներից վեր,
 անկանոն, տծ– ու գալար- գալար,
 գույները փետրած, գազազած ամպը, ավա՛ղ, հիրավի
 փորձում է խեղել ընթացքը նավի...

Սա նավն է միակ, որ հպարտորեն,
 ալիքների հետ իմաստուն ծովի հաշտ ու համերաշխ
 ու դաշն կնքած հավերժության հետ՝
 մեկնում է դեպի աշխարհն այն շքեղ,
 ուր ստոր կիրքը անելիք չունի,
 դավաճանությունը մերժված է ընդմիշտ,
 չարը փակված է մոռացման դաշտում,
 ցավը, պատեպատ զարկելով իրեն,
 մարում է տրտում, առաց աղաղակ՝
 ինչպես լքված շուն...

Սա նավն է միակ, ուր կայմի վրա
 թռչունն իջել է որպես ավետիս
 ու լուր է բերել մեր քար սրտերին,
 աչքերին մեր կույր,
 հոգիներին փակ,
 բնագդներին բուր,
 որ ելնենք գնանք փրկության տաճար,
 ուր որ մանուկը աստվածահաճո լույս է բաժանում
 – իմաստնություն կավ կոչված կերպին,
 մարդ կոչված մարդուն...

Սա նավն է միակ, ուր որ նավագը
 անցած օրերի հուշերն է հանում
 մթար անցյալից ուրախ ու տխուր,
 մենակյաց քամուն դարձնում է ընկեր
 ու գիշերների եղյամը համառ կախում է հանդարտ
 իր թարթիչներին աստղի պես սուտակ

ու սիրտը դողդոջ թռչունի նման,
չկամի կողմից բացասված վաղուց՝
պատեպատվում է որերորդ անգամ...

Սա նավն է միակ.
իր առագաստին տանում է ընդմիշտ
հրաշք թռչունին, երազ թռչունին,
ավետաբերին – առաքվածին,
– մոռացումը դառնում է մի բուռ՝
անտեր մնացած զգացմունքի պես
վտարված դռնից,
որի սկիզբը ոչ վերադարձն է նախաստեղծ նյութի,
ոչ էլ օրհնանքը մշտապես ներող,
այլ լույսդ, տղա՛ս, ամենակարող...

Սա նավն է միակ միայն իմ ցավի,
ուր որ ներկա են ծայրեծայր լեցուն
բոլոր օրերիս հուշերը՝ քնքուշ ժպիտով ներման,
հրաշմանուկ – լուսապսակ հենց քո պատկերով
– ներկայությամբ միայն քեզ արժան
ճակատագրով՝ անխուսափելի,
ընդմիշտ քեզ տրված,
ուր սրտիս բոցը ակունքված ցավին – ձեռքս երեր,
ա՛խ, քեզ առաքված ծաղկած ծաղիկ է
ճաք տված հոգում,
իմ հրաշք հեքիաթ, իմ երազ թռչուն...

ԵՍ ԳԻՏԵՄ, ՏՂԱՍ

Ես գիտեմ, տղաս
Կյանքը ճեպընթաց
մի կաքավող է անհայտ օրերի՝ առանց զգացմունք,
որ փեղկն է բացում կամ դուռը մեր փակ.
մեն ու միայնակ – վտարանդու խղճուկ դիմակով
ու չամաչելով այցի է գալիս,
հետո խաբկանքով պոկում է մեզնից
ճախրանքը սիրուն ու ոգեհարույց՝
ստվերելով մեր ելումուտն աշխարհի
անբասիր ու նուրբ,
փորձելով խեղել կես ճանապարհին
այն հեքիաթը հին
– երազանքը, որ մենք հրաշքով
մեր մանկությունից քնքուշ կարոտով
ու մտերմաբար բերել ենք մեզ հետ,
որպես ի վերուստ չպղծված նշխար:

Ես գիտեմ, տղաս
Կասկածն անտերունչ
դուռս կբախի համառ ու անգութ՝
գնչուհու նման թշվառ ու լքված,
որ ես արթնանամ ու վերադառնամ
խաղաթղթերի աշխարհն այս անշուք,
ուր ամեն մեկը,
իր գորեղության խաբկանքին տրված,
փորձում է դավել ու էլ առավել...
– կործանումիդ, իմ լուսե հանճար,
լինել անտարբեր, ստոր ու անճար,
մինչդեռ գաղտնիքը համառ գնչուհու
մեկ առ մեկ բացած,
իմ հրաշք ծաղիկ
՝ թեկուզ – անցած,
քո սիրտն է անմեղ,

որ անկեղծ ու նուրբ խավարում անգուլթ
 կանչում էր որպես լուսեղեն կանթեղ՝
 օծելով անվերջ խորաններն այնտեղ
 անշուք ու անտեր
 ու զարդարելով ծաղկունքով գարնան,
 ա՛խ, անմեղ, ինչպես փաթիլն առաջին ու ձյունաման:
 Ես գիտեմ, տղաս
 Մշտաբաց աչք է տիեզերքն այս անվերջ,
 ու լռությունն իր չմեկնաբանված
 խարխափող կանչ է մեկ վար, մեկ էլ վեր՝
 մելամաղձորեն դյութելով հավերժ
 ու պատկերվելով մեզ որպես մի դարձ,
 անվերջ վերադարձ,
 ուր քո մանկության ձիերը շքեղ՝ – անսանձ – բոց,
 ծաղկած դաշտերի հեքիաթն են տանում ասուպ աստղերին,
 իսկ հետո, տղաս,
 կաթիլ առ կաթիլ երկնքի այտից սահում են դանդաղ,
 անխոս ու երեք
 քո զույգ ափերին երկնային ծաղկունք,
 ուր սրտիդ հ–քն է ու մի պտղունց խունկ...
 Ես գիտեմ, տղաս
 Հեռավոր աստղից մեզ լուրեր կգան,
 որ պատմեն անվերջ ու հերթ չտալով,
 բառեր կխլեն իրար շուրթերից,
 որ առասպելը կարճատ– կյանքիդ
 քաղցրաձայն մեկնեն խորհրդի նման
 – քո երկրային ամեն մի օրը մարգարտահատիկ,
 ծիածանների լույսով շաղախված
 գանձարանները բացեն մեր հոգու,
 որպես ապացույց, թե կանք, կլինենք
 ու կգանք դեպի գագաթը լեռան,
 որ քեզ մերձ լինենք...
 Ես գիտեմ, տղաս
 Երկնային անցորդ,
 որ գալու ես դու հավերժ քնքշորեն,
 անվերջ ու անվերջ,
 որ մեր վերքերին ծաղիկներ ցանես
 ու հույսի նեկտար քո զույգ ձեռքերով,
 սուրբսուրբ մատներով՝ ամպեղեն, մաքուր,
 մեր ցաված հոգին
 անելանելի սահմանից հանես,
 զարդարես լույսով ու մեր կարոտը՝
 պատեպատ զարկվող
 – հունցվող անվերջ ցավ-խմորիչով,
 ձ– տաս ու ոգի, իմ ար–աշող:
 Ես քո շշուկն եմ լսում ամենուր
 – ամեն պահի,
 ցողունների մեջ կանաչ խոտերի,
 ար–ի շողի ամեն ճաճանչում,
 որոտում ամպի
 – թռչունների ձայն երգեցիկում,
 բարձրիկ լեռներում,
 գույներում աշնան,
 առվի կարկաչում,
 ծովի շառաչում,
 կաճանի վրա,
 ճամփեքին անհույս,
 ար–ամուտից մինչ– արշալույս:
 Ես գիտեմ, տղաս

Այս օրն էլ կանցնի, ինչպես որ երեկ,
 ոտնաձայնի պես հեռացող, մարող,
 հայացքը խոնարհ,
 նորահարս որպես ու քայլքը մոլոր,
 մեղավոր, փախչող,
 ինչպես գալիքիս օրերը անշուք,
 ծվատումների որոգայթներում
 պատեպատ զարկվող,
 դուռ ու ելք փնտրող,
 քանզի առանց քեզ
 թռիչքս ճաքած բյուրեղ է արդեն,
 ապրել-չապրելս՝ խաբված լռություն
 – ճամփորդություն պարփակված իր մեջ,
 ուր որ ծարավը
 հավերժ է ընդմիշտ ճաքճված շուրթիս
 ու պահ մահառիթ,
 ցավս ալիք է՝ անսկիզբ, անվերջ,
 անեզր ու անվարք, եթե ուշանաս:
 Արի, դո՛ւ բացիր դուռս զմռսված,
 – ոչ թե քամին կրքերից անսանձ,
 հպտիտ ու նախանձ,
 արի՛, երբ կուգես,
 երբ կարողանաս,
 սանձիր խավարը չարագույժ ու մութ.
 տուն արի, տղա՛ս...

ԵՐԲ ԱՄԵՆ ԱՆԳԱՄ

Երբ ամեն անգամ մթնշաղը նուրբ
 իջնում է լեռան կատարից սուրբսուրբ,
 կրկին ու կրկին
 անտես շարժվելով քամուն դեմընդդեմ,
 անոխ ու անքեն
 – պուրակներում մշուշված աշնան
 սահուն, աննշան
 գույների գունատ փնջեր է բաշխում,
 սիրտս ճշում է հավքի պես անտուն,
 մոլոր ու անքուն՝ բախվելով անվերջ
 կյանք կոչվող ցավի կրծքին քարեղեն,
 ուժահատ արդեն,
 իսկ հետո ցուրը անվախճան դավի
 իջնում ծածկում է՝ թարթիչների պես
 վարագուրելով իր սոսկումներով խռովյալ հոգիս,
 – հենց այդ պահին
 անվերջ կողոպտված զգացմունքներս,
 ա՛խ, հողմահալած,
 անցած գնացած օրերի նման,
 փետուրների պես ճախրում են օդում,
 ու թվում է ինձ, թե այս ամենը
 պիտի մոռանամ ես գինարբություն:
 Երբ ամեն անգամ հողի ծնոտը
 սովոր շան նման քսվում է ձեռքիս,
 հույսի արմատը հոգուս խռովյալ
 շերտերի խորքում իր ցավն է լալիս,
 հերարձակ ու մեղկ,
 ինչպես մի եղեգ,
 որ հասնի լույսին, հավի քնքշորեն,
 ապրեմ-չապրեմի թերթերի նման,
 որպես խեղճ նշան,

Լանջն ի վեր սրտիս անվերջ ելանի
 ու իր հետ տանի՝
 իմ ցավ օրերի ոլորաններին
 ներդաշնակելով ոգեկոչումը անմեռ գոյության,
 որ սահմանվել է աղոթքի հանգույն – խաչելության:
 Գուցե ի վերուստ ճակատագիրը,
 ինչպես կանչ ու ճիչ ու եղծված մի քիչ,
 ամուր գիշերվա խեցե պատյանի,
 որ էլ կորցնելու, չէ, ոչինչ չունի,
 ծալքը բացելով,
 համր անցնելով՝
 դուրս կորգի խաբկանք բյուրեղը ցողի,
 ա՛խ, դառն ու լեղի,
 անտես, անքնին,
 կաթիլ առ կաթիլ
 ու հետո լքված պատմության պես հին
 զգեստն իր կարի,
 որպես մի այրի մոռացման գրկում,
 որ ինձ ստիպի պատեպատ զարկվել
 ցավ ու վշտերի այս գինարբուքում:
 Երբ ամեն անգամ
 սիրտն է ճաք տալիս հասած նռան պես
 հանկարծ ու անտես,
 կեղ–ն իր անշուք ու սերմը հատիկ՝
 մերկ ու անտերունչ, նենգվում է ինքնին
 անզոր ու տրտում,
 անմեղ ու անմեղ,
 ցավից անտեղյակ,
 լքված, միայնակ,
 կորստյան կանչի սահմաններն հատած
 ու մեկեն հանկարծ
 ասուպի նման տարհանված, ծվատ
 ու վտառ-վտառ,
 անհունից խռով,
 մշտապես խաբված,
 առկայծում է – մարում է հատ-հատ,
 ծորուն ու վիատ՝
 դաշնված ցավին անհրաժեշտաբար,
 հար ու հավիտյան,
 մինչդեռ գիշերը դեմքը քողածածկ
 ու բանակ-բանակ,
 ինչպես ավազակ,
 անձանձիր անվերջ
 առասպելներ է անջրդի ցանում
 ու դավ է մանում հույս ակունքներում՝
 հրապուրելով,
 նախքան նինջը մեզ հետապնդելով
 կառնի կտանի՝
 մատնելով անվերջ անդարձ կորստի,
 որ արշալույսը մեր անկման պահին
 նենգվի ամեն ժամ,
 երագում տեսած պատմության նման
 արժեք չունենա,
 ոչ էլ փրկություն՝
 կարծելով, թե ես
 մուրացիկի պես այսքանից հետո
 դեռ պիտի պարեմ այս գինարբուքում:
 Երբ ամեն անգամ իմ գիշերները
 անբաժանելի հերկերից հառնում
 ու լռության մեջ ցավ-տառապանքս

իրար են խառնում՝
 հիշողությունս դարձնելով պատանդ,
 իմ ժառանգության մի խեղճ անկյունում,
 անբառ ու անխոս ու հենց այդ պահին,
 ի՞նչ երջանկություն,
 հունցվում եմ անվերջ ես ինքս իմ մեջ,
 սիրտս բորբոքում կրակով այն հին,
 թե տեսնելու եմ երկնքի կրծքին
 երազ թռչունի ճախրանքն աննվաճ,
 սաղմոսն իր գինի ու մարմինը հաց,
 իսկ ցայգալույսին, երբ ջուրը ծփա,
 երբ քամին փախչող առնի ու տանի
 ծանրությունն իմ դաժան գիշերվա,
 էլ չեմ սպասի, չեմ հարցնի երբեք,
 մեղավորներին թե ով է դատում,
 երբ որ ճամփորդ եմ – հյուր եմ մի պահ
 մեն ու միայնակ
 այս կյանք կոչվածի խաղ-գինարբություն:

ՍԱՀԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ո՞Վ ԵՍ, ՊԱՏԱՆԻ՝

Նարեկի «Առաքելություն իմաստության տաճար»
գիրքը ընթերցելուց հետո

Ձեռքս դողում է, ա՛խ, հավքի նման,
 Ու ծեր չեմ թե–, ապրելու եմ դեռ,
 Տողերն են շաղվում, չվերթ է աշնան
 Իմ աչքերի դեմ հոգնած ու երեր:
 Խորհում եմ անվերջ հանճարիդ մասին,
 Ուզում եմ կարդալ միտքդ իմաստուն.
 Որպես ուխտավոր քո սուրբ խորանի,
 Այցելել է քեզ քո քույրը տրտում,
 Ո՞վ ես, պատանի՛, գուցե մի Արքա՝
 Օծյալ ի վերուստ ամենակարող,
 Իմաստությունդ քեզ նեցուկ մի գահ,
 Խոհուն հայացքդ ամենաներող,
 Դու հավերժի հետ դարձար բարեկամ
 Եվ ժամանակին կանչեցիր դասի,
 Քեզ խոնարհվեցին մտքերը չկամ,
 Ու փակ դռները բացվեցին հույսի:
 Ուրեմն այսօր թույլ տուր լինելու
 Ունկնդիրը քո, արդարից արդար
 Քո խորհուրդներից նեկտար քաղելու
 Ու հաց վերցնելու քեզնից մի պատառ.
 Ասա՛ ինձ, ասա՛, ո՞վ իմաստնախոս,
 Ինչպե՞ս կարող ես չկամին ներել,
 Նրան, ով միտքդ կրծել է անխոս
 Եվ անմեղ կյանքդ փորձել է խեղել.
 Վարժապետ կոչվող մի այլակերպի,
 Վարժապետուհու՝ իր դեմքը կորցրած,
 Մի ոչնչության՝ ամենահետին,
 Եվ մի ոչնչի՝ քեզ պատուհասած,

Նրան, ով կյանքում սողում է անվերջ,
 Սատանայակերպ դավեր է նյութում,
 Իր պիղծ գոյությամբ ապրում է մեր մեջ
 Քո լուսե հետքին հաչում է թաքուն.
 Իմ պա՛րզ միամիտ, չես էլ երկմտում,
 Աստծո ընձեռած բար-ն ես տալիս,
 Որ լույս բորբոքվի նրանց մութ սրտում,
 Եվ սեր պատվաստվի ճամփու դնելիս:
 Իմ բարեհոգի, գթասի՛րտ տղա,
 Բանականությամբ քո աստվածային
 Չենց նրա կողքին բազմած ես հիմա
 Որպես սրբություն առեղծվածային:
 Ո՞վ ես դու, Արքա՛, ասա՛ վերջապես.
 Բանաստե՞ղծ ես, թե՞ մի փիլիսոփա:
 Որպես գիտունի խոնարիվենք մենք քեզ,
 Որպես առաքյալ քեզ կոչենք անմահ,
 Որքա՛ն լույս ունես քո տաճարի մեջ
 Տիեզերախորհուրդ – հավերժական,
 Որին հասնելը թվում է անվերջ,
 Որին ձգտելը հույս է իրական:
 Ժամանակները խառնել եմ մի քիչ.
 Ներկաս՝ շաղախված ցավ ու հոգսերով,
 Ապառնու մասին չգիտեմ ոչինչ
 Եվ օրն եմ թերթում ապրելու հույով,
 Մեկնաբանիր ինձ խոսքով քո ճարտար,
 Իմաստը կյանքի ինձ բացահայտիր,
 Եվ երբ դառնացած ես մտնեմ տաճար,
 Լույսի խորհուրդը ինձ մեկնաբանիր.
 Իրավ է միտքդ – ճշմարտացի.
 Ո՞վ ենք մենք՝ մարդիկ. թիթեռներ անօդ,
 Որ չենք հավատում ոչ մի վարկածի,
 Իրար խառնելով ծիծաղ ու մորմոք
 Եվ մեր շուրթերի աղոթքը խոնարի
 Եվ մեր սրտերի կրակը անշեջ՝
 Քեզ համար ընդմիջտ երկնային նշխար
 Առաքում ենք լուռ, անվերջ ու անվերջ...
 Ուխտավորներին խնդրում եմ ներիր,
 Որ ոչինչ չունենք քեզ տալու, հանճա՛ր,
 Դու՝ հասուն մի այր, թե- պատանի,
 Եվ իմաստնության հավերժող տաճար:

ՍՈՆՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**ԻՄԱՍՏՆԱԽՈՍ ԲԱՐԵԿԱՍԻՍ՝
 ՀԱՆՃԱՐԵՂ ԵՎ ԱՆՉՈՒԳԱԿԱՆ
 ՆԱՐԵԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԱՎԵՐԺ ԽՆԿԵԼԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**

Կյանքի օրենքը ինչու՞ է այսպես,
 Երբ հանճարները ապրում են շատ քիչ,
 Գալիս անաղմուկ, գնում են անտես,
 Որպես մեր հոգին արթնացնող մի ճիչ:

Եվ երազի մեջ հնչյուն առ հնչյուն,
 Ճախրում ես անվերջ աստղերի ներքո,
 Եվ ավետումիդ խոսքերն են իջնում
 Մեր հոգիներում տխուր ու անգո:

Մահն էլ է անմահ՝ ասում են այսպես,
Ու բազմաժ է նա հենց չարի գահին,
Մեր բաց սրտերից նա մտնում է ներս
Ու ցավ է մանում քո թողած ցավին:

Բայց դու ապրում ես, իմ լավ բարեկամ,
Բարի լույսի պես այցելում ես մեզ
Եվ սեր ես , – հույս, – աղոթարան
Եվ գրուցարան բոլորիս ի տես:

Երթ ես ամոքիչ, որ էլ վերջ չունի,
Դեպի մեզ եկող լույս ես անհատնում,
Գրչակից եղբայր, հրա՛ջք պատանի,
Կհանդիպենք մենք դեռ երկնակամարում:

ՆՈՐԱՅՐ
ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ
Ս-քար, 2005թ ապրիլ 7

- 1. ԾՆՈՒՆԴ
Երկնային ավետաբերը
- 2. ԴՊՐՈՑ
Լույսի – խավարի միջ-
- 3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Իմաստնության – առաքելության
Ժամանակը

ՏԻԵՉԵՐԱՍԱՀՄԱՆ

- 4. ՏԵՍԻԼՔՆԵՐ
Քնած – արթմնի
- 5. ՀՐԱԺԵՇՏ
Աստծո Քարտուղարը

